



Բ Ա Գ Ի Ն Թ. ՏԱՐԻ 1970 ՆՈՅ. - ԴԵԿՏ. ԹԻԻ 11-12
digitised by A.R.A.R.@

پاكين
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد ارتين كارنيك قزائجيان

•

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

•

բԱԳԻՆ
 ԱՄՍԱԳԻՐ
 ԴԱՐԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ
 ԵՎ ԱՐԹԻՍՏԻԿ

ՀԱՐԻՁ ԽՄԲԱԳԻՐ
 Կ. ՍԱՍՈՒՆԻ
 ԽՄԲԱԳԻՐ
 Պ. ՄԱՍԳԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ
 ԱՆԴԱՄԱՐԵՐ
 ԅ. ԳԵՂԱՐԴ
 Տ. ՈՄԻՈՒՆԻ
 Բ. ՓԱՓԱՋԵԱՆ
 Ն. ՊԱՐԹԵՆԵԱՆ
 Ժ. ԱԹԹԱՐԵԱՆ

ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆԴԱՄԱՐԵՐԵՆ
 † ԵՎ ՊՅՈՒՅԵԱՆ

համադրութեան հասցէ


G. SASSOUNI
 Rue Sélim Boustani,
 Beyrouth-Liban

Հեռաձայնի քիւ 296898

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

Ն. ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ ,
 Ռ. ԳԱՌՕՆԷ
 Ն. ՊԱՐԹԵՆԵԱՆ
 Թ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
 Ս. ՓԱՆՈՍԵԱՆ
 Պ. ՍԵՒԱԿ
 Ս. ՍԱՆԻՆԵԱՆ
 Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ
 Ռ. ԻՇԽԱՆԵԱՆ
 Մ. ԷՍԼԻ
 Մ. ԹԷՕԼԷՕԼԵԱՆ
 Ժ. ՄԻՐԻՃԵԱՆ
 ՇԱՀԱՆԿՈՒԽՏ
 Ն. ԽՈՇԱՖԵԱՆ
 Վ. ԳԷՈՐԳԵԱՆ
 Ղ. ԺԻՐԱՅՐ
 Ա. ԱՐԾՐՈՒՆԻ
 Գ. ԵՊՍ. ՍԱՐԳԻՍԵԱՆ
 Յ. ԳԵՂԱՐԴ

.....
 համադրական նոյսք



ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

Ք. ՅԱՐԻ, ԹԻԻ 11 — 12

Ն.ՈՅ. — ԳԵԿԵ. 1920

ՊԵՏԼՈՒԹ

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԱՇԼԵԱՆ

ՀՐԱՇՆԱԿՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ

ԱՐԱՍ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ (ՏԵՍԻԼ՝ ԿՈՒՐԻ ՎՐԱՅ)

ՊԵՏԼՈՒԹ

Արաս Բագրատունի 929 թուականին բարձրացաւ զահ, յաջորդելով
անդաւակ մեռած իր եղբոր՝ Աշոտ Երկաթի:

Արաս արդէն գործունէութեան մէջ էր Աշոտ Բ.ի փոթորկոտ շրջա-
նին, եւ անուրանալի արիութեան քայլերու առնթքեր, ունեցած էր արատ-
ներ եղբայրասպանութեան, որոնք սեւած էին դինք:

Իր գործունէութիւնը սկսաւ աւելի կանուխէն, երբ տակաւին ողջ էր
իր թագաւոր հայրը՝ Սմբատ Ա.: Արաս եղաւ միշտ իր երէց եղբոր կողքին,
վանելու համար յարձակումները հազարացիներուն: Երբ տեղեկացաւ իր
թագաւոր հօր նահատակութեան, միշտ Աշոտին հետ, բորբոքած վրէժխնդ-
րութեամբ, յարձակեցաւ հազարացիներուն վրայ: Կոտորեց զանոնք ան-
խնայ, ու հեռացուց հողերէն հայրենի:

Իր եղբոր Աշոտի արքայութեան շրջանին, ապստամբեցան Աշոտ եւ
Վասակ Գնդուկի իշխանները, որոնց վստահուած էր վերատեսչութիւնը
Գուգարը նահանգին եւ սահմանութիւնը տեղւոյն բերդին՝ Շամշուղէի:
Աշոտ ու Արաս քանակը ուղղեցին դէպի Գուգարը: Կարելի չըլլալով ճարել

զօրքին պաշարը իրենց հասած վայրին մէջ, զրկեցին բանակին մեծ մասը մօտակայ գոտիները, ուստիստեղծն ճարելու համար. իրենց քով պահած էին միայն երկու հարիւր յիսուն զինուոր, հանգչելով Սակուրէթ ամրոցին մէջ: Երկու ապստամբ Գնդունիները տեղեկանալով կացութեան, ուզեցին սպառնալ յարմար առիթէն, եւ օժանդակութիւն խնդրելով ու ստանալով հապարացիներէն, պաշարեցին Սակուրէթը, չորս հազար խառն զինուորներով: Աչտա եւ Արաս ծանրակշիռ վտանգի մէջ էին: Երկու ճգնաժամները որոշեցին կատարել զիստազանական թռիչք մը: Գլուխն անցած երկու հարիւր յիսուն զինուորներուն, զործեցին անակնկալ, հրեղէն յարձակում մը, նման դեւերու, թեւածելով թշնամիին վրայ, դառնալով չորս հազար հոգիի մէջ, մահացնող մահազդի մը պէս, եւ անխնայ սրտհարելով՝ վերածեցին պաշարման բոլորակը մարդկային սպանդանոցի: Խնայեցին միայն զերի հայ զինուորներուն, զբաւելով անոնց ինչքը, արձակեցին ազատ:

Արաս ընդունած էր իր եղբոր կողմէ «Իշխանաց Իշխան» տիտղոսը եւ կարգուած էր փոխարքայ, բացակայութեան ժամանակ: Արաս չգոհացաւ այս գերագոյն դնահատութեան պատիւներով: Իր տաղանդը ցանկութիւնը կ'ուզէր զինքը բարձրացնել ասելի: Յորդեցաւ իր մէջ բացարձակ տիրապետութեան կիրքը, ու, ապստամբեցաւ եղբորը դէմ: Ապստամբները բազմաթիւ էին արդէն, սակայն, զմեզակ կացութիւն էր, երբ գլուխ ցցողը եղբորը մըն էր: Արաս իջաւ մինչեւ դաւադրութեան: Միացաւ Վրաց Գուրգէն իշխանին, ուզեց սպաննել Աչտա, Երիտաւրականի մէջ: Աչտա կանգածելով Արասէն, հեռացած էր մայրոստանէն եւ գացած Ուտի: Արաս եւ Գուրգէն անտեղեկ թաղաւորին բացակայութեան, յարձակեցան ժայռաքաղաքին վրայ, գրաւեցին, սակայն, յուսիսը քաղաքան, կողոպուտէ մը ետք:

Աչտա երկաթ զինակցած Վրաց Ատրնէրսեհ արքային հետ, շարժեցաւ Գուրգէնին դէմ, որ նեղուած, խնդրեց օգնութիւն երկու դիւանաւոր ապստամբներէն՝ Արասէն եւ Աչտա Բոնակալէն: Երեք ապստամբները զինակցած՝ փորձեցին դիմագրել երկու թաղաւորական բանակներուն, բայց պարտաւորուեցան խնդրել հաշտութիւն:

* *

Յաճախ դառնուէր զահակալելով՝ դա՛յլ կը գառնայ: Ընդհակառակն, Արաս Բաղրատունի զահակալելով՝ դա՛ւաթացաւ ազնուութեամբ: Բարձրացաւ, բացուեցաւ հոգին, ու ճոխացաւ ծղիներով: Իր մէջ կար ակ մը կամքի եւ կորովի: Խիստ էր ի հարկին, բայց ընդհանրապէս կը յորդէր քաղցրութիւն իր բնաւորութենէն:

Իր եղբոր թաղաւորութեան տասնընորս տարիներուն, իրերայաջորդ զօրաւոր գէպեքու հետեւանքով, երկիրը սասանած ու քանդուած էր. իսկ ժողովուրդը՝ ուժաքամ: Հայրենիքին ու ազգին անհրաժեշտ էր երկարատեւ խաղաղութիւն: Արաս բարեկամացաւ Վոսպուրականի Գազիկ Արծրունի թաղաւորին, Դուլինի ոստիկանին ու զաշնակցեցաւ Արաբներուն հետ, որպէսզի երկիրը վերաշինուի, անդորրութեան շրջանի մը շնորհով:

* *

Արաս զեղեցիկ այր էր, հասակաւոր ու համալսի մարմնով: Տարիներն յառաջացումով ու ներքնարնակ հրեշտակներով՝ հետզհետէ իր

Հոգեկեղծութիւնը կը դառնար առաւել զեղանի: Իր սեւափայլ վարսերը կը ձեւացնէին զանազան գոյնի սաղաւարտ մը իր դմբէթաւոր ճակտին վրայ: Հրաշ-
եայ էր ու արծուեղջիւր:

Քանիցս իրրեւ զիցազեղ պատերազմիկ, հեծած երկվարին վրայ, զը-
յուրը անցած էր այրուածիւն, յարձակած էր ասպատակող յելուզակներուն
դէմ, ու դուրս քշած զանոնք սահմաններէն:

Երբ ռազմի մէջ չէր՝ յափշտակուած էր աւելի հերոսական գործով.—
չինարարութեամբ, որ շարունակուեցաւ իր յաջորդներուն կողմէ:

Արտա սմբողջ քսանեւշորս տարի շէնցուց իր երկիրը, կառուցանելով
սուաններ, աղբիւրներ, ջրանցքներ, ճանապարհներ, սղօթատեղիներ, մե-
նաստաններ, զպրեկանքներ:

Շիրակաւանը թողլով՝ փոխադրուեցաւ Կարս: Այնտեղ ձեռնարկեց
մայր տաճարի մը շինութեան, «Առաքելոց» անունով: Գործը յանձնեց տա-
ճարակերտութեան վարպետ՝ Գրիգորին:

Արաս արքայ եւ Շուշան թագուհի կը վերանային, տեսնելով ծաղ-
կումը նոր Աստուածատան:

Կը բարձրանար շէնքը, նման փարթամ սղջկուն, նման հարուստ
հարսի:

Արմատաշ քարերը նիւթականացած աղօթքներ էին, որմաքանդակնե-
րը՝ բանաստեղծութիւններ, պերճադրուադ լուսամուտները՝ մեղեդիներ, ու
կաթողիկէն խոյրն էր եկեղեցիներու մայր թաղուհիին:

Եւ երջանիկ օր մը, լրացաւ Հոյակերտ տաճարը, իրրեւ պալատ Աս-
տուծոյ:

Ափսազներու եւ վրաց թագաւորը Պէր, մղուած վատուի նախանձէ,
բազմազաղար դորքով անցաւ դուռնէն Ալանաց, եւ բանակելով Կուր գետին
վերին ափին վրայ, համբաւ դրեց Արասին, բսելով:

— Նորաշէն եկեղեցիիդ օծումը չկատարես հայկական ծէսով: Ես Կարս
պիտի գամ մօտերս, եւ պիտի կատարեմ տաճարին օծումը քաղկեդոնական
(մլրացական) ծէսով:

Պէր մտադրած էր արշաւել Հայաստան, քարուքանդ ընելու ամէն
ինչ:

Արաս փութաց Գուգարք իր բանակով, եւ տեղաւորուեցաւ Կուրի հա-
րաւային ափը, սպասելով Ափսազներուն ու վրաց զեռանցնումին:

Քանի մը օրէն, աննկատելի կերպով, անցան դետը՝ Պէրի զինուորները
ու մտան հայկական բանակին մէջ, ստեղծելով ծանրակշիռ շփոթ:

Այդ շփոթի պահուն, կը գտնուէր Արաս, քանի մը նախարարներով,
աջ կողմը դեռին հարաւամասին, ձիու վրայ:

Յանկարծուտ փչել սկսաւ հով մը, որ փոխուեցաւ փոթորիկ ծանու-

ցանոց քամի: Անկարելի էր առաջ խաղալ: Արաս տեսաւ զետին վրայ ոսկեղոյն ամպ մը, որուն մէջէն յայտնուեցաւ տեսիլը:

Պայծառացաւ զէմքը արքային ու յորդեցաւ լոյսով. ոտացաւ երանաւէտ արտայայտութիւն: Իջաւ ձիէն ու եկաւ ծունկի: Նժոյզը բարձրացուց զլուխը եւ ցնցուելով, թրթռուն-թրթռուն վրնջեց:

Նախարարները կարծեցին, թէ թագաւորը կ'աղօթէ: Անսովոր շարժումի մը մէջ անշարժացան:

Արաս տեսաւ Կուր պետին ջուրերուն վրայ, Կարսի նորաւարտ մայր տաճարը, որ կը ծփար իրրեւ պերճանաւ: Կ'երեւէին իր լուսամուտներէն ջահերու, մոմերու եւ կանթեղներու երփներանգ լոյսեր, կաղժած ոտառայններ ծիածանէ: Տաճարին մայրադուռէն դուրս ելաւ հանդիսաւոր թափօր մը. Հայոց հայրապետները, պատարագուորի ծանրագոյն զգեստաւորութեամբ: Անոնք եզերքը նաւուն կատարեցին չօրթ մը, ունենալով իրենց ուսերուն վրայ մէյմէկ սեւ ու խոշոր խաչափայտ: Ծարուեցան նաւաղօթատեղիին եզերքը. իջեցուցին խաչերուն վերնամասերը ջուրին մէջ եւ սկսան թիավարել: Ուսյէ թեւակներով նաւը կը յառաջանար հեշտօրէն: Եկեղեցին կաղժուած էր նրբինի մշուշով, սպիտակ ու վարդագոյն շառայլներով եւ զունազնդ առողահոյլով: Իւրաքանչիւր հպիսկապոսպետ կանգնած էր արծուեզորդի վրայ, զլխագրած զոհարակուս խոյրեր: Նախորտներուն վերայէն առած էին իրենց զօտիներէն կոնքեռներ: Հայրապետներէն ոմանք ունէին վակաս եւ արտախուրակներ: Ուրմը մը քերովիէնէր բարձրացուցած էին խաչմուտները, զուարթունքը կը շարժէին քոյրները կամ կը հնչեցնէին ծնծղանքը, հեշտաւոր ներդաշնակութեամբ: Տաճարին մէջէն կը լսուէր հոգեշնորհ երգեցողութիւնը Հայաստանեայց Եկեղեցւոյ, որուն լեզուն, հղանակները ու բանահիւսութիւնները հասնաբար միակ բարբառական միջոցներն են հաղորդուելու համար Արարչութեան հետ:

Յառաջացող լայնանիստ տաճարին վրայէն, իրրեւ երամ արծուներուն, կը թեւածէին հրեշտակներ, անշարժօրէն թեւաբաց: Հոմերգը կը բանար ծղիները, տարածուելով հայ թագաւորին հոգւոյն գոգը: Կը ցլլար մայր Եկեղեցին պերճաւոյս շքեղութիւնը ջուրին մէջ:

Լուսամուտներէն կը թռչէին աղաւնիներ, ունենալով իրենց կտուցներուն դափնետերեւներ: Թռչունները խմբուեցան Արասին գլխուն վերեւ, կազմելով շարժական պսակ, եւ թողուցին դափնետերեւները: Արաս, նախարարներուն հետ, մնաց տերեւներու բոլորակի մը մէջ:

Կը լսուէին երգին բառերը, իրրեւ հոգեշնչաւոր, իրրեւ լուսահաց.

— Թագաւոր Երկնաւոր, զեկեղեցիս քո անշարժ պահեա՛ւ...:

Նաւուն ցոռկին վրայ կանգնած էր մեծապայծառ ծերունի մը, որուն սպիտակավարս խոպոպները կ'իջնէին ուսերուն վրայ, իսկ մօրուքը կը հասնէր մինչեւ մէջքը: Ան կու գար դարերու մէջէն, կնճիռներու լարերիւն-թոս զէմքին վրայ, ու աչերը նման խորունկ կանթեղներու: Անշարժ կանգնած էր, նայուածքին նետերը՝ Արասին:

Հայոց արքային լսողութիւնը կը լեցուէր երգերով պատարագի.

— Մարմին տէրսնակամ եւ արիւմ փրկչակամ կայ առաջի, երկնային զօրութիւնք յամերիւնոյքս երգեմ եւ ասեմ անհանգիստ բարբառով՝ Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Տէ՛ր զօրութեանց:

Նախարարները ցոյց կու տային անհամբերութեան նշաններ, սակայն, ո՛չ ոք կը համարձակէր խանգարել յափշտակութիւնը արքային:

Արաս կ'ունկնդրէր.

— Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Տէր գորութեանց, լի են երկինք եւ երկիր փառօք քո: Օրհնութիւն ի քարձունս, օրհնեալ որ եկիր եւ գալոցդ ես անուամբ Տեառն: Ո՛վսաննա ի քարձունս:

Ու խօսեցաւ ծերունին.

— Ուրախ լիւր, սուրբ եկեղեցի, քանզի Քրիստոս, արքայն երկնից, այսօր պսակեաց զԲեզ խաչիւն իւրով, զարդարեաց զաւուրս քո՝ սքանչելի փառօք իւրով:

Տիրեց լուսինն:

Երկրորդ անգամ քարառեցաւ ծերունին ու ըսաւ.

— Հուսով աստուածութեամբ քով, Քրիստոս, լուսաւորեցե՛ր Սուրբ գեկեղեցիս. պահեա՛ր զսա անշա՛րժ յաւիտեան:

Տեսիլը չքացաւ:

Եւ երբ չքացաւ տեսիլը, Արաս ցատկեց ձիուն վրայ, քաշեց երկաշըժ սուրբը, երկու ոտքով խթանելով կենդանիին կողերը, նշան ըրաւ նախարարին հետեւ, որ հետեւին իրեն: Հրեշտակագետի մը պէս խոյացաւ խօլարչաւ ու խանգաժաւ, սուրաց դէպի գուպար, աղաղակելով.

— Ե՛հէ՛, հօ՛, հօ՛, հօ՛... Խմբուեցէ՛ք, Վաչէ, Մուշեղ, Սմբատ, Վահրամ, Շահէն, Պարէտ, Վրոյր, Բազրամ, Վահան, Տիրան... Ե՛հէ՛, հօ՛, հօ՛, հօ՛...

Լեցուած էր գերբնական զօրութիւնով ու այդ ուժէն կը բաշխէր բոլորին, լուկ անուններ արտասանելով: Արաս, անլուր յափշտակութեամբ նետուած էր խաղմին խառնուրդին մէջ, երկարատեւ ժպիտ մը գէժքին վրայ:

Գուպարը փոխեց իր պատկերը անմիջապէս: Հայերը անցան յարձակողականի:

Ափխազներն ու Վրացիները շկրցան ըմբռնել յանկարծական յեղաշրջման մէջ: Շուարեցան, շփոթեցան, շրջուեցան իրենց ինքնավստահութեան մէջ, եւ գինաթափուելու աստիճան քարոյսեցուած՝ անցան պաշտպանողականի: Գաշտը կ'իփէր, կը փրփրէր: Ափխազները կը խաչուէին կոտորուելով, իսկ Վրացիները կը կոտորուէին խաչուելով: Սուրերու, նիզակներու այդ խառնարտին մէջ, ձիերը կը պատուէին փորեր ու կը կոտորէին կուրծքեր: Կը բարձրանար բարբարոս ժխոր մը, մկունդներու անտատի մը մէջ, որ բռնուած էր երկրաշարժէ:

Կը պարէր երիվարը Արասի: Ձախ ձեռով թեթեւ շարժում մը եւ կենդանին կը դառնար յայսկոյս կամ յայնկոյս, ու Հայոց արքան, որուն աջ թեւը վերածուած էր պրոնզի, կը շարժէր իր մեծ սուրբը, հնձելով թշնամիները: Ժպիտը պահած էր աչիւրուն մէջ:

Հայոց սուրերը կը բանէին իբրեւ մանգաղներ մահու:

Նախարարներն ու սեպուհներ կը գործէին իրենց զինուորներով, գլուխներով թշնամիները լճակներու մէջ արեան:

Մէկը բամբ մայնով գոռաց.

— Ժամ է գործելու, լաւ աշխատեցէ՛ք:

Ափսազներն ու Վրացիները կը ջանային հասնիլ դետափ եւ ջուրը նետուիլ: Հայ զօրքէն մաս մը իսկոյն գետեզերքին վրայ պատնիշուեցաւ. քիչեր կըցան մտնել գիրկը Կուրին:

Բարձրացաւ ցնծածայն աղաղակ մը:

— Մեծ որսը բռնուած է:

Ափսազները զինաթափուեցան հետզհետէ:

Ձիաւոր մը հասաւ Արասին առջեւ, ու աւետեց.

— Տէր արքայ, գերուած է Ափսազներու թաղաւորը:

Այդ պահուն, Արասին դէմքը Կուրին կողմն էր: Հայոց արքան երանութեան մեծ ժպիտով բացազանչեց.

— Փա՛ռք Քեզ, Տէր...

Ու դարձեալ տեսիլը պարզուեցաւ. գետին վրայ, Կանգնած էր նման պերճանաւու, Կարսի Առաքելոց տաճարը, ու կը շողշողար նոր փայլերով: Յանկարծ, բարձրացաւ եկեղեցին օդին մէջ: Նստուն յատակը կային հրեշտակներ, իրենց գլուխներուն վրայ կրելով աղօթատեղին: Կը լսուէր հոգեւորդ երգեցողութիւնը, որ կը լայնար, կը վերանար, խորածայն բխումներով:

Արասի ձին ալ բարձրացաւ ու իջաւ փափկօրէն: Մայր եկեղեցին աւերակութեամբ: Արաս տեսնողորեց ու մրմնջեց.

— Փա՛ռք Քեզ, Տէր, յազազ տանայնի փա՛ռք Քեզ...

Անմիջապէս դարձուց երկվարը ու հետեւորդներով փութաց բանրարին եկած կողմը: Հասաւ Ափսազներու եւ Վրաց արքային գտնուած վայրը, ուր կը համաթմբուէին հաղարատոր դերիներ ու վիրաւորներ: Պէր ալլանդակ հոկայ մըն էր, կարճափիլ, չափազանց լայնաթիկունք: Կորսուած էր գէմքը մազ ու մօրուքին մէջ: Քիթը տափակ էր, մէկ աչք՝ շիւ: Գլուիը կախ՝ ակնարկը սեւեւած էր փոսի մը:

Արաս խօսքը ուղղելով անոր, որ յոխորտութեան սանդուխէն թաւաղլոր ինկած էր, ըսաւ.

— Դրկած ցից հրամանդ, այդ կախեալ գլուխէ՞դ էր ելած: Անհող կա՛ց. բանակիդ բեկորներուն հետ քեզ տանելու եմ Կարս, եւ այնտեղ բարձրացնելու եմ գլուխդ, որպէսզի տեսնես մեր մայր տաճարը, որուն օծումը կ'ուզէիր կատարել քաղկեդոնական ծէսով: Ինչպէ՞ս ցարդ, յետ այսորիկ եւս, ո՛վ որ վնասել ուզէ մեր աստուածութեան Հայ Եկեղեցւոյ, կը շանթաւ հարուխ նա, կանուխ կամ ուշ:

Երբ Հայոց բանակը գերիներով, աւարով ու մեծ որսով հասաւ մայրաքաղաք, ժողովրդական խանդավառութիւններու մէջ, Արաս կանգ առաւ մայր տաճարին առջեւ, բերել տուաւ Պէրը, ու ըսաւ.

— Տե՛ս գեղեցկալէն եկեղեցիս: Լա՛ւ տես, զի այլեւս տեսնելու չես: Բաղկեզոնը քո միտքը կուրացուց, որ ժպրհեցար քամահել ծէսն հայկական: Թո՛ղ կատարեալ լինի քո կուրացումը:

Արաս հրամայեց տաղել Պէրի աչերը:

Ձարհուրեցան Ափսազները ու երդուեցան այլեւս զէնք չիբրցնել Հայոց գէմ, այլ մնալ յաւիտեան բարեկամ:

Հայոց թագակիրը, Արաս, համոզուած էր, որ ազգերը, նման շէնքերու, ունին իրենց առանձնայատուկ հիմնաբարերը: Կը անսնէր Հայութեան տունը կառուցուած Ս. Լուսաւորչի ու Ս. Մեսրոպի վէմերուն վրայ:— Եկեղեցի եւ Դպրոց: Այդ պատճառով ան շինել տուաւ վանքեր, ուր կը նոյնանային այդ երկու անխորտակելի ապաստանները, իրրեւ վէմերը Հայութեան: Իրմէ ետքը, մեր իմաստուն պապերը, դարերով, խորապէս բմբունցին այդ բարձր ու քաջարձակ ճշմարտութիւնը, եւ կոթողեցին Եկեղեցիին ջրով դպրոցը, ու այդպէս պահեցին դոյութիւնը ազգին:

Ահաւասիկ Արասի կողմէ կոթողուած վանքերը— Հոռոմոսի վանք եւ Դպրեմանք (Շիրակի մէջ), Նարեկայ վանք (Ռշտունեաց մէջ), Ուրմառի վանք (Դերջանի մէջ), Հնձուց վանք, (Բարձր Հայքի մէջ), Յախորճայի վանք (Վայոց Ձորի մէջ, Սիւնիք), Արծուարերդի վանք ու Կամավանք (Մղուկք գաւառի մէջ), Կամրջաձորի վանք (Արշարունիք գաւառի մէջ):

Այս բոլոր վանքերը, թառած սարերու վրայ կամ ժայռերու լարերէն թռոններու մէջ, եղան բերդերը հայ իմացականութեան, ու պատրաստեցին փաղանգ մը դիմուորեալ, լուսաւորեալ եւ բազմիցս օրհնեալ մեր մտաւորականութեան:

Արաս կանգնեց լուսամբոցներ, որոնց մէջ տքնող փանականները բացին Հայոց Պատմութեան հրաշունչ մատեանը, արձանագրելու համար փառաւոր գլուխներ, որոնց մէջ արդար ու աւագ Փառքը Հայոց՝ եղան շինարարութիւնն ու ինքնապաշտպանութիւնը:

Եւ մեր կրօնաւոր, ինչպէս նաեւ աշխարհական փանականներուն արքնութեամբ գրած Հայոց Պատմութիւններուն մէջ, յաճախ նկատելի են արտասովոր երեւոյթներ, որոնք կը յաջորդեն իրարու:

Երեւոյթը իրական ու եղերական է իր առաջին մասով, եւ եղեւնը ահաւոր է յար, վհատեցնող, մահացուցիչ, որուն կը յաջորդէ սակայն վերաճողկոմ մը: Կարծէք առաջինը ծնողն է երկրորդին:

Առաջինը Անբախտութիւնն է, իսկ երկրորդը՝ Հրաշքը: Խորհրդաւոր, խոր խաչ մը կայ միշտ՝ Հայութեան ուսին վրայ, բայց կարծէք անով կը զգանայ յարութեան յոյսը լուսաւարտ: Ճանապարհը Հայութեան՝ համբերութիւնն է, իսկ իր ճակատագիրը դոյամարտ է, երեւելի ու աներեւոյթ գեւերու դէմ:

Հայութիւնը միշտ է մարդկութեան մէջ: Հայը Հայուն հետ միմեկ է, ինչպէս Արարատը Արարատին հետ: Բնական է որ Հայերը ուզեն գտնէ Արարատներուն հետ ըլլալ:

ՆՇԱՆ ՊԵՇԻԿԹԱՆԵԱՆ

Nat - «King» - Cole

... Ու գառնում է ֆոնոն, դառնում է ու սփռում,
Երգը ջինջ ու յստակ քո', Նաթ-Քինգ-Քոլ,
Սե', որ ապրանք էին պապերդ առ ու ծախի,
Քեզնով ցնծում է արդ աշխարհը բոլոր:

Քո պապերն են ծախում էլ մի «լուսամբու» դարում,
Երբ աշխարհն փոքր ի շատ առել էր գոյն,
Երբ «համնարեղ» հերմակն ասկիներ էր դիզում,
Քո քափած քրտինքի տաք շիթերից...

Եւ ծախում է նա մրանք, մտրակում է նա մրանք,
Կռացել, բարձրացել տիրոջ առաջ,
Աշխատել են անդուլ, տֆնել են անդադրում,
Ասկիներում կիտած ցուռ ու հառաչ...

Ի՞նչն էր գատում մրանց համակ մարդկութիւնից,
Նրանց շրթնե՞րը հաստ, մաշկի գո՞յնը,
Բայց ինչ յանցումն ունեն սեւ լինելով մրանք,
Երբ այդ էր ցանկացել բնութիւնը:

Եւ սպիտակ «բարի»ն առել է ու ծախել
Իբրեւ շարժական իր, հարստութիւն,
Անիրաւում ու խեղճ գաւակներ են կորցրել,
Կեանքի ընկեր եւ սուսն ու էութիւն:

Եւ ծախում է նա մրանք, գնում է, մորից ծախում է,
Տէրեր են գտել մոր, չար կամ բարի,
Հեռո՞ւ սուսն ու տեղից, գաւակներից հեռու,
Բռնակն մրանց համար մի ռոգ տարի:

Մերք գոհուն է նա իրենց տֆնութեամբ ու ջանքով,
Մերք մարդ լինելն իրենց տանջել է խիստ,
Սպանել են տիրոջն, քափառել տեղից-տեղ,
Ձէ՞ որ սեւն էլ ունի զգացմունք, սիրտ:

Այո', սեւն էլ ունի թէ՛ զգացմունք, թէ՛ խիղճ,
Բայց աշխարհը շատ ուշ հասկացաւ այդ,
Եւ, Աստուա՞ծ իմ, այդ ի՞նչ զգայնութիւն ու սիրտ,
Թովիչ Կրկերով դու՛ աշխարհին զարդ:

Ու չկաս դու հիմա, ձմեռի ես հողի տակ,
Բայց ելելիցն երգիդ վիշտս է ցրում
Օ՛, չկաս դու թէեւ, սակայն ճայնդ անոնեա
Կայիտ-ճրքութեամբն իր ինձ է գերում:

Ու դառնում է փռնոն, դառնում է ու սփռում,
Երգի ջինջ ու յստակ աշխարհը ողջ,
Սե՛ւ, որ ապրանք էին պապերդ առ ու ծախի,
Քեզնով ցնծում է արդ աշխարհն ամբողջ:

Դա՛ւ մեծ երգիչ դարի, դու լուսեղէն գահար,
Արուեստի պատմութեան լայն էջերում,
Սեւ ու ներմակ հիմի գմայլել եմ քեզնով
Երգի բոլորին է յուզում, գերում:

ՌԻՄԱ ԳԱՌՕՆԷ



ՆՈՐԱՅՐ ՊԱՐԹԵՒԵԱՆ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Նորայր Պարթևեանի ստորագրած հետագայ գրութիւնը մաս կը կազմէ գիրքի մը, որ առօրեայ անցուղարձերուն հետ աւանդեց ընդմէջէն՝ կը օհեռէ մարդկային ուշադրութիւնը երևոյթներ։ Զեմք ուզէր մախապաշարել ընթերցողը, կ'ազգէինք շնչով միայն, որ արուեստական քարդուքիւններէ հեռու այս գրութիւնը բարդ բաները պարզ բառերով ըսելու կ'երկար մը մասին վնայող հետաքրքրական նմոյշ մըն է։



Աշխատանոց — խանութիւն երկրորդ յարկը հանգստարան մը ունիմ, երկաթ մահճակալ մը, սեղան մը, աթոռ մը եւ հեռաձայն — այդքան։ Մենակեաց ճրդանաւորի պարզութիւն, որ տէրութիւնը համար քիչ մը անարականն է։ Շատ սովորական դուռը անկատարէն կը բացուի վերելակը շրջապատող նրբանցքին վրայ, ճիւղ իրեն նմանող ուրիշ դուռներու կարդին։ Հոս է, որ աշխատակիցներու մեկնումէն ետք՝ մէկ-երկու ժամ հառաժանանամ՝ կարդալու, գրելու եւ երբեմն ալ պարզապէս հանգչելու համար։ Որջա, ինչպէս կը սիրեմ կոշիկ, եւ որուն զոյնութեան ոչ աք տեղեակ է բացի ժէրմէնէն եւ բնականաբար տանտէրէն։ Ֆրանսական անդամանելի վիպականութեամբ վարակուած ժէրմէնին համար անիկա զմեր սիրոյ բոյնն է, որ երբեմն կը միանայ ինծի՝ եթէ աղատ ժամանակ դառնէ։ Հոս է նաեւ, որ յղացայ գիրք մը գրելու ծրագրերը։

— Օ՛, սքանչելի՛, սքանչելի՛, վըստան եմ, որ պիտի յաջողիս, ժա՛գ, վըս-

տան եմ, — ըսաւ ժէրմէն, սովորականին պէս խանդավառ իմ որեւէ ծրագրով։

— Իս այնքան վստահ չեմ...

— Բացարկիկ ես, ժա՛գ...

— Քեզի համար։

— Ինծի համար, բոլորին համար։ Քեզ կը սիրեմ, ժա՛գ, ինչո՞ւ այսքան կը սիրեմ... Քիչ մը խենթ եմ, չէ՞։ Ըսէ, ի՞նչ է վէպիդ նիւթը։

— Դուռն, ես, մենք, մեր կեանքը, կեանքը։

— Ե՛ս, բայց դիս լաւ չեմ ճանչնար, ժա՛գ, գիտե՞ս թէ ով եմ, ի՞նչ եմ...

— Քեզ կը վերստեղծեմ, սիրելիս։

— Եւ վերստեղծած ժէրմէնիդ կ'ըլլայ իրա՛ւը, ժա՛գ...

— Գիտեմ, թէ կրնամ գրել։ Բայց շատ պատրանք չունիմ, որովհետեւ դիտեմ նաեւ, որ փոփոխամիտ եմ, ծոյլ, մա՛նաւանդ ծոյլ։ Մտադրութիւնս սովորական վէպ մը գրել չէ, այսինքն պատմութիւն մը, որ հեղինակին կողմէ մեծ խնամքով ընտրուած պահու մը կը սկսի, տրամաբանական զարգացում կ'ունենայ

եւ յարմար տեղ մըն ալ կը վերջանայ: Կանգնելն ընթացքը երբե՛ք տրամաբանական չէ: Աւելի ճիշդը՝ մե՛նք ենք, որ տրամաբանութիւն եւ կանխորոշում կը փնտռենք եւ կը գտնենք անցած դէպքերու դասաւորումին մէջ: Ուրիշ խօսքով, մե՛նք կը ստեղծենք պատմութիւնը: Ամէն պարագայի, այս բոլորը տեսութիւն եւ երազ են, քանի դեռ չեմ սկսած գրել: Ձմռանամ ըսելու նաեւ, որ բացարձակ անկեղծութիւն մը նախապայման է, պէ՛տք է որ ըլլայ: Միակ բանը, որ կ'ուզեմ ես ինծի պարտադրել...

— Գեղեցիկ ես, Ժա՛գ, գեղեցիկ ես Ժա՛գ, երբ այսպէս լուրջ-լուրջ կը խօսիս, կեղեցիկ ես երբ յովազի կանաչ աչքերդ մութին մէջ կը փայլին... Օ, Ժա՛գ, Ժա՛գ...

— Կամայ, խենթ աղջիկ, — պիտի ըսնի քիչ մը սրտնեղած, որ մտածումիս թելը կտրեց, բայց նախընտրեց լռել: Կարելոյը, լուրջը Ժէյմէյին համար սէրն է:

Հրաժեշտ տունելու ատեն հարցուց.

— Ի՞նչ լեզուով պիտի գրես:

— Հայերէն, ընկանաբար:

— Մե՛ղք: Ո՛չ, ոչ, մի՛ նեղուի՛ր, սխալ հասկացար: Ըսել կ'ուզեմ — մե՛ղք որ պիտի չկարենամ դիրքդ կարգաւ: Բայց ինծի կը թարգմանես, այնպէս չէ՞, սիրելիս: Եթէ ուղղակի Ֆրանսերէն գըրէիր եւ վէպդ փարիզ տպուէր, աշխարհահռչակ գրագէտ կ'ըլլայիր, վստահ եմ:

— Եւ Նոպէլեան մրցանակ կը ստանայի...

— Ինչո՞ւ չէ, Ժա՛գ, միւսները քեզմէ լա՞ւ են...

Էլիպն ու Ժէյմէյնը, այնքա՛ն տարբեր՝ միեւնոյն երազը ունին: Երկուքն ալ ջերմօրէն կը փափաքին, որ իրենց սիրտն ալ յայրը նշանաւոր անձնաւորութիւն մը դառնայ: Պրտիկ տարբերութեամբ մը սակայն — էլիպ պիտի նախընտրէր, որ նախ եւ առաջ հարուստ ըլլայի...

Մասամբ հասկնալի ձգտում է, քանի տասնըվեց տարիէ ի վեր ամուսնացած

ենք եւ շատ նեղ օրեր ապրած: Կայ նաեւ մեր աղջկան, Արփիկին պարագան:

Շատ, շատ դանդաղ կը գրեմ: Գրագէտը, ընկանաբար, աւելի արագ է, բայց ես տրհնառով դրագէտ չեմ, եւ արագէն չէի փափաքեր, որ զրականութիւնը պործունէութեանս առանցքը կազմէր:

Անձնական, կամ ոյդպէս կարծուած զգացումներ, պաղափարներ եւ մտածումներ գրական տարազով դրսեւորելու համար պէտք է բառերու եւ նախադասութիւններու ճշգրիտ բնորոշութիւն մը կատարել (Լափալխեան հաստատում): Բայց անոնք ուրիշներու կողմէ յօրինւած խորհրդանշաններ են, եւ միշտ հաւատարմօրէն չեն թարգմանիր ի՛մ աշխարհս: Նիւթը ամիսներէ ի վեր մէջս հասունցած է, եւ օր մը վերջապէ՛ս էջ մը կը գրեմ: Գոհ եմ, պահ մը կը կեանամ, սիկարէթ մը կը ծխեմ, կը կարդամ: Բայց ոչ, այդ չէ, չեղա՛ւ, ես ուրիշ բան կ'ուզէի ըսել: Հոս պէտք է քիչ մը սեղմել, հոն շնչաւ, հոս կընտանել: Եւ քննել սա անխմաստ բառը: Ձեռք, բայց ինչո՞վ փոխարինել: Կը փնտռեմ այն միւս բառը, ճի՛շդ բառը, թերեւս գոյութիւն չունեցող բառը...

Մեքենաբար կը հետեւիմ սիկարէթէն բարձրացող ծուխի գուլաներուն: Պարագ մը եւ արդէն հեռուն եմ... Կը սթափիմ: Պիտի գտնե՛մ, պիտի գտնե՛մ բա՛ռը... Ինչո՞րե՛մ, բառ մը, թաղաւորութեանս կէսը բառի մը համար...

Մինչ այդ, պաղափարներս ծովուն յատակէն ելլող պղպջակներու պէս, գիտակցութեանս մակերեսը հազիւ պատռած՝ կ'անհետան...

Նախընտրելի է ամբողջ նախադասութիւնը փոխել: Այս անգամ ի՛մաստը հիմնովին կը շնչի: Կը վերսկսիմ, եւ այսպէս քանի մը տնդամ, մինչեւ որ անգոր կարողութեամբ թուղթերուն դէզը ճմաթկելով՝ դամբիւղ նետեմ եւ տուն երթամ:

Բայց դանդաղութիւնս ուրիշ եւ հիմնական պատճառ մըն ալ ունի. խաւարող արեւի պէս, առանց յայտարար նշանի, թանձր յուսահատութիւն մը յանկարծ

հունգարացիները ջանքեր անում էին՝ կրկին արտագրել ժխտական շրջան, որուն ընթացքին դեռ կը տանջէ այն միւսը, խորունկիս խորը բանտուած այն միւս ժողովարհաններուն ամէնէն անպատկառը, ամէնէն անգութը։ Կը ծաղրէ, կը հարուածէ, կը ճանկէ, կը ստիպէ, որ մերկանամ, կը ստիպէ, որ պատասխանեմ։

— Ո՞վ ես դուն։

— Ե՞ս, չե՞ս ճանշնար, ժողովարհան եմ, հայ տէքնոքտորը։

— Հա՛յ, այդ ի՞նչ բռնէ՛ք, այդ ի՞նչ յաւակնութիւն, հա՛յ, ոչ բարեկամ, ո՛չ, այս երկրին մէջ դուն օտարական ես, եւ ամբողջ կեանքիդ ընթացքին օտարական պիտի մնաս։

— Բայց զգացումներս, հաւատքս, հայրենիքի սէրը...

— Օտարական։ Ո՛չ անցեալէն վերջնականապէս կտրուած, ո՛չ ալ ապագային ամուր կառչած օտարական մը, հոս եւ ամէն անգ, նոյնիսկ պապերուդ հայրենիքին մէջ։

— Կը բռնէ, կը բռնէ...

— Հապա՞ անկեղծութեան պարտադրանքը, մոռցա՞ր խոստումդ։

— Երբե՞ք, բայց խորքին մէջ...

— Փախչելու փորձ մի ըներ։ Դա՛րձնակե՛մ, կրնա՞ս դիմանալ։

— Խորքին մէջ հարցը այդքան պարզ չէ։

— Մանրամասնութիւն։ Պարոն այդպէս կ'ոչնչեալ հայ, եւրիշներէ առաջ դո՛ւն դիտես, որ դեռ ճնշուած ազգեր, շահագործուած դատակարար կան։ Յանուն ազատութեան, յանուն արդարութեան ամէն օր մարդիկ կը պայքարին եւ կը մեռնին։ Որ Լուսին զացող մարդկութեան կէտը անօթի է։

— Ի՞նչ կապ...

— Վարկեան մը։ Գիտես նաեւ, որ հաւաքական անձնապանութեան կը դիմենք, եթէ յառաջիկայ տարիներուն բռնակցութեան պայթուցիկ աճը չկտրուի։

— Ես միտնի մէկ զաւակ ունիմ...

— Բառքդ մամէն ամբողջ աշխարհը կրնայ հիւսկական խաբուկի վերած-

ւել։ Հարիւր, երկու հարիւր միլիոն մարդ՝ եւ Արփիկը կրնան փոխանալ։

— Ե՞ս եմ կացութեան պատասխանատուն։ Ի՞նչ բնեմ...

— Լո՛ւ, պարզապէս չո՛ւ։

— Բայց ես ալ կը տառապիմ։

— Կեղծիք։ Այո, կը կարգաւ, մշակութային արդի շարժումներուն կը հետեւիս, եւ անկասկած դիտե՛ս այս բուրբ, բայց ինչպէ՞ս, բռնե՛մ...

— Ըսէ՛, լրացուր։

— Ամաքէօր մտաւորականի օտաւած իմացումով։ Դուն մասնակից չես։

— Ուրեմն անդա՞յ մըն եմ։

— Չի՛ղդ, անզգայ հանգիստեալ մը, որ իր խեղճուկ անձին յիշատակներուն, սէրերուն եւ պզտիկ տնհաւատարմութիւններուն հաշուեկշիռը կ'ուզէ հրապարակել։ Որո՞ւն համար, Աստուած իմ, որո՞ւն համար, ո՞վ կը հետաքրքրուի քեզմով։ Այս ողբերգական պայմաններուն տակ, ժողովարհան, դո՛ւն չե՞ս զգար տաժանելի աշխատանքիդ անսահման ունայնութիւնը, իսկապէ՞ս չես ըզգար...

— Ժէրմէնը...

— Ժէրմէնը կոյը է։ Կը կրկնեմ, այս պայմաններուն տակ ի՞նչ իմաստ ունի զրիւր։ Արդեօք թանկագին պատգամ մը պիտի փոխանցես...

— Ո՛չ, ո՛չ...

— Կամ ալ յառաջիկայ սերունդներուն զրական դոհարները պիտի կտակես, արուեստի դըլիւ-դործոցներ։

— Ո՛չ, ո՛չ...

— Ուրեմն ինչո՞ւ կը զրեմ։

Անխուսափելի հարցումը։ Ինչո՞ւ կը զրեմ, ինչո՞ւ կը զրեն։

Բռնատիրական վարչակարգերու տակ պարտադրարար դիմաւորողներու, իսկ ազատ երկիրներու մէջ անհատական խոր համոզումով պայքարող դրաղէտներու յանձնառութիւնը բացայայտ է։ Գաղափարախօսութիւն մը տարածել, ընկերային, քաղաքական կամ փիլիսոփայական պայքար մը հրահրել — իզմ, պարտիս, կեցցէ՛ ազատութիւնը, եւայլն։ Կը զրեն՝ մասնակցելու համար։

աւելի ցանկալարոյց, մէկը միւսէն աւելի կրնա: Եւ ի՞նչ ծրագրեր կը կազմենք — Արփիկին հետ Ամերիկայ ճամբորդել (հայրիկ, որքա՞ն կ'ուզէի որ մը նիւ Եւրոպէ կը թափայ), Էլիզին մուշտակ մը նըսիւրէ, ժէրմէնին հետ երկու շաբաթ միասին Փարիզ անցընել (ամէ՛ն գիշեր թատրոն), նկարչութեան վերադառնալ, գիրք մը գրել... Հազար ու մէկ որամբուրդներ կը հնարէ՝ զիս զուարճացնելու համար: Ահաւասիկ վերջինը (Հոմերոսի եւ Շէքսպիրի նախընթացով, հապաբ՛նչ կը կարծէք...)

...Գրականութեան պահն է: Հայաստանի երկու հազար դասարանների հեռուստատեսիլի պատշաճների վրայ միաժամանակ երևում է գրական ֆինանսատ Բարգէմ Սահակեանը: Ծերունի պրոֆեսորը շույմ է երկար մօրուսը եւ սկսում օրուայ դասաւանդութեանը:

— Տեղեւոր Մանուկ Արեւանը խոշոր նպատակ է արձանագրել Սարեանագրութեան մարզում երևանում լոյս տեսած իր վերջին գրքով, «Ժողգ Սարեանի ինքնաբերական»: Զօրս աշխատակիցների եւ հաշտիչ մեքենայի աջակցութեամբ մալման երեք տարի խղճամիտ կերպով եւ մեծ համբերութեամբ վերլուծել է Բեյրութի քաղաքի Անճառքաւորի Սպասարկութեան, Ֆինանսիական Նախարարութեան, Քաղաքապետութեան, Ազգային Առաջնորդարանի, Զուրի եւ Ելեկտրական օֆիսների լեռնակաւտակ արութիւններին: Դնարիւ իրերունի Ա 47 նորանմար ելեկտրական արագ կարգացող համակարգչին, համեմատաբար կարճ ժամանակ տեւող այս գիտահետազոտութիւնը ցոյց է տուել, որ անցեալ դարու եօթանասական թուականներին, մօտ հարիւր Սարեաններ ապրել են լիբանանի հայկական հին գաղութում: Դրանց եւ ոչ մէկին յատկանշները չեն համապատասխանում գրագէտ Սարեանի բնորոշումներին: Մանուկ Արեւանը վերջնականապէս փաստում է, որ «Ժողգ Սարեանը» կեղծանուն է:

Նոյնքան շնորհակալ աշխատանք է տարել Գորիսի համալսարանի Գրական

նութեան դասախօսութեան քննադատ Արշակ Բաբանցը: Նա քննել է Բեյրութի քաղաքի փրանսական, պէլիական, գուիցերիական, քանադական եւ անյիշական դեսպանատների հին տոմարներին, կազմել է եօթանասական թուականներին հայերի հետ տնտեսագործական կապերը ցանկը եւ հաստատել երեք ժերմէնների գոյութիւնը: Մին սեմէկալցի, ամուսնացած մանր պարծուա Յակոբ Փէշտմալեանի հետ, միւսը պէլիացի, Հայկ Թորգոմեանի կինը, որ գաւազ չի ունեցել, իսկ երրորդը փրանսացի, ամուսնացած ֆախանայ Կարապետ Գալստեանի հետ, որ վաղաժամ մահացել է ինքնաշարժի արկածով: Արշակ Բաբանցը հաստատել է շուրմն, որ ժերմէն էլ կեղծանուն է, եւ մեզ անձամբ է մնում խորհրդաւոր կնոջ ինքնաբերական:

Կեղծանուն գործածելու հին սովորութիւնը կենսական նշանակութիւն էր ստանում գրագէտ Ժողգ Սարեանի համար, որի արտամուտնական սերը սպանում էր երկու ընտանիքների խաղաղութեանը: Այսօր, սեռային եւ սիրային ազատութեան մեր դարաշրջանում, մեքէ դժուարեանում եք հասկնալ Սարեանը ճշգրէ ընկերային բարեքի ալիւնացիայի իսկական տարագրութիւնը: Հեղինակը խոնամով է քաջցրել, այսպէս ասած, իր «մեղաւոր սերը»: Անուններն է փոխել, դէպքերն է շրջել, վայրերն է տեղափոխել: Բնութեանը հանդէպ անկեղծութեան պակաս չէ տա, այլ տարրական խոհեմութիւն... Եւ երեւակայում եւ գրագէտին, որ հաշտակաւոր բանաստեղծին պէս քախտալից շնորում է:

«Ինչո՞ւ անունդ այստեղ չկարենամ գրել ես»:

✱

Մզաւոր տուն ալցելիւր, ինծի համար, մանաւանդ առաջին օրերուն, ծով մտնելու կը նմանի: Կը բաւէ, որ նետակու քաղցրութիւն ունենաս: Սկզբնական դողը անհանգիստ է, բայց կ'անցնի: Յետոյ՝ ի՞նչ երանութիւն...

Հազար պատճառ գտայ տնտեսալու-
համար:

— Էլի՜դ, գուլպաներս: Ո՛ւր են
գուլպաներս: Ո՛չ, ո՛չ, սեւ գուլպայ կ'ու-
ղեմ, առոնք կապոյտ են, չի՞ս տեսներ:
Ի՞նչ է, Հարսնի՞ք կ'երթանք: Այս տան
մէջ մարդ զլուխը կը կորսնցնէ: Լա՛ւ,
լա՛ւ, ինչո՞ւ կը պոռաս, տեսայ, անկո-
ղինին վրայ նետուած են:

Տարաւոր արգուկիւղին չես զրկած:
Ինչպէ՞ս թէ զլաւ է: Եթէ քու տաքատգ
ըլլար այդ վիճակով կը հագնէի՞ր:

Ի՞նչ, Սուրբ Յարութիւն եկեղեցի՞ն:
Ես դիտե՞մ ուր է: Կամ ալ Սուրբ Աստ-
ածածին եկեղեցի՞ն: Գլուխ — գործոց:
Իսկապէ՛ս անմտութեան գլուխ-գործոց:
Տասը վայրկեանէն Հոգեհոնգիտը ա-
ւարտած կ'ըլլայ եւ դեռ չենք դի-
տեր, թէ ո՞ր եկեղեցին պիտի երթանք:
Վեղարկոյի մէջ տպուած մահազգը չկար-
դացի՞ր:

Այսպէս ուրեմն, Կիրակի առաւոտ-
եան մեր հանելի ժամանցը — անհաւա-
սալի՜ բայց իրաւ — Հետախուզութիւն
մը պիտի ըլլայ Պուրճ Համուտի լարիւ-
րինթոսին մէջ: Եւ ի՞նչ փնտռելու հա-
մար, տիկին, ըսէք խնդրեմ: Եկեղեցի:
Այո՛, բայց ո՞ր եկեղեցին, Սուրբ Յա-
րութիւն, թէ Սուրբ Աստուածածին:
Գաղտնիք Փարիզու: Խանութպանին կը
հարցնենք — դիտե՞ս այն եկեղեցին, ուր
մեր ազգական Արամ Գարսեանին հոգե-
հանգիստը կը կառուարուի... Աստուած
հոգին լուսաւորէ, ամէ՛ն:

Ի՞նչ սքանչելի գիւտ է ամուսնու-
թիւնը: Երբ սրտնեղութիւնդ, ջղայնու-
թիւնդ, հոգեբող, ներքին թոյներդ սկսին
թանձրանալ եւ կճել, անմիջապէս մաս
մը կը պարպես կնկանդ (կամ ամուսնիդ)
վրայ, կը թնթեւանաս, ո՛ւր: Վիճաբա-
նութիւնն ու կռիւր առողջապահական
միջոցառումներ են, սիրտը, երակները,
ջիւղերը խնայելու քէրպիւթքի: Ամու-
րիները երկար չեն ապրիր՝ ծանօթ իրո-
ղութիւն:

Յետոյ կը հաշտուիս: Թէ՛ օգտակար
եւ թէ՛ հանելի միջնակէտ մը:

Այո, համոզուած ամէն օր կ'ամբա-

նայ՝ ամուսնութիւնը անփոխարինելի
գիւտ է:

Գիտեմ, որ կրնա՝ էլիզն ալ նոյն եզ-
րակացութեան յանգած է, անշուշտ բո-
լորովին տարբեր պատճառներով: Բայց
հսկայական առաւելութիւն մը ունի իմ
վրայ — կրնայ լալ: Վաղարձակ զէնք՝
մը, որուն չեմ դիմանար: Գիտէ, թէ չեմ
գիմանար եւ անպատկառօրէն կը շահա-
գործէ տկարութիւնս:

Ատոր համար ալ՝ կարճ կապեցի, ե
կարծեմ, ճի՛շդ ժամանակին: Արդէն քի-
թը սկսած էր կարմրել, կզակը կը դող-
դողար: Վայրկեանէ մը արցունքները պի-
տի սկսէին հոսիլ, ուրելով մէկ ժամ-
ւան աշխատանք մաքիւնածը: Ա՛լ սպա-
սէ, որ Հանգարտի, ա՛լ սպասէ, որ դի-
մայարդարումը այր, թէն, գիմէն մե-
րըսկի: Ահա՛ն՝ հեռանկար...

Ինչ որ է, չուանը չկորած՝ ճամբայ
ելանք: Ա՛յ դարձանք, կամուրջէն ան-
ցանք, ձախ դարձանք, յետոյ դարձեալ
ալ, յետոյ ձախ... Ուրիշ խօսքով, ուղ-
ղութիւնը ամբողջովին կորսնցուցինք:
Միտկ ելքը գլխաւոր պողոտան գտնել եւ
հանգուցեալին տունը երթալն էր:

Այդպէս ալ բրինջ:

Սիւսզգուստ կրնե՞րու եւ ծաղկաւոր
չապիկ հագած ալրերու Ֆլշաղդ բաղ-
մութիւն մը: Ծաղարանը հիւրանոցէն
բաժնող միջնորմը մերցնելով՝ բնդար-
ձակ միջոց մը շահած էին: Էլիզ կորսու-
ւեցաւ սրահին միւս անկիւնը, Արամին
մօրը շուրջ հաւաքուած կիներուն շրջա-
նակին մէջ: Պարիկ աղջիկ մը տեղը ին-
ծի տուաւ:

Սգաւոր տան մէջ անդամ մը որ ա-
թուդ դրաւեցիր՝ ա՛լ կրնաս քաղաքա-
վարական ընթացիկ պարտադրանքներէն
խուսափել: Ո՛չ միայն խուսափել՝ այլեւ
բացայայտօրէն գանոնք արհամարհել:
Ընկերային բանասիրութիւնը չքացած է
— գոնէ՛ կէս ժամուան համար — եւ ա-
զատ ես, իսկապէս ազատ, եւ մինակ,
դուն քեզի հետ, դուն քու մէջդ...

Այսպէս, ալ կողմինդ կը ժպտի,
ձախ կողմինդ կը բարեւէ, չես փոխա-
դարձեր: Դիմացինդ կը խօսի, չես պա-

տասնյակներ: Ծառ-չառ կրնաս հառաչել
 եւ ակնարկդ կօշկենքուդ քիթին քա-
 մել: Վերաբերումդ կը նկատուի խորունկ
 սուգի նշան, մարդիկ փոխանակ րնդվղե-
 լու, կը յարգեն վիրտդ եւ քեզ շնն խան-
 դարեր: Արտաքին աշխարհէն կտրուած՝
 ա'լ կրնաս մտքիդ յուսարժակը պտտցնել
 յիշողութեանդ գիշերին մէջ եւ մոռցը-
 ւած, մոռցուած ըլլալուն համար ու
 թանկագին պահ մը վերադարձի: Կամ ալ,
 պարզապէս, զո'նէ քանի մը վայրկեան
 կը վերադառնաս ինքնութիւնդ, ճիշդ ինչ-
 պէս դարձան արեւոտ օր մը, երբեմն բո-
 լորէն զաղտնի կ'այցելես գիւղի լքուած
 տնակդ: Սրտատրոփ կը բանաս կղպուած
 դուռը, կը մտնես անոր մտերմութեանը
 մէջ, կը նստիս, սիկարէթ մը կը ծխես:
 Յետոյ պատուհանը կը բանաս եւ ներ-
 սէն, ներսէն կը դիտես համայնապատ-
 կերը: Այսինքն՝ ա'յն, որ դուն չես, այն
 բոլորը, որ տարբեր են, այն բոլորը,
 որ կը փսփսան, թէ գուն կաս:

Ի'նչ երանութիւն...

«Կը մտածեմ՝ ուրեմն կամ»:

Տեքարթի նշանաւոր հաստատումը
 երբեք չէ կրցած զիս համոզել: Մտա-
 ծումը բացառաւ ճշմարտութիւն չէ,
 մտածումը չի կրնար մեկնակէտ ըլլալ:
 Յետոյ, ի'նչ է մտածումը: Եթէ
 անդրադարձ է, ուրեմն անդրադարձող
 մը կայ, ուրեմն մտածումէն առաջ է'ս
 կամ:

Բայց սա փաստարկութիւնը ի'նչ
 աւելորդ, ի'նչ արուեստական ձեւակա-
 նութիւն է: Քանի պիտեմ, թէ ես կամ,
 անսահման աշխարհին մէջ սահմանաւոր
 ինքնութիւն մը, շրջանակ մը, գոց ներք
 մը:

Ես՝ միակ:

Ես՝ տարբեր:

Ես՝ բացարձակ իրականութիւն:

Հպարտ չեմ, այսինքն արժէքներու
 բաղադրութիւն չեմ ընել, չեմ կրնար
 ընել: Պարզապէս էութիւնս կը յորդի ըն-
 դերքէս ժայթքող ըլլալու՝ գիտակցու-
 թեամբ: Եսը ատելի չէ, պարոն Փա-
 քալ, ատելի է ընկերային բռնատիրու-
 թիւնը...

Դրացիս մտերմաբար հետս կը խ-

սի: Ծանօթ կ'երեւի, բայց չեմ կրնար
 անունը յիշել: Վերջին բառերը միայն կը
 հասկնամ:

— ... Արամը շատ երիտասարդ էր,
 մե'ղք եղաւ: Պարապ աշխարհ, պարապ
 աշխարհ...

— Այո, շատ երիտասարդ էր, մեղք
 եղաւ: Ե', ի'նչ ընենք, կեանքը այս-
 պէս է:

Սուրճ կը հրամցնեն: Ատիթէն օդ-
 տըւելով՝ հաղորդակցութիւնը կը կըտ-
 բեմ:

Մեքենագէտ Արամը, քանրհինգ
 տարեկան: Ինքնաշարժի արկած: Արդ-
 եօք ինքն իր ձեռքով չէ'ր նորոգած դայն:

Դեռ անցեալ ամիս քովը դա-
 ցած էի: Ինքնաշարժիս շարժակը երկար
 ատենէ ի վեր հիւանդկախ էր: Ալէյի ա-
 ռաջին զատիվներին կը սկսէր արդէն տը-
 քալ, հազալ եւ հեւալ: Քանի մը անգամ
 քննեց, քանի մը կտոր փոխեց, անօգուտ:
 Ստիպուած երեք օր կառատուն ձգեցի
 արմատական նորոգութեան համար:
 Հիմա կարծես վերադառած է իր աշխոյ-
 ժը:

— Պարոն Ժազ, օքտոյ պոմպայի
 պէս եղաւ: Բայց եթէ տեղը ըլլայի՝ նոր
 մը կ'առնէի: Ասիկա հինցած է, օր մը
 գլխուդ փորձանք կը բերէ...

Չարմիկիս տղան է, բայց ինծի պա-
 րոն կ'ըսէ, որովհետեւ ձեռքերս մեքե-
 նայի իւղով չեն սեւցած, որովհետեւ
 դպրոց դացած եմ, երկրորդական վար-
 ժարան, համալսարան: Եւ ո'ր հասնե-
 լու համար... Մինչդեռ ինքը մեծցաւ
 Պուրճ Համուտի կառատուններուն մէջ,
 գիշեր-ցերեկ աշխատեցաւ, մինչեւ որ
 զմարդ եղաւ:

Կարած Արամ:

Իսկապէս մեղք եղար, Արամ, իսկա-
 պէս շատ երիտասարդ էիր:

Քեզմէ կը պահեմ աշխարհին կարծես
 նոր բացուող տղու հիացիկ եւ անուշ
 ժպիտդ, անգի'ն ժառանգութիւն մը:

Ձեռ գիտեր, եւ ինչպէ'ս կրնայիր
 դիտնալ, որ Տէքուանէի կառատունը եւ
 իրեն կից ընդարձակ հողամասը կա-
 խարդական հմայք մը ունէին ինծի հա-
 մար: Կը զարմանաս, չէ', ալքերդ խոշոր

բացած։ Ի՞նչ, ի՞մ հին կառատո՞ւնս եւ այդ դարձահոտ պարագութիւնը, ուր աշկերտներս կը միգնն։

Այո, Արամ, ճիշդ այդ հոգածասը, ուր երեք լքուած ինքնաշարժներ դանդաղորդէն կը փտտին, ուր դրացիներուն տղաքը Փութպուլ կը խաղան, ամառը փռչի ինչ ձմեռը ցնի ինչ մէջ...

Որովհետեւ, տարիներ ատալ — դուն չէիր ծնած — անունս կրող տղայ մը կը խաղար Հայկ, Մէյտան թաղի կառատան քովի սմալի տարածութեան վրայ։ Կը դժուարանամ ըսելու, թէ որքա՞ն տարբերութիւն կայ այդ տղուն եւ այսօրուան ժառ Սարգիսին միջեւ։ Յետոյ՝ Ի՞նչ Թըսել է խաղալ։ Այդ խեղճ բռնը շատ աւելի կը յայտնարէր չափահասին սրբաբեր արհամարհանքը, քան թէ մանուկին ամբողջական յանձնառութիւնը, անկախութիւնը։ Ձէի խաղար, այլ կ'ապրէի, կ'ապրէի բառական իմաստով հրաշալի կեանք մը, որուն զով արկածախնդրական որեւէ վէպ տգիտ կը մնայ։ Մեր խրճիթին շատ մօտ անապատ հանք մըն էր անիկա, ուր ամէնօրեայ հետախուզութեամբ կը փնտէի եւ կը գտնէի չինիլիք զմայլելի մեքենաներուս անհրաժեշտ մասերը — երկաթ զնդիկներ, պտտականներ, ձողեր, սղոյններ, թելեր, դամեր, անիւներ, ձգախէժ, զսպանակ, ապակի, թիթեղ... Իրագործած օգտաշահութիւնը բարձրագոյն Արարատ լեռը եւ զտայ Նոյեան Տապանը (ուր զոյգ մը աննկարագրելի անասուններ պատահմամբ բռնատարկուած ըլլալով խցիկի մը մէջ, չէին կրցած միաներուն պէս դուրս գալ եւ բազմանալ)։ Աշխարհաստան թնդանութիւնը հնարեցի եւ բաժնեցի մեր անդէն հայ Փետայիներուն։ Պողոպտ կամուրջներ նետեցի Արաքսի մէկ ափէն միւսը։ Թռչող ինքնաշարժս շահեցաւ բոլոր մրցումները։ Ամէն օր այցելեցի Ռոպէնտանի կղզին եւ երեկոյեան տուն վերադարձայ անձնական շոգենաւովս, ճաշը յփախցնելու համար (հայրս խիստ մարդ էր, ամէն պարագայի, միեւնոյն աշխարհը չէինք ապրեր)։ Եւ ասկիւնին ինչե՞ր, որ վերջնականապէս կորսուած են մանկութեանս հետ։

Եւրջո իրարանցում մը, մեծ ու պղտիկ տաքի կ'ելլեն. քահանան է, դրացիս տեղը կու տայ, վայրկեան մը խօսակցութիւնները կը զարդին, բոլորին ակնարկները իրեն կ'ուղղուին։

Ափսո՛ս, դիտուն թառած էջմիածնի դժբէժը շուք չի տար աննշան դէմքին։ Ոնգն ու կրակ արհեստաւոր մը։ Հաղիւ սուրճը խմած՝ կ'աղօթէ եւ անապարանօք կը մեկնի։ Հաւանաբար ուրիշ տուններ ալ պիտի այցելէ։ Այսօրուան սուրբը Ի՞նչ է արդեօք, սուրբ Սարգիս... ոչ, աստեղ ձմեռնային սուրբեր են։ Թերեւս սուրբ Գրիգոր է։ Այո, կրնայ ըլլալ, քանի տարին երեք անգամ կու գայ, երեք անգամ տւելի հաւանականութիւն կայ...

— Սո՛ւս, քեզի պէս հայ քրիստոնեայ... — պիտի ըսէր Էլիզ։

Բայց ան նստած է Արամի մօր եւ քոյրերուն զով։ Ձեռքերուն շարժումներն եւ դէմքին արտայայտութիւնն կը հետեւցնեմ, որ կը ջանայ զանոնք մխիթարել։ Ի՞նչ քաջութիւն, Ի՞նչ յաւակնութիւն։ Կարելի՞ է դաւակի մը, եղբօր մը մահուան ցաւը զոյգ մը խօսքով ամոքել։ Նման պարագաներուն ես անճարակ եմ, կարծես լեզուս կը բռնուի։

— Որովհետեւ ետաճէր ես։ Ինծի համար ալ հաճելի չէ, բայց պարտաւանութիւն է, կը կատարեմ։ Մարդ՝ մարդով կ'ըլլայ...

— Եւ Ի՞նչ կ'ըլլայ, ըսէ խնդրեմ, մա՞րդ կ'ըլլայ։ Ոչ, ընկերութեան մէկ անգամը կ'ըլլայ։

— Միեւնոյն բանը։

— Երբե՛ք։ Մի շփոթեր ընկերութեան հլուհպտակ, անհատականութիւնէ պարզուած միաւորը մարդուն հետ։

— Ինքզինքդ արդարացնելու համար փիլիսոփայական մարդանցներու կը դիմես։ Արդէն ուշացանք, եկուր դուն ալ զոյգ մը խօսք ըսէ եւ երթանք ճաշնք։ Կարծես թէ ներքին խօսակցութեանս հետեւած ըլլար, ճիշդ այդ երկվայրկեան նիւթալիով նշան կ'ընէ, որ մօտենած։ Չտեսնե՞լ կը զարնեմ. լաւ է հոս, կըրթանք պէտքաւորը ժամ մնալ։ Տու-

նը սպասող չունինք, քանի Արփիկը ընկերուհիին հետ սինեմա դնաց եւ ժամը մէկուկէսէն առաջ չի վերադառնար։ Դրացիս միշտ ցած ձայնով կը շարունակէ խօսիլ Արամի մասին։

— ... Ընտանիքին նեցուկն էր։ Եղբայրը մեծ բան չի շահիր, հայրը, պարոն Գարեգինը արդէն քերացած է։ Հիմա ինչպէ՞ս ծայրը-ծայրին պիտի բերեն... Պարապ աշխարհ։

Ճիշդ է, Արամ զրեթէ մինակը կ'ապրէր ընտանիքը, եւ թերեւս այդ պատճառով ալ չէր ամուսնացած։ Կենքն ու մահը նա'եւ տնտեսական երեսոյթներ են։

— Անշուշտ, Աստուած ուրիշ դուռ մը կը բանայ...

Ոտքը շարունակած զոհարարող մտակոյտ մը մեր հորիզոնը կը փակէ։ Անմիջապէս շորս-հինգ հոգի տէրայտ յարգանքով ոտքի կ'ելլեն եւ տեղ կուտան։ Հրամայեցէք տիկին, խնդրեմ, հոս հրամայեցէք, հրամայեցէք...

Քոյս կը նստի։ Ոսկի ապարանջաններու խշուղց եւ ծանր անուշահոտութիւն։ Յիշողութեանն երկտրոնական համակարգէն անմիջապէս կը սկսի աներեսոյթ երկրին վրայ արձանագրել։

— Տիկին Տարիա Ալթունեան, մեծախառն յամանակատար Մամուկ Ալթունեանի մեծափառքամ կիմը։ Տարիներ առաջ ամասինը հորս եւ Գարեգինին գործի ընկերը եղած է։ Ձեռ գիտեր, քէ ե՞րբ, ինչո՞ւ եւ ի՞նչ պայմաններու տակ բաժնուած են։ Այն ատեն տիկինը պարզապէս նեկտար կը կոչուէր։ Բարեսիրտ, տղւտ, բիշ մը սնուպ, բիշ մը «նար-հալաւտ»։ Վիլլա մը Պրուսման, ապաւում մը Պէյրուս, քանի մը իմֆնաշարժներ, երկու ամուսնացած աղջիկներ, եւայլն, եւայլն։

Արդեօք պիտի բարեհաճի՞ր հետս խօսիլ։ Շատ հաւանաբար զիս մոռցած է։

Բայց ոչ, կը դառնայ եւ կը հարցնէ։

— Ինչպէ՞ս էք, պարոն Ժառ, շատոնց չէք տեսնուիր։ Եւ առանց պատահանիս սպասելու կը շարունակէ։

— Մե՛ղք եղաւ Արամին, սքանչելի մեքենայէս էր, աչքերնիս գոց օրսները

երես կը յանձնէինք։ Մանուկ Ադան Գերմանիս ճամբորդեց տարեկան գիւղին համար, թէ ոչ ան ալ կու գար։ Արամը մեր տղուն պէս կը սիրէինք. ճակատագիր...

Եւ աւուր պատշաճի խօսքերէն ետք՝ դէմքին արտայայտութիւնը եւ շեւտը անմիջապէս փոխելով՝

— Տիկին Խուրիկն սալօնը տեսայ, շատ հաւանցայ։ Տէքորաթէօրս հայ է ըսաւ, թերեւս կը ճանչնայ, Ժառ Սարեանը։ Անշուշտ կը ճանչնամ պատասխանեցի հպարտութեամբ, զինքն ալ, ընտանիքն ալ լաւ կը ճանչնամ։ Պրաւօ՛, գիտեմ շատ աշխատեցաք, դժուար օրեր ապրեցաք, բայց վերջապէս յաջողեցաք։ Պրումանայի սանս մէջ կ'ուզէի արեւելեան սալօն մը կահաւորել։ Մանկ ցած ուղիղներով, պարսկական պողպատեղբարով, եկեղեցական ջահերով, պարոնը կրակարանով սենեակ մը, որուն պատուհաններուն ձեւն ալ պէտք է փոխել։ Ճիշդ մէջտեղն ալ մարմարէ շատրուան մը։ Մեր դրացի Սալամէնը արեւելեան սալօն մը ունին, ուր երբեմն ընկերուհիներու հետ առաւօտեան սուրճը կը խմենք, բայց ես աւելի հարուստ բան մը կ'ուզեմ։ Ծառաթ օր րիդունելութիւն ունինք, ձեր տիկնոջ հետ մեղի հրամայեցէք, տեղի երկար կը խօսինք, տեղն ալ կը տեսնէք։ Կը սպասենք...

Ապրիլ'ս նեկտար, ապրիլ'ս, զիջ մնաց ծաղիկահարէի։ Որքա՞ն ճամբայ կտրած ես այն հեռաւոր կիրակի օրէն ի վեր, երբ լեարդ կը խորովէիր երկու քարի մէջ սեղմուած կրակին վրայ, Անթիլիասի ակին մօտ... Մանուկը, Գարեգինը եւ հայրս՝ Ներսէսը բազմած էին սրդէն օդի սեղանին շուրջ, նորածին Արամն ալ փակած էր մօրը կուրծքին։ Դո՞ւն ես այդ նիհար, բարձրահասակ, երկար մազերով զործաւորի կիներ... Երէկ՝ սեւ եղունգներ, պատուած կօշիկներ, տունը կարուած անճաշակ պարեգօտ, այսօր՝ տիկին Տարիա, որուն ազամանները տակաւին աչքերուս մէջ կը փալփան։ Հրա՛շք։ Բայց արդար ըլլամ եւ իմ կարգին հաստատեմ, որ ծանր աշխատեցաք, դժնդակ օրեր ապրեցաք եւ միշտ ալ

գիւրին շնորհաւ ընկերային սանդուխէն բարձրանալը :

Անի կրնար ըսել, թէ ապագանքը դիտարկելու կը թողու: Դպրոցական վերամուտ է եւ քանի մը հազար ռուբլի շահը ճիշդ ժամանակին կը հասնի: Բայց...

Դաւանութիւն, նախաճիւղ, չեմ գիտեր, բան մը ուրախութիւնս կը մթաղնէ: Թերեւս այս իրողութիւնը, որ տասը տարիէ ի վեր հաստատուած եմ Պէյրուսի մէջ իբրեւ տէքնոլոգի, եւ տիկին Ալթունեանը երբեք մտքէն չէր անցուցած ինծի դիմել — որքան կը յիշեմ Հարմուշը իրենց ապարանքը կահաւորեց: Հիմա, տիկին Խորիկին վկայութիւնը կը բաւէ, որ ժաղը զնահատուի: Ուրիշ խօսքով, սիրելի Նեկտար, զաղթականի ստորագրական բարգաւթը ամբողջովին չեւ թօթափած:

Ընդունելութեան սրահը արգէն երեք քառորդով պարպուած է: Էլիզ մեր կողմը կու գայ:

— Եստ ազդուած կ'երեւի, ժաղ: Գիտեմ, Արամը եղբոր պէս կը սիրէ ինչ, ի՞նչ ընենք, կեանքը այսպէս է: Եկուր դուն ալ զոյգ մը խօսք քսէ եւ տուն երթանք: Արիւնիկը բանալի չունի, վախճանաւ դուրսը ապաստէ:

Ճարահատ, կ'մկմացի այդ «զոյգ մը խօսք» եւ հրաժեշտ առնէ:

Հազիւ ինքնաշարժին մէջ տեղաւորուած՝ էլիզ յարձակութիւն անցաւ:

— Տիկին Ալթունեանին հետ անուշ անուշ կը խօսէիր...

— Ինչպէ՞ս ալ հետեւէն տեսար:

— Հետեւ կամ մօտ՝ պէտք եղածը կը տեսնեմ: Վրայի հաղուտան ալ տեսայ: Այդքան հարստութիւն եւ այդքան անճաշակութիւն: Լաւ, ինք բան չի հասկնար, բայց գերձակուհի՞ն ալ կոյր է:

— Քիչ մը չե՞ս չափազանցեր:

— Հարուստ ըլլալուն համար անշուշտ դուն ալ միաներուն պէս գլխարկդ կը հանես, խոնարհութիւն կ'ընես եւ առջեւը մոմ կը վառես:

— Իո՞վ դուն ալ պարզապէս հարուստ ըլլալուն համար կ'ատես:

— Ո՛ւ, ուրիշ հարուստներ ալ կան... Ինչ որ է, չվիճարանինք: Հիմա ըսէ, թէ ի՞նչ կ'ուզէր այդ ճարպի տակաւը:

— Ճարպի տակաւը կ'ուզէր, որ Պրուսիայի վիլլային մէջ արեւելեան հիւրանոց մը կահաւորեմ: Տիկին Խորիկին հիւրանոցը շատ հաւնած է: Ես — բաթ գիւր իրենց հրաւիրուած ենք:

— Եսբաթ գիւրը: Կարծեմ մինչեւ Եսբաթ սեւ նոր հագուստս պատրաստ կ'ըլլայ: Ուրեմն վերջապէ՛ս մատամը լսած է, որ հոս ժաղ անունով տէքնոլոգի մը կայ:

— Եսբաթ տիկին Խորիկին:

— Ժաղ, բան մը պիտի ուզեմ:

— Ըսէ՛:

— Բայց պիտի չմերժես:

— Դուն ըսէ՛, եթէ ըլլալիք է...

— Անցեալ տարի աստիճանով վերադարձաւ մը խոստացած էիր...

— Կեցի՛ր, կեցի՛ր...

— Սարաֆեանին ցուցադրողին մէջ սքանչելի աստիճան մը տեսայ, դիմն ալ...

— Գի՛նն ալ սքանչելի է:

— Ուրիշ է, պէտք է ըսել, որ աստիճանի գինը հիմա շատ ինկած են, պէտք է առիթն ուտուի:

— Լա՛ւ, ի՞նչ է գինը:

— Վրան երկու հազար դրուած է: Բայց Եսբաթին հետ կ'երթամ, անոր միշտ զեղչ կ'ընէ:

— Երկու հազար, այդքա՞ն, այդ ի՞նչ աժան...

— Ձրի է, կատակ չեմ ընել: Անցեալ տարի երեք հազարէն պակաս չէր:

— Ուրեմն սպասենք յառաջիկայ տարուան, թերեւ հազարի իջնէ...

— Եթէ Տարեա Ալթունեանին դորձէն ինծի աստիճան մը չեւէ, յոյսս վերջնականապէս կորեմ:

— Վստահ չեմ, որ մեզի երկու հազար շահ կը մնայ: Յետոյ, վերամուտ է, ուրիշ ծախքեր ալ ունինք:

— Ֆաբիլիքին վրայ երկու հազար աւելցուր, ձեւ մը գտիր: Հիմա ե՞ս քեզի պիտի սորվեցնեմ...

— Ի՞նչ աղուոր, ուրեմն այդպէ՛ս, երկու հազար աւելցնեմ... Հաշիւներն

զիսացող մարդիկ են, հարուստ, բայց
գրամին յարգը ճանչցող մարդիկ, զի-
րին խաղի չեն գար:

— Ժազ, բան մը ըսեմ մի՛ նեղուիր,
դուն մարդ պիտի չըլլաս:

Վճիռը վերջնական էր: Ընդհանրա-
պէս դատապարտեալին կը հարցնեն.

— Վերջին ըսելիք մը ունի՞ս:
Էլիկ այդ հարցումը շուղղեց ինծի:
Սմէն պարագայի, պատասխանս «ո՛չ»
պիտի ըլլար: Դատապարտութիւնը նոր
չէ եւ յայտնապէս էլիզին հասկցած ձե-
ւով մարդ պիտի չըլլամ: Վստահ:

Արփիկը դրան առջեւ անհամբեր կը
սպասէ:

— Քիչ մը չէի՞ք կրնար անապարել,
Թոմ ձոնսի փրակըսմը կէս եղաւ...

Երգիչին եւ նուագախումբին վայ-
րազ կշռոյթը վայրկենապէս տան մըթ-
նոլորտը կը լեցնէ:

Հարուած առ հարուած, հարուած
առ հարուած, հարուած առ հարուած
նոր երաժշտութիւն կոշուածը ուղեղնե-
րը կը ցնցէ, կը ցնցէ, կը ցնցէ եւ կը
պարպէ...

Կը մնան Արփիկը, որուն տասնը-
հինգ տարեկան միտերը կշռոյթին հետ
կը թրթռան եւ Թոմ ձոնսը, որ պատ-
կերասփիւռի պատտառէն վաւաչոտ նայ-
ւածքով կը մերկացնէ պարող աղջիկը...

— Արփիկ, սեղանը չդնե՞ս, կերա-
կուրը պիտի պաղի:

Կախարդուած պահը Զարդուգիւնը
եղաւ, երկիր վերադարձանք...

Հայ մտաւորականներու երէց սե-
րունդին մէջ քիչ մը նորոյթ եղած է
ժողովրդային կշռութեամբ երաժշտու-
թեան դէմ արայայտութիւն: Սիմոն Վը-
րացեան տեղ մը հպարտութեամբ կը յի-
շէ, որ իր օրերուն երիտասարդութիւնը
ինքզինքը ամբողջովին կը նուիրէր ըն-
կերային դործունէութեան, որովհետեւ
«ճաշող» ժամավաճառ չէր ըլլար: Իսկ

Սիլվա Կապուտիկեան (բնականաբար)
ոտանաւոր մը գրած է «Վայրենի ոռնոց-
ներուն» դէմ: Երկուքն ալ չեն հասկցած
եւ հաւանաբար չեն փորձած իսկ հա-
կընալ նոր երաժշտութեան էութիւնը:
Անիկա ճիշէ է, հեծկտուք է եւ բողոք,
անիկա պայքարի կանչ է եւ ռազմական
քայլերդ... Արեւմտեան քաղաքակրթ-
ութեան հակադրուող ուրիշ, նո՛ր
մարդկութեան մը ռազմական քայլեր-
դը...

Անշուշտ այս բոլորը քիչ մը ճառա-
յին են: Այնքան, որ ինքզինքս բեմի վը-
րայ կը տեսնեմ: Մօրուքաւոր, հնդկու-
կան հազուատներով, ջսպն տարեկան
(եւ ո՛չ թէ քառասունըւորս) Ժազ Սար-
եան մը, որ իր հեղինակաւոր խօսքը
կ'ուղղէ հարիւր հազար երիտասարդնե-
րու զունաւոր բազմութեան:

— Պիտի փշրե՞նք ազատ խօսքը, ա-
զատ արուեստը, ազատ սէրը շղթայող
բոլոր կապանքները: Պիտի փշրե՞նք ա-
րեւմուտքի մշակութային բռնատիրու-
թիւնը: Սիրեցէ՛ք զմիմեան: Սէ՛ր, ո՛չ
թէ պատերազմ: Կեցցէ՛ ճաղը:

Ծափահարութիւններ, ծափահարու-
թիւններ, ծափահարութիւններ...

Ժէրմէն, խարտեալ սիրուհիս, բե-
մին վրայ կը ցատկէ եւ երկարօրէն
չըթներէս կը համբուրէ... Ի՛նչ երա-
նութիւն... ան ալ ջսպն տարեկան աղ-
ջիկ մըն է (եւ ոչ թէ երեսունըւորս տա-
րեկան՝ երկու փաւակներու մայր)...

— Թե՛ղճ Ժազ, խորունկ-խորունկ
կը մտածես: Արամին ճակատագիրն էր,
կրնա՞նք բան մը փոխել: Եկուր, կերա-
կուրը պիտի պաղի: Կը մոռնա՞ս, թէ
այսօր Կիւրակի է, քիչ ետք ընկերներդ
պիտի դան փռէր խաղալու համար. ա-
ճապարեմք, սենեակը դեռ չեմ աւելած...

ՆՈՐԱՅՐ ՊԱՐԹԵԻՆԵԱՆ

Տ Ա Ղ Ա Ռ Ե Ր Կ Ի Ր

Տիեզերքի հեռաշող մոլորակներն ափ առի
Ու շրջեցայ քանի՜ հեղ իր շողաւէտ ծագերուն,
Երկիր, սիրոյդ պէս դիւքեղ ու հմայփիղ տարփալի՜
Ես չգտայ ոչ մէկ սէր, ոչ մէկ անանձ սրբութիւն:
Լուսամուտէն երթիւիս երբ կը դիտեմ քեզ լռիւն
Հուսկ շողերուն տակ մեռնող վերջալոյսի արեւուն՝
Կեդրոնաճիգ մղումով իզձերս քեզ կը մեկնին,
Կը խոյանան կարօտներս լանջերդ ի վար բերկրասուն:

Կեանքիս շաւիղը մոլոր պիտի արդեօք ո՞ր յանգի,
Ո՞ր բարձունքներն երկնուղէշ, կամ ո՞ր վիհերն ահաւոր-
Պիտի երբեք չշնչե՞մ բայրը հողիդ պանծալի,
Ձվերանա՞մ լիներուդ մտերմութեան մէջ անդորր:
Ակունքներէն լուսնային, երկիր, որքա՞ն խմեցի,
Բայց աղբիւրիդ կենարար յաւետ պապակ մնացի:
Դուն, կաթնաղբի՛ւր կարօտի եւ ցայտաղբի՛ւր ցնծութեան,
Ձով ջուրերէդ բոց սրտիս բաւ է կայլակ մը միայն:

Ի՞նչ շէնքանք անստուեր եւ փափկութիւն կուսական,
Անհունութեան մէջ անբաւ՝ ի՞նչ շնորհ եւ երկնային-
Աշխարհ քեզմով կը մատչի անհաս ջահին գիտութեան,
Զի նախանձ հունձքն եւ դուն Արարչագործ լոյս ձեռքին:
Ցաւերժական ծիրիդ մէջ կը թաւալիս անդադրում
Բացած մատնանդ սեպագիր իմաստութեան սրբագան,
Լոյսիդ տննչո՞վն է, երկի՛ր, որ աստղային ափերուն,
Ես, քու զաւակդ պանդուխտ, կը տուայտիմ տրտմածայն:

Դուն, անբասիր մայրութիւն, քշուառութեամբ զիս ծնար
Ու արեւին դէմ վըրաս ըրիր վարսերդ հովանի-
Եւ օրօցփիս ցայգ ու տիւ դարձար քնար հեզալար,
Զիս սնուցիր յոյսերուդ համեղ կաթովը յուռթի:
Պատանութիւնս դուն բացիր ճշմարտութեան ոլորտին,
Հանչեցայ խորհուրդը քեզմով իմացումին ոգեկան
Ու սիրեցի շունչն հզօր համայնական ապրումին,
Երկիր, քեզմով փարեցայ խօլ տարերքին բնութեան...:

Բա՛ց աչքերուս դէմ լայնշի, բա՛ց դարպասներդ խնդութեան,
Թող արքեմամ դարաբոյր գեղեցկութեամբդ արքենի-
Զի անձկայոյց կը շնչեմ եւ հոս վիշտը մեռութեան,
Կ'ապրիս հովուերգը մինչ դուն հեշտ հովերուդ հայրենի:
Ամպրոպային շանթերէն եթերային անհունին
Ծոցն երթիւիս երբ, աւա՛ղ, եւ հրկիզուիմ վաղածամ՝
Պարզէ՛ թեւե՛րդ քննուշ, չինչ արցունքովդ մայրական,
Երկիր, եղի՛ր ծաղկալսաչ անիններուս անշիրիմ...:

ՅԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՍՄԲԱՏ ՓԱՆՈՍԵԱՆ

Վ Ա Ր Ք

ԿՈՄԻՏԱՍ ԿՈՒՏԻՆԱՑԻԻ

Թ.

Պոլսոյ մէջ, սակայն, չկար մէկը, որ Կոմիտաս Վարդապետին ըսէր.
— Երթա՛ւ ի խաղաղութիւն:

Իսկ Կոմիտաս պէտք ունէր խաղաղութեան, այսինքն՝ հանգիստի, ամփոփում, լուռ խոկումի, ժամանակին հետ փախչող իր լաւ օրերուն, իրեն սպասող հայոց երգի հասկացողին: Կը փախչէր ժամանակը. զինք դարպասող կարօտները կը թանձրանային. կ'ըլլային ծանր բեռ, հեւ ի հեւ իր վազքին դէմ ցցուած կոթող:

Կոմիտաս Կուտինացին խիստ յոգնած էր: Երկու տարի շարունակ մտղմրեց հոս-հան: Առողջեցաւ: Ուտերը նեղցան, մարմինը խոնջացաւ. իսկ մէկը չկար որ ըսէր.

— Երթա՛ւ ի խաղաղութիւն...:

Պոլիսը ազա՛հ էր. անկուշտ. ի՛նչ որ տայիր՝ կը լափէր, չէր ըսեր «բա՛ւ է»: Կոմիտաս քանի՞ կեանք ունէր, որ ամէնը տար անոր: Տուաւ համերգներ. պատրաստ դետին էր «Գուսան» երգչախումբը: Կատարումն իրողութիւն պիտի դառնար նաեւ երաժշտանոցը: Բայց կար նա՛ն՝ մարդուն յոգնութիւնը, չքաւելու շափ՝ ձգուածութիւնը անոր ջիւղ-երակներուն: Սպառու՝ մը աննկատելի էր դուրսէն: Կոմիտաս կը մոխրանար իր ներսով: Արդէն առիթով մը ափսոսալու միտքը չյայտնե՞ց: Զրուա՛ւ, թէ չափազանցութիւն էր իր բերածը պոլսահայ մտաւորականներուն: Արտայայտուեցաւ թէ՛ն, բայց չթողուց բաց մը. ամէնօրեայ սպառումին, իբրեւ կապ-գիծ: Կանչեց հողեղաւակները, որոնք օր մը պիտի կրէին «Կոմիտասի աշակերտ» անունը: Կանչեց ու ըսաւ.

— Կանաչեա՛ն, ո՞ւր ես, ա՛յ տղայ...:

digitised by A.R.A.R.®

— Հո՛ւս եմ, Վարդապետ. անունն է Բարսեղ: — Ու կանաչեանը ո՛ւր որ էր գլուխ ցցեց:

— Կը բաւէ ինծի կանաչեանը: Նստի՛ր: — Աղա Կոմիտաս նայեցաւ ան-
անացանկին մէջ յիշատակուած երկրորդ անունին:

— Սրուանձտեա՛նց, դուն ռուսահա՞յ ես...:

— Պարզապէս հայ եմ. Վարդապետ:

— Անունովդ ապրիտ. մտի՛ր չարքի մէջ Բարսեղի կողքին:

Կրկին աչքը դրաւ ցանկին վրայ. դեռ չէր կարդացեր երրորդ անունը,
էրբ չարքէն մէկը պոռաց:

— Ես հո՛ւս եմ, Վարդապետ:

— Ինչպէ՛ս կը կոչուիս, եթէ գաղտնիք մը չէ:

— Սէմէրճեա՛ն:

— Այդ լա՛ւ անունն է. Սէմէրով Մէ՛ր ջան, — կատակեց Կոմիտաս,
բարակ ժպիտ մը նետելով ամէնուն դէմքին, ով որ ներկայ էր այս նշանա-
ւոր հարց-պատասխանին:

Չորրորդը ինքզինք պատէ պատ տուաւ. կ'ուզէր, որ Վարդապետը շուտ
կանչէր զինքը:

— Ներկա՛յ, Վարդապետ, քու հոգուն մատաղ:

— Ա՛. այդ որքան շատախօս ես, իմ բարի թումած, — կրկին ծիծաղ
մը, որ շատ ծաղկող չէր:

— Թումածեան կ'ըսուի՞մ եւ ո՛չ թումած, որ առանց եսնի չի կրնար
ըլլա՛ւ:

— Կեցցե՛ս. դու լաւ աղայ կ'երեւիս, ինքեատիպ, դուա՛րթ... Նստի՛ր
սեղդ:

Հինգերորդը արդէն ոտքի էր.

— Իմ կարգս չեկա՞ւ. ելած եմ ոտքի...

— Կրնաս եւ նստիլ, քեզ կոչող չեղաւ:

— Ես ձայն կ'ուզեմ...

— Անո՛ւնդ, — սպառնալի՞ք, թէ կատակ էր Կոմիտասի բերնին մէջ

«անունդ» ըսել տալը:

— Ցանկին վրայ՝ Սարգիսեանը կ'ըլլամ...

— Լաւ Սարգիսեան մը կայ այս ցանկին վրայ. քանի որ ներկայ ես,
կրնաս նստիլ...

Կը մնար կանաչի վեցերորդ սանը.

— Տղա՛յ, դուն ո՞ւր ես, չեմ տեսներ քեզ վաղուց...

— Բա՛յց, Վարդապետ, ես բնաւ բացակայ չեմ եղած. թիւրիմացու-
թիւն է ցանկէն սպրդելը:

— Ո՛չ, ո՛չ. Ապաճեան մը կայ. չըլլա՞յ այդ դուն ես:

— Ես ինքս որ կամ...

Ցանկը վերջացաւ. ուրիշ անուն չկա՛ր... Կոմիտաս Վարդապետի դար-
մանքին եկաւ, որ ամբողջ Պոլսոյ մէջ ուրիշներ ձայն ու անուն չունէին:
Վե՛ց հոգի էին, վեց կտոր ապառաժ, որ եկան ցրուեցան Վարդապետ-ուսու-
ցիչ Կոմիտասի առջեւ: Ամէնքն ալ խոստացած էին հետեւիլ ուսուցիչին թե-
յադրանքներուն: Կոմիտաս կանչեց զանոնք, որպէսզի կարճ խրատական մը
խօսի. բայց ահա թէ ինչ կը լսէին.

— Յոգնա՛ծ ու սպառած եմ, տղա՛ք. որոշեցի, ժամանակ մը հեռանալ
ձեզմէ: Ծանր է լատներելը: Դուք պիտի ըլլաք իմ ժառանգորդները հայոց
երգի հաւատքին: Ես այժմ կ'երթամ. բայց չկարծէք, թէ կ'ուշանամ: Պարզ

տոտյա մըն է ուղածս: Կը վերադառնամ, երբ հայոց աշունը սովորաբար կ'ընկնէ ժամէ մտնէ տուն եւ ես անութիւն տակ կը բռնեմ խուրճը նոր հասկաքաւիտն...

Հասաւ ու աչքերը խոնաւցան: «Սանեբու» մանրիկ ցտնկը ծալեց, դրաւ ծոցադրականը եւ ահա թեւերը րացած՝ դնաց զրկեց մէկիկ-մէկիկ դէմը կանգնած ախրադէմ «տղաքը» յովնաբեկ բազուկներուն կապովը: Շոգ սմառ էր. քրտինքը կը ծորէր տաք արցունքի պէս անոնց այտերէն:

Առած էր որոշումը մեկնումին, երբ համոզուած էր, թէ «Վարդա-նան»-ը գլուխ պիտի չգար: Վերադարձը իր անկարողութիւնը անտրամադրութեամբ, մինչդեռ գործին կը միջամտէր միշտ չկամութիւնը: Բարձր զարգացումը — իր փիլիսոփայութեան ոլորտով — կը փնտռէր մանրուքներու մէջ իսկ մեծութիւն, ահազեցութիւն, ցածրիկ թումբերը կ'ուզէր կերպարանափոխել սարերու...: Ո՛րք տեսնուած էր համահասարակ, միանման համայնափութիւն վաշտ-հովիտի ձոր ու կիրճի կամ լեռան ու բլուրին: Ի՞նչ դեղեցկութիւն պիտի զգենուր սարալանջը, երբ անոր նեցուկ կանչուած ըլլալին հովիտ մը իր կանաչով, զապաթ մը ձիւնահեռ կամ կիրճեր կտրատող: Կ'ուզէր կատարեալ, բարձրաբանական միօրինակութիւն գործին. իսկ այդ ցաւն կութիւնը անկարելի էր...

Ուրեմն, դրաւ մէկդի «Վարդանան»-ը.

— Կը նայինք վերջը, թէ ի՞նչ կ'ընենք...

Սակայն մտասեւեռումը շարունակեց մնալ մտքին մէջ: Փնտռեց ու գտաւ «Անոյ»-ը. այս աղջկան սէրը զինք յուզած էր ժամանակին: Այդ ի՞նչ սովորութեամբ-բարքեր էին. ի՞նչ խոր ողբերգութիւն: Առաւ ձեռքը դրքայի ու փորձեց անգամ մը եւս կարդալ դայն: Առաջին տողերը թելադրող էին.

«Կանչում է կրկին, կանչում անդադար,
իմ չքնաղ երկրի կարօտը անհուն...»

Կարօտ:

Կարօտ: Կոմիտաս զգաց կոկորդին մէջ խեղդուութիւն: Անիկա նմանեցաւ Արաքսին, որ իր լայն հունը թողած մէկէն կը մտնէր ժայռոտ կողմերուն մէջ կիրճի մը եւ հոն, գոռում-գոչումի մէջ խեղդամահ ըլլալու վտիտով, վրայ վրայի կու գար, կը կծկուէր, կ'ուռէր, կը բարձրանար, կը բարձրանար ժայռակողմերը փշրելու շափ...:

Կարօտ...:

Սկզբում անցնել անդին երկու տողէն: Մալեց զրքոյիլը դրաւ բարձրին տակ.

— Թող մնայ հոն. իսկ ես պիտի մեկնեմ. ա՛յ բաւ է. կարօտ ունիմ. կարօտ հին տեղեր, ծանօթներ տեսնելու, անոնցմով նորոգուելու. կարօտ ամէն բանի... արդեօք պիտի գտնե՞մ փնտելիքս, թէ գլուխս պիտի տամ պատին...

Ահա թէ ինչու զրկեց իր սաները. ի վերջոյ ասոնք ալ վերջէն պիտի չղանային կարօտ: Իսկ անոնք մէկ-մէկ կ'ըսէին.

— Չմոռնա՛ս մեզ, Վարդապետ. երբուն եւ թոյլ է մեր քայլքը. նոր ենք սկսեր ոտքի հլլել...

Ուսուցիչ-Վարդապետը ինչպէ՞ս մոռնար իր որդեգրած այս աղաքը, զորս ընտրած էր այնքան կիրքով, համոզուածութեամբ, հաւատքով, որ պիտի ըլլային իր ժառանգորդները.

— Յոռաւահատութիւնը մեղք մըն է. մնաք բարեմ'ւ. մնաք բարեմ'ւ. . . .

Եկած էր Պոլիս գարնան. մեկնեցաւ անկէ՝ երկու տարի ետք, ամառ ուր մը: Տարին ի՞նչ էր ուր. պոչը առած ոտքերուն միջեւ կ'ելլէր ու կը շքւէր: Երկու տարին Կոմիտասին թուեցաւ թարթող ակնարկ: Այսպէս էր, որ տարին եկեր եւ տարի մըն ալ զիպուէր էր տարիքին վրայ: Իսկ Պոլիսէն հեռացած տարին պատերազմի վախ մը կը կանգնէր հորիզոնին վրայ: Եւրոպան կ'եռար ինքն իր հաշույն: Գնաց էջմիածին. առաւ ալը Վեհափառ Հայրապետին:

— Եկա՞ր, որդի. շա՛տ ապրիւս. մնա՛ հոս: Դուն արժանի ես հանդչելու. . . .

— Ո՛ր. Վեհափառ տէր. ինծի կարօտը բերաւ եւ դեռ կարօտը պիտի տանի հոս—հոն. երգերու, հաստքի, ուխտապնացութեան, պարող—խնդացող հարսանիքներու, դաշտի աշխատանքին, լերան մէկ կողմին հանգչած տունեքուն եւ դեռ ո՛ր, ինչպէ՛ս, Տէ՛րն է զիտակ միայն. . . .

— Փառաւորութի՛ւն, որդի, հասկաքաղղ օրհնուա՛ծ ըլլայ. . . . ամէն:

Կոմիտաս Կուտինացին առաւ կրկին ալը ու մեկնեցաւ: Գնաց գտաւ հին ծածօթները. զլուխ պլխի տուած՝ շարեց, կողք կողքի բերաւ, ըստ շեշտի ու երանգի, ետքի եւ ետքանի, այն որ հնձուած էր ու կամենէ անցած, եղած էր ոսկեհատ ցորեն, հատիկ հայկական եւ այդ բոլորին տուն—տեղ ըրաւ երգարանի մը մէջ: Ու ապա ըսաւ ճակտին ջրտինջը սրբելով, խիղճով մարդու պէս.

— Առէ՛ք, ձեզ մատաղ, այս զմրդաստանը, որ միշտ առատ ըլլայ ձեր շտեմարանը. երգեցէ՛ք—պարեցէ՛ք՝ ըստ ոճի ու շեշտի եւ թող օրհնուի՛ր երգող բերանը. . . .

Իսկ ժողովուրդը, որ կը բնակէր ձորի մը խորը, կամ լեռնալանջի մէկ ծեբպին թաւած, զիւզամէջ եղած, դաշտի թէ՛ հովտի կրակով այրուած եւ կամ սարերու ծիծաղկոտ կուրծքին հօտերը մակաղած — սկսաւ երգել երգերը Կոմիտասին ու փառարանել անոր ծնունդը:

Ծնունդով որք էր. կարօտ բաներու. մեծցաւ պատանի, եղաւ հասուն մարդ, սակայն կարօտը կուռնկի թելով միշտ ճախրեցաւ իր զլխավերեւը: Կարօտ մը խայթող, տակալծուն, տիրական իր սրտին մէկ անկիւնէն դըրւած զոզգոջ մոմի լույսի պէս. երբեմն մարմրող եւ միշտ ցոլեատու:

Կոմիտաս Կուտինացին եղած էր երիտասարդ. կը կրէր կուսակրօն վանականի սեւ սքեմը վրան: Երբեմն զլխարկը, յաճախ սարատը դրին սքեմը մահիճի մէկ ոտքին: Բայց անոր սիրտը շանցաւ կամուրջը, որ կը բաժնէր աշխարհականը կուսակրօնութենէն:

Պերլին պնաց. կ'ուզէր հին կարօտ մը փայփայել հոն: Երջեցաւ փողոցները, երբ արդէն քառասունըրեք տարի բարդուած էր ուսերուն, մարմնին՝ ծնունդէն ի վեր: Յոգնած կը թուէր եւ խիստ մտատանջ: Կնճռոտած ճակատով, զլուխն հերթափ, վեղարի մէջ՝ լուրջ — գտաւ տուն տանող ծառօթ ճամբան: Քալեց. ետ կեցաւ. քալեց շուրջելով, երթալ—չերթալ լուր: Ու մէկէն կանգ առաւ ցանկապատով եզերուած դրան մը առջեւ: Ներսը պարտէջ էր. ծաղիկնե՛ր պէս—պէս — վառ կարմիր, դեղին, սպիտակ մեխակներ չորս դին: Փոքրիկ մանուկ մը, հետք մեծ քոյրը՝ աչքկապուկ կը խաղային: Տեւտան Կոմիտասը, օտար կրօնաւոր. զարմացան՝ կեցան: Ապա՝ մանչուկը գէպի ներս, տան կողմ պիտի պոռար մէկ ձայն.

— Մամա՛. օ՛ մամա. օտարական մը. օտարական մը. . . .

Կոմիտաս Վարդապետ պէտք չտեսաւ զանդահարելու: Սպասեց, որ լոճ տղուն մօր ձայնը: Ձայնէն առաջ մօտ եկաւ աղջիկը՝ Ծաղկոցին մէջէն ծաղիկ մըն ալ ինքը, կարմիր ժապաւէնի մը թիթեռը՝ մաղերուն զարգաթիւն: Եկաւ մօտեցաւ ու հետզհետէ աչքերը դարձան կապոյտ, կլորիկ այտեր ու անոց աքացանին մէջ պսիկ բերան մը. սուր էր քիթիկը, բայց խարտեալ չէին մազերը: Աչքերը կապոյտով եղան հարցական, սեւեռուն: Պսիկի բերանին շրթունքներն էին, որ կրցան հարցնել.

— Դուք, պարոն, կրօնաւոր էք միթէ:

Կոմիտաս ժպտեցաւ. ժպտը անմէղ էր. տրտում, ինքնամփոփ. պիտի տատանտանէր.

— Այո՛, իմ փոքրիկ օրիորդս. ե՛ս կրօնաւոր...

Ու աղչիկը.

— Դուք, պարոն, օտարական է՞ք...

Կոմիտաս Վարդապետին ժպտը իջած էր պէխի ու մօրուքի միջեւ բաց շրթունքին.

— Ի՛նչպէ՞ս օր կը տեսնես. օտարական այո եւ ոչ...

— Հայրի՞կը կ'ուզէ տեսնել, պարոն կրօնաւոր...

Կոմիտաս Կոնստնցին պէ՛տք է պատասխանէր փոքրիկ աղջկան, որ հաղիւ տասը տարեկան էր. կը նմանէր մէկու մը, զոր կրցաւ յիշել: «Մի՛թէ օր. Կլարան ամուսնացած է»: Այո. դուցէ իրը չեն այս փոքրիկները. բայց աղջիկը փոքրացուած պատկերն էր մեծին, որ երաժշտանոցին մէջ պարոն Քոմիթաս կը կոչէր զինք: Ահա տասը-տասնըհինգ տարիներ գլտրեք են ետեւ եւ ինք չէ զգացեր ժամանակին ոտրալը: Իրը սուրացեր էր. բայց օր. Կլարայինը՝ ահա այս աղջիկով ետ եկեր, կանգնեք էր ամէն օր զիմացը:

Փոքրիկ մանչը կանչը չկրցաւ արդէն շարունակել: Մայրը ձեռքերը սրբելով առջևը կտպած գոգնոցով, կ'իյլէր ահա մուտքի գուռնէն ու արահետ կը կտրէր արագ: Ձէր սպասեր օտարական կղերականի մը: Կոմիտաս Վարդապետին վեղարը ըլլար կարծես վառնալ ազդարարող նշան մը: Կանգ առաւ: Ուզեց եւս դառնալ եւ պատշաճ միճակով վերադառնալ: Ու ինքն իրեն, երբ կը քակէր գոգնոցին կապը կոնակէն, կը հարցնէ. ո՞վ է այս կղերականը, սրուն նմանողներ դուցէ չէր տեսած կեանքին մէջ: Ու քակելով, ձեռքին մէջ կծիկ դարձնելով «Ի՛նչ յիմարութիւն» սոս գոգնոցը. ան հասաւ դրան եւ քանի մը քայլ հեռու կտնդ առաւ:

Կոմիտաս մեղաւոր ժպտի պէս բան մը դրաւ սչեքերուն շուրջ, երբ հարցուց դեռ կինը որոշ եղբակացութեան մը չյանկած.

— Արդեօք չե՞մ սխալիւր, եթէ ըսեմ, թէ դուք, տիկին, կը կոչուիք Կլարա Ֆալր...

Կլարա Ֆալրը — արքայական վիճելով Երաժշտանոցի նախկին ուսանողուհին պիտի պատասխանէր. «Այո, ես այդպէս կը կոչուէի. իսկ դուք, պարոն կղերական, ո՞վ կրնաք ըլլալ» — դրեթէ ուրախ զարմանքով՝ ըսաւ.

— Օ՛, դո՞ւք էք, պարոն Քոմիթաս. ձեր ձայնէն ճանչցայ ձեզ. մինչդեռ այդ գլխանոցին տակ դուք բոլորովին օտար կը թուէիք ինծի... Խնդրեմ, հրամմեցէ՛ք. հրամմեցէ՛ք...

Բացաւ պարտէզին դուռը. իսկ Կոմիտաս Վարդապետ պահ մը տատամտ.

— Միթէ անյարժար չէ՞ր այսպիսի պահու մը ձեզ անհանգստացնելը...

— Խնդրե՛մ, խնդրե՛մ զուգ օտարական չէ՛ք. ամուսինս դործուղման մէջ է. մինակս կը ձանձրանայի...

— Ուրեմն, պարոնը ներսը չէ՞... դուք աւելի յարմար ըլլա՞ր ձգել այցելութիւնս մէկ ուրիշ օրուան:

Դեռ կանգնած տեղն էր: Անգամ մը եւս երկուութիւնը կը սկսէր նկզել դինք — մտնե՞լ, չմտնե՞լ: Ստկայն աիկին կարային տշքերը այնքան կասկոյտ չէին այժմ, կնոջական նայուածքի յատուկ քողարկուած շոգ մը կը ջնջէր կասկոյտը ու կ'ընէր հարազատ լազուրթ ու խողաղ երկինք: Ուստի, վճռեց մտնել: Երկու փոքրիկները, քաղաքավարութեան չէզոքութիւն մը ցոյց կու տային չխառնուելով այս խօսակցութեան: Ու քիչ մը ապշած իրենց մօր վարձմունքէն, կը ջշուէին կրկին խաղին մէջ: Աղջիկն էր, որ կը համրէր մէկ, երկու... երեք... եւ Կոմիտաս Վարդապետին քայլերուն արձագանքը ըլլային կարծես: Տիկին կարան կը քայլէր քովէն.

— Այս ի՞նչ հոյեր են, որ ձեզ մեր ամբողջ նկատած են, — ու մաքուր, խելօք, պղծիկ ծիծաղ մը, որմէ շատեր զրկուած են բնութենէն:

— Կանչուած եմ Միջազգային Երաժշտական Ընկերութեան խորհրդակցական ժողովին. անգամ եմ այդ միութեան:

— Ափսո՛ւ. ես կորսնցուցի կուրսս...

— Ի՞նչ էր պատճառը, — Կոմիտաս Վարդապետ դժոյց դատապարտող հեւքին պատճառը տիկին կարային: Կարճեց հարցումը:

— Այն օրէն ի վեր այլեւս ոտք չկրիսցի երաժշտանոցը...

Հասած էին բնակարանի մուտքի դրանը: Առիթն էր գոցել հին հաշիւ մը: Տիկին կարան հրաւիրեց Կոմիտասը ներս: Բայց Կոմիտաս Վարդապետին աչքը ետեւն էր. պարտէզին մէջ խաղցող փոքրիկներու ձայնին եւ բուրոյ մեխակներուն: Որքա՞ն կ'ուզէր այսպէս ըլլալ նման պարտէզի մը մէջ, հովանիէ մը տակ եւ լամբոյնէր քաղցր խոնջէնք բուրոյ ծաղիկներուն եւ զրէր իր ուսումնասիրութիւնները, փոքրիկ սեղանի մը դրած արմուկը:

— Մէկո՞ւ մը կը սպասէք արդեօք, պարոն Գոմիթաս... ձեր նայուածքը միշտ ետեւ դարձած է: Երաժշտանոցի ուսանող՝ ունէիք այդ բնաւորութիւնը: Տարիները ձեզ փոփոխութեան չենթարկեցին:

— Մի՞թէ չէք տեսներ փոփոխութիւնը, — ըսաւ Կոմիտաս նեղուելով:

— Այդ ուրիշ հարց է. ճշուած տարիքի դործը: Իսկ բնաւորութիւն մը չի՞ փոխուիր միշտ:

Կոմիտաս շլեւիւռ զարկաւ դիտողութիւնը: Պիտի ուղէր հարցնել այժմ.

— Արդեօք, կարելի չէ՞ր նստիլ հովանոցին տակ, պարտէզին մէջ:

— Կարելի էր, բա՛յց... անյարմար է: Մտէք սալոն. հոն կրնաք զգալ ձեզ ձեր տանը...

Կոմիտաս դրաւ բառին հեղնութիւն եւ քիչ մըն ալ խորհրդաւոր չեւտ.

— Մի՞թէ ես երբեքից տուն ունեցեր եմ...

— Հա՛. չիտակ է. կը տեսնեմ, թէ կղերական էք. ներեցէ՛ք, անզգոյշ խօսքիս համար...

Նստեցաւ Կոմիտաս Վարդապետ բազմոցին եւ պէտք էր որ պատասխանէր.

— Այո՛, կրօնաւոր եւ հա՛յ կղերական...

— Ձեր ուսանողութեան շրջանէ՞ն ի վեր:

— Ո՛չ. աւելի առաջ. մանկութենէս ասդին...

Տիկին կարան եւս նստեցաւ, դիմացը, կիսաժպիտը դէմքին, քիչ մը տարտամ դառնութիւն, որոշ բանով մըն ալ սւրբա՛հ հեղնութիւն կար նայ-

ւածքին մէջ: Կոմիտաս Վարդապետ մինչև հոս, բաղմոցին նստիլը ունէր ազատ խօսելու քաջութիւն: Այժմ կ'ամփոփէր իր յուշերը, ի մի կը հաւաքէր խօսքի փշրանքներ եւ կը զգար, որ յանցաւոր էր հոս դալուն: Տիկին Կլարան յաւ որ տեղէն ելաւ զանգ տալու: Կոմիտաս լսեց ոտնաձայն: Դեռաւ տի կէն մը, որուն հազուաժամ արհամարհելի չէր, սակայն կը մատնէր սպասուի ըլլալը, ներս եկաւ:

— Երկու բաժակ օշարակ:

Կինը գնաց եւ Կոմիտաս Վարդապետին վրայ իջաւ կարծես խաղաղութիւն մը:

— Շքեղօրէն կահաւորուած տուն է, տիկին Կլարա. որքա՞ն ուրախ եմ ձեզ այսպէս գտնելով: Մա՞յր էք երկու փոքրիկի:

— Մեծը գեւ կայ, որ չէք կրնար տեսնել: Իր հօրաքրոջ քով գրկըւած է...

— Ուրեմն երե՞ք... Աստուած պահէ, պահպանէ զանոնք...

Տիկին Կլարա մտիկ շրջաւ Հայր Կոմիտասին մօտ թանգին: Ինչպէս կ'ըսեն, խօսքը կտուր ձգեց:

— Կարգաւոր եմ, գիտէ՞ք, պարոն Քոմիթաս ձեր մասին: Մեր թերթերէն մէկը գրած էր երկու տարի առաջ ձեր ելոյթի մասին Պոլսոյ մէջ: Գոմիտասական խօսքեր էին. երե՞ք հարիւր աղջիկ-տղայ՝ մէկ երգչախումբի մէջ... Հաստատէ՞ք, նախանձաւ շարժեց բնթերցումը: Իսկ ես ձեր մասին շատ եմ խօսած ամուսինիս: Հոս ըլլար ձեզ խիստ պիտի պատուէր...

— Ձեր նախանձը կ'ըմբռնեմ, որովհետեւ քիչ առաջ ըսիք, թէ կորսնցուցեր էիք ձեր Լուսինը. բայց ինչո՞ւ ըլլալ շուայլ ձեր ամուսինին մօտ...

— Ամէն մարդ գինք հետաքրքրող բաներու մասին կը սիրէ շաղկապաւոր տեղ, պարոն Քոմիթաս. բնական չէ՞ք գտնէր արդեօք: Դուք հրաշալի ձայն ունէիք. ձկուն մասներ եւ... հետաքրքրական էր, որ դուք այդ օրերուն այս սքեմը չէիք կրեր ձեր ուտերուն:

— Ընդհ. է. քիչ մը անփոյթ էի կոչումիս հանդէպ: Կը խոստովանիմ մեղքս: Սակայն, նորեկ էի. անծանօթ ձեր լեզուն, վարք ու բարքեր: Կրնային մարդիկ ծիծաղիլ վրաս. չէ՞ որ ուսանող էի, ձեզի պէս...:

Տիկին Կլարային աչքերը շարացան. ամպային մշուշ մը կը քողարկէր շարունակներ: Ժպիտը սակայն իրն էր, այն ժամանակներու ժպիտին յար եւ նման: Խնդաց:

— Ո՛չ ոք կրնայ դատաւարտել մէկը, որ մեղք չէ գործած, — Կոմիտաս լուրջ էր. չէր կրնար ժպտիլ, երբ ակնարկութիւնը կը վերաբերէր իրենց փոխարարութիւններուն, որոնք մնացել էին պարզ:

Տիկին Կլարան կ'ուղչէր խաղալ ձեր որսին՝ հեռա, որ եկած էր ուղարկել թակարդ իշխալու:

— Բայց ըսիք, որ մեղք մըն էր գործածնիդ, երկու թապէս խաբելով իմացինը...

— Շատ հպանցիկ մեղք մը, որմէ ոչ ոք կրնայ օգտուիլ «մեղաւորը» պատմելու համար:

Սրահը կիսամութ էր. քաշուած էին վարագոյրները. դուրսը արեւն էր եւ երկու փոքրիկներուն խաղային ճընճուցը, որ կու գար կը լեցնէր Կոմիտասին սիրտը քիչ մը թախիծ, քիչ մըն ալ զգաստութիւն տալով անոր: Կը թուէր, թէ սրահը միշտ զրազուած չէր ըլլար. այսպէս սա կիսամութը ճշդօրէն էր Կլարային գէմը, աշխարհը, շրթունքներուն բաց ու խուփը կը մշուշուէին այդ կիսամութով: Ու ահա հարցումը. «Ինչո՞ւ եկայ հոս»...

— Հոս եկած էք իբրեւ հիւր, կոթնած հին ծանօթութեան մը վրայ: Միտքէս չեմ անցընել ձեզ դատապարտել. ամէն մարդ իր ճակատադրին դըժժած հետեւորով կ'երթայ, — Կլարան էր թարգմանը:

— Ընդհանրապէս չեմ հասկնալ ձեր խօսքը, — Կոմիտաս վարդապետին խօսքերուն մէջ կը թուէր անհասկնալի չափով հոս գալուն:

— Գիտէ՞ք, պարոն Գոմիթաս, ո՞ր, ներողութիւն, ձեզ պէտք է կոչել այսուհետեւ Հայր Գոմիթաս — եւ զուգէ աւելի յարմար է այդպէս կոչելը — ամէն անգամ, որ միայն կու գայ օփերայի թատրոնի տիրոջ առաջարկը, ծիծաղել կ'ուզեմ, մինչդեռ լալտ կու գայ...

— Իբրեւ ի՞նչ:

— Իբրեւ խոշոր թիւրիմացութեան պատճառով, թէ մէկս եւ թէ միւսը: Օփերային տէրն ալ այդ օրերուն, ինչպէս էր իմ սխալիս մէջ:

Կոմիտաս Կոստինացիին բարձր խնդաց. ծայրը առոյգ, մաքրամաքուր հազաք մըն էր: Սրահին կիսամութը թրթռաց. կախուած ջահ մը պղտոր լոյս մը կը մտնէր, շէն գիտելու ուրիշ մտքացած շողերով:

— Որով եւ կը բացատրուի ձեր երկուքին միտքը:

— Ընդհանրապէս, Հայր Գոմիթաս...

— Այո՛, Հայր Կոմիտաս, այսօր եւս եկած էր Պիլիկին, ուսումնասիրութիւններ ընելու եւ յանգանք կամ մեղք դրածած պիտի չըլլար, եթէ այսօր, այսօրեան տար հին ծանօթներու:

— Ե՛ւ մտերմներու, — հեղինակը կար միթէ Կլարայի արտայայտութեան մէջ:

— Նայած մարդէ մարդ եղած յարաբերութեանց ընդմիջին, — վրայ տուաւ Կոմիտաս, — ի՛նչ որ է. եկած եմ հին մտերմի մը, եթէ այդպէս է ընդունուած — որպէսզի քիչ մը դուրս դամ բազմազգացող վիճակէս: Ձեր մըտերմութիւնը, տիկին Կլարա, ինչի համար թանկագին առիթ մըն է խոսակցութեան:

— Ձեռքէ թէ խիստ անմասէր մարդու հոգի կը կրէք, — Կլարան կատակե՞լ կ'ուզէր:

— Սխալ. ամէն բան կարելի է դռնէլ վրաս. բայց անմաստիւթիւնը ծոյլ մարդոց դարձ մըն է. ես ծոյլ չեմ եղած. ապացոյց, որ խմբագրած եմ հաղորդներու հասնող հայկական ղեկավարական երկեր. երբեմն գրած եմ խօսքերը երգին, ինչ որ զիս բանով մը բանաստեղծ դարձուցած է, — բացատրեց Կոմիտաս միտքը նուրբ խնդրեցով մը:

— Բանաստեղծութիւն. քնարերգական, թէ ողբա-հովուական: Պուրջէ փորձած էք զիւցազներգական մոթիֆներ, օրինակ օփերայի համար, — տիկին Կլարան այդ պահուն իշած կը թուէր տարիքի սանդխամատէն տառնեակ մը տարի: Ուսանողուհի է երաժշտական դասընթացներուն եւ ունի նախկին կլորութիւնը այտերուն, քիթը սուր, աչքերուն մէջ երկինք մը կապոյտ, որ վառ գարուն կը յիշեցնէ:

Կոմիտաս վարդապետ կը յիշէր այդ դէմքը:

— Ձարմանալի՛ բան. մեր պեղնկական երգերը սիրոյ վրայ հիմնուած տաղեր են եւ ես, բերքահաւաքս, բնական է, ազդուած եմ այդ մոթիֆներէն...

— Ուրեմն սէ՞ր երգած էք ձեր բանաստեղծութիւններուն մէջ, — տիկին Կլարան նոյն երիտասարդ աղջիկն է. ժպիտը, շրթունքներուն կծկումը, ափը խաբահաչ մազերուն տանելու ձեւը:

— Քաղաքական մեր վիճակը կամ հրօնական խորք կրող երգեցողութիւն մը խոտոր կը համեմատին մեր առօրեայ զգացական աշխարհին: Ժողովուրդը չի՛ կրնար աղագային երգ մը ազատօրէն ըմբռնիլ եւ ոչ ալ կըրնայ շարականային չեղտ գնել իր ձայնին մէջ: Կը մնայ միակ ազատութիւնը, զոր կրնայ ըստ կամս եւ պատեհս արտայայտել, — Կոմիտասին բացատրութիւնը տարտամ էր: Ձգտեցնող գերմանուհին:

— Ուղիղ տղրիւր գիմելու, դուք ինկաք չոր ու ցամաք կածանի մը վրայ եւ չըսիք, թէ ի՞նչ մոթիֆներ են ձեր քերթուածներուն խորքը: Բայց ես կուսնցի. կղերական ձեր վիճակը թոյլատու չէ՞ արդեօք խոստովանութեան:

— Ժողովուրդին քրտին մօտ եւ անոր համար կեանքը զոհող մարդուն համար մեղք չէ, կը խորհիմ, խոստովանութիւնը, — Կոմիտաս Կոտիւնացին լուրջ էր:

— Պուսիօ՞. ես այդպէս ալ գիտէի. Հիմա դադունապահ հարցում մը. ինձմէ բան մը կա՞յ անոնց մէջ...

— Թերեւս՝ այո՛. կամ զուցէ՝ ո՛չ...

— Դարձեալ կը կեղծէք, Հայր Փոմիթաս. մեր ներկայ տարիքները պէտք չունին ծածկելու բաներ, որոնք զգացուած են կամ երազուած երիտասարդութեան սեմին: Դուք ազատ էք ձեր համոզումներուն մէջ: Ես պիտի փնտռէի սակայն պատկերս, օրինակի համար տրուած քերթուածով մը:

Կոմիտաս Վարդապետ կը զարմանար տիկին Կլարայի այժմու քրտացութեան վրայ: Ամուսնական դրութիւնն էր արդեօք իր զգացումներուն կամ լնդունին ազատութիւն տուողը: Ինքն ալ ազատութիւն չէ՞ր գտած իր վարդապետական սքեմով իսկ ապացոյցը տալ նման կատակներ ընելու հարա ու աղկալ կամ դեռատի կնոջ մը ուղղելով փաղաքշական խօսքեր:

— Ինչո՞ւ կեղծել, — չկրցաւ շարունակել:

— Կը կեղծէք, որովհետեւ ձեր ձայնն ու աչքերը այլ բան կ'ըսեն: Առաջինը՝ զող ունի իր մէջ եւ երկրորդը՝ ձեր աչքերը կարօտ մը կը պահեն շողերու ետին. ափսո՞ս, որ այդ կ'ըլլայ ուշացած խոստովանութիւն մը, — տիկին Կլարան պահած էր «ափսոսին» ամբողջ գրաւչութիւնը:

Եկան այդ պահուն երկու փոքրիկները եւ այլեւս անքաղաքավարութիւն չտեսան իրենց ազատ շարժումներուն մէջ: Գրկեցին իրենց մայրը եւ մնացին կախուած անոր վիզէն:

Ժ.

Պատմելով գէպքը, վերյուշը կրնայ մեղանշած ըլլալ, սակայն կոմիտասեան տարեգրութեանց մէջ էջ մը բաց էր թողուած: Վերյուշը հոն գրանցեց Կոմիտաս Կուտիւնացիին սիրտը մխացնող կարօտին եւ ինքնազիր քերթուածներուն առէն տուող սիրոյ բացատրականը...

Օղին մէջ երեւալ կը սկսէր պատերազմի ուրուականը: Ան պոչը գրած էր Պերլինի վրայ եւ գյուխին տակ տուած Աւստրո-Հունգար իշխանագունը, աչք կը թարթէր աշխարհին վրայ: Իսկ Կոմիտաս Կուտիւնացին, որ հայոց երգի աշխարհակալն էր, չէր կրնար նստիլ տեղ մը: Ան պէտք էր գրուէր, նոր-նոր ճակատամարտներ շահէր, որ մնար մեծ, ինչպէս որ ժամանակակիցները կը կոչէին գինը.

— Մեծն Կոմիտաս...

Մեծի տենչանքն էր, սրտին անկեղծորէն լեցնող նոր հորիզոններու
կարօտը, որոնք կ'ընէին իր կեանքը լեցուն, երազները վառ: Հազիւ մէկ-
երկու ամիս եւ ահա ձանձրոյթը կը սկսէր խեղդել զինք: Զգեց Պերլինը ու
աշնան օր մը ետ եկաւ Պոլիս: Սանկրուն կարօտն էր զինք հոն տանողը, թէ
Պոլսոյ դրամաշուքները, Եկաւ տեսաւ թէ՛ ստանքը եւ թէ՛ Պոլիսը: Սանկրուն
ամէն մէկը մէկ դաշնակի առջեւ, մատն ի սաեղ, կը փորձէր խաղը, երգի մը
երանգը կամ ձայնին պաշարը կը լեցնէր շորս կողմ: Գոհ էր Կոմիտաս: Ան-
դամ մը եւս ամէն մէկուն ցոյց տուաւ տօ-րէն կամ քաղեց մինչեւ սին: Ա-
մուռ ու տներէրի դաշտեր շէջին: Ինք իբրեւ հայոց գութան՝ հերկած, բա-
ցած էր խոր ակօսներ տղոց մտքին մէջ: Հիմա անոնք զիտէին լծել, գութա-
նին մասը լաւ բռնել եւ «հորոյ՛ւք» ըսել: Այդ ալ կը բաւէր. ճիշդ ու փոր-
ժեքը ետքը պիտի տային արդիւնք: «Կեցցէք, տղաք, դուք սանե՛ր Կոմիտա-
սի, երբ աշուն ըլլայ եւ ապա ձմեռ եւ ձմեռ ինչ ձեր Կոմիտասի կեանքին
միայն, կրնաք, կարող էք դուք մէկ-մէկ մշակ, հերկել ու հնձել հայ դեղ-
ջուկ երգը եւ մնացեալը...»: Հայոց երգի համար տաք նիւ տունը կա-
տարելութիւն էր: Կոմիտաս վարդապետ տուաւ ձեռք նիւ, ետքէն տալու հա-
մար մնացեալը:

Ու երբ կարգի դրած էր սրտին ուզածը, ի փառս հայոց զիրերու գիւ-
տի հազար հինգհարիւր ամեակին եւ իր աշակերտներու յաջողութեան, զնաց
Գում Գաբու եւ պարտ ու պատշաճ պատարագ բաւ...:

Տենչերով լեցուած եւ կարօտ գործի, ելաւ նաւ նստաւ...

— Հէ՛յ Փարիզ, ո՛ւր ես. ահա ես եկայ, որ տունդ շինեմ...

Հրաւիրուած էր, թէ հրաւիրող, Կոմիտաս գնաց հոն ներկայ ըլլալու
Միջազգային Երաժշտական Ընկերութեան համագումարին: Ներկայ էր իր
բարեկամ Զօպանեանը կառավարողի միջոց: Գրկեց զինք եւ տուաւ անձնա-
սիրական հարցումը:

— Գոհ ես, Կոմիտաս... որ ես կ'ըսէի...

— Դժգոհ ըլլալու պատճառ մը չունիմ, մեծարդոյ Զօպանեան:

— Իսկ քեզ կոչելու էի Մե՛ծն Կոմիտաս...

— Մեծն շատ է մեծ... Կոմիտաս՝ միայն...

— Է՛. բարով ես եկեր քաղաքս այս լոյսի. բերե՞ր ես արդեօք բան մը,
գրութիւն կամ ուսումնասիրութիւն մեր «Անահիտ»ին:

— Ի՛նչ մեղքս պահեմ, շատ բաներ, բայց կէս ու անկատար: Երբ ել-
լեմ բեմը եւ տամ իմ դասախոսութիւնները հայ երաժշտութեան մասին, ա-
մէն մէկ նիւթը «Անահիտ»իդ զուրպան:

— Երկա՞ր պիտի ըլլայ շարքը:

— Ձորս գլուխներով — առաջին՝ հայ խաղաղատութիւնը, — Կոմի-
տաս կը թուէր աչքերը գոցած:

Զօպանեան ափի մատներէն մէկը ծալեց կամ ծալուածներէն մէկը ցը-
ցեց — կտրեւո՛րը:

— Մէ՛կ:

— Հայ զեղջուկ երաժշտութիւնը...

— Սա եղաւ՝ երկու:

— Հայ երաժշտութեան ժամանակի, կլիմայի, լեզուաւորութեան եւ տա-
րազաւորութեան մասին, — Կոմիտաս թուումներուն վերջապէս դրաւ:

— Այս ալ՝ երեք, իր մասնաբաժիններով: Յետո՞յ. շորրո՞րդ...

Կոմիտաս կեցաւ լուռ. ինչո՞վ գոհացնէր Զօպանեանի Անահիտեան

ծակալքութիւնը: Ես քեզի բան մը ըսե՞մ. չորրորդը խորհրդապահական է. վերջէն կ'իմանաս:

Կառամատուցէն մինչեւ պանդոկ, ուր պիտի իջեանէր Կոմիտաս, Արշակ Չօպանեան կախուեցաւ Կոմիտաս Վարդապետին օձիքէն: Է՞. խմբադրամպետ մարդու հետաքրքրութիւն ունէր. մինչեւ չտեղեկանար «խորհրդապահական»ին, հանգիստ պիտի չտար ղիմացիներն:

Մինչ Կոմիտաս, ականջը ձիակառքին անխնայուն հանած ընթերցումը, քիթին տակէն կ'երգէր «Կոռուկ»ը, որ իր մէջ կը խտացնէր ո՛չ միայն հայ ժողովուրդին ցաւերն ու կարօտը, այլեւ մեծ բան մըն ալ կը բերէր իր սրտին դադանիքէն...

— Լաւ, մեծարգոյ Չօպանեան, ըսեմ չորրորդ նիւթին անունը. «Նըշմար կարօտի մասին»: Կարօտը շեղադիր եւ բացառիկ իմաստով...

Ինչո՞ւ էին կառքէն. կը քալէին. կը քալէին մայթն ի վար: Չօպանեան առաջին անգամ դուցէ առանց խորհելու, թէ ղիմացիներ ո՞վ էր եւ ի՞նչ հանգամանք կը կրէր, ըսաւ.

— Հո՛ւ, մայթերը լարծո՛ւն են. բռնեցէք ինքզինքնիդ, որ չսայթաքիք...

Կոմիտաս չըթուեց խածաւ.

— Ընդունի՞մ վարկածը, թէ փորձառու մարդն է միշտ խրատողը կ'ըլլային...

— Է՛, այո. երբեմն պատահած է...

— Ի՞նչ կ'ըսէք, պարոն Չօպանեան:

— Մանաւանդ, երբ մայթը քիչ լուսաւորուած է...

Կեցան. թեւ թեւէն բաժնեցին. նայեցան իրարու, սուր, լրտեսող, խորքը պրպտող նայածքով եւ յանկարծ քա՛հ-քա՛հ մը փրցուցին: Մայթը կենդանացաւ. մարդիկ ժպտով անցան կէս կղերական — կէս աշխարհական խնդացողներուն քովէն: Եւ դեռ չէր մարած խնդուքը, երբ մայթադիմ մը բռնեց պր. Չօպանեանին թեւը.

— Պարոններ, կրնա՞ք վառել սա անպիտան ծխախոտը...

Կարեւորութիւն չտունին կնոջ խնդրանքին. Չօպանեան ապստամբ թեւը թօթուեց եւ երբ կանգ կ'առնէին պանդոկին շքադրան առջեւ, ըսաւ Կոմիտասին.

— Մինչեւ իսկ աստիճանները նոյնքան լարծուն են, որքան մայթերը...

— Կը հաւատամ ձեզ, պր. Չօպանեան. դուք մարդարէ պէտք է ծնած ըլլայիք...

Բաժնուեցան իրարմէ. Չօպանեան խոստացաւ երեկոյեան գալ գտնել ղիմքը:

Իսկ օրը գարնանային էր. տաք, զրգոյիչ, թմրեցնող: Հիմա աւելի շատ կը զգացուէր պատերազմի հոտը: Բոլորին շրթունքին վրայ էր հարցականը.

— Ինչո՞ւ, Է՞րբ, մօ՞տ է... — կարճ կտորուկ, միավանկ, մէկ բառնոց զողոցով մը:

Կոմիտաս Վարդապետին այս անգամ ձանձրոյթը, յոգնածութիւնը, տեղափոխութեան տենչը չէին, որ աճապարեցնել տունին: Հապիւ թէ՛ բրած, վերջապէս էր դասախօսութեան շարքը եւ կը փնտռէր ազատ ժամը, ուր կարենար կեդրոնանալ եւ գրել խորհրդապահականի գիրը, գուցէ մարդկութիւն իր սրտին միակ դադանիքին կտակը — «Նշմար կարօտի մասին» — երբ

Հեռաւոր, անծանօթ գիւղի մը մէջ, ի Սերպիա, դեղակի քանի մը հարուած-
ներով կը զոհանուէր Աւստրո-Հունգար իշխանագունը...

Բայց ինչո՞ւ զնէր տնայարանք իր մեկնելուն մէջ: Փարիզը Փարիզ էր
մնացած գարեբու մէջ պատահած շատ մը կոկիւ-պատերազմներէ: Յեղային
խորականութեան միստիք վարդապետութիւն ալ չէր քարոզուեր հոն: Յրան-
սան եղած էր միշտ խաղաղական, լայնամիտ, մարդկային: Կոմիտաս Կո-
տինացին սակայն չլսեց ոչ մէկ խրատ կամ լաւ խօսք: Մինչեւ իսկ Չօպան-
եան բախտազուշակի իր պաշտօնէն հրաժարած, հարց դրաւ.

— Թէ ի՞նչ ունիս հոն կորսնցնելիք, երբ աշխարհը եռացած կաթսայի
կը նմանի...

— Ի՞նչ կ'ըսէք, պր. Չօպանեան: Հոն ունիմ «Գուսան»ը, իմ «սաներս»,
անկեղծ-լաւ բարեկամներս ու «ծանօթ մտաւորականներ»: Հոս, ես ինք-
դինքս առանձին կը դրամ. «Մահը բնկերովի հարսանիք է» քսած են մեր
պապերը...

— Այդ ծանօթ խօսք է, բայց տեղին չէ բուռած: Ինչե՞ր որ յիշեցիր
քեզ կապող, մարդկային են եւ մարդ, քեզի պէս մտածող... երբ պատե-
րազմ է «Գուսան»ը չի գործեր, սաներդ կը ցրուին ու հետք կը կորսնցնեն.
զրոց-բրոցին դուն ի՞նչ կրնաս ընել. մնացիր հոս, «Անահիտ»ը միշտ կը շա-
րունակէ իր ճամբան. եղբի անոր հետ...

— Չեղա՞ւ... ապրիլ է պէտք եւ ապրեցնել... Ժողովուրդ մը կայ հոն
ծարաւ, ցանկացող, կարիքաւոր. այդ Ժողովուրդին հոգեկան նպաստ պէտք
է տալ, որ դիմանայ ծարաւին, մնայ մէջքը չիտակ բռնած, լքուած լիզայ
ինքղինք...

Ըսին, խօսեցան, բարկացան մէկգմէկու. ապա լռեցին, խորհեցան եւ
տեղի տուաւ անդիմադրութիւնը մէկուն մէջ եւ միւսին մէջ յամառութեան
թուանդ գինին.

— Դուն գիտես, Կոմիտաս, կ'երթաս՝ դեմ. կը մնաս՝ մնացիր, —
ըսաւ ի վերջոյ Չօպանեան կէս խառով, կէս խղճաւար:

Կոմիտաս Կոտինացին կ'երթար նախախնամութեան դժած ճամբով:
Սեւ սքեմը հաղին ահա Լիկեր կանգներ էր քառասունհինգերորդ աստիճանա-
մասին. եղած էր միշտ մինակ. կղերական, կղերականէ աւելի Ժողովուրդի
մարդ, որ պիտի զոհուէր, տքնէր, շարշարուէր, որ մարդիկ գոչէին. «Ապրի
Կոմիտասը, Ժողովուրդի մարդ է»... Իր փնտաւածը. ո՛չ փառքն էր աչքին
մեծ եւ ոչ պաշտօնը Աստուծոյ առջեւ: Այլ՝ փոքրիկ, խոհարհ գերեզմանա-
հող տեղ մը, ուր կարենար զլուխը դնել եւ հանգչիլ յաւիտեան...

Բայց, մինչեւ որ զար այդ օրը, ինք պիտի յօրինէր, գտնէր ու յղկէր,
հասկաքաղ ընող գնչուի նման բեռն անութիւն տակ, աշխատած-վաճառակած
լուրջ մարդու նման քայլէր ու քայլէր, մինչեւ որ հանգիստն ինքը հասնէր
իրեն:

— Է՛, Կոմիտաս ֆան, առիւր ու տուիր ինչ որ դուք էիր հոսկէ ու հոն-
կէ. տուիր եւ դեռ այս լաւ ու բարի ցեղակիցներուդ: Երգեր ու խաղեր, պէս-
պէս «Ես-Նան»ներ, որ ամէն բերան երգ մը ունենայ, աղէկ կամ գէշ օրե-
րուն միշտ սիրտը բանայ... եւ այժմ, ո՛վ դու Կոմիտաս, հասած ես տեղ
մը, կեանքի սանդխամատի քու վերջին կայքին. ժամն է, որ հանգչիս միտով-
ոսկորով ի՛ր յաւիտեանս...

Իսկ մինչեւ այդ պահը Կոմիտաս Կոտինացին կարօտներ ունէր հոս-
հոն ցանցնուած: Տարփանք չէր փնտեր. իրեն համար գրգանք, գորով, մայ-
րական սէր էր պէտք: Փարիզը տաք սիրտ չէր. երբացած ճաշակի տէր էր

եւ պաշտօնական: Անդին Պոլիսը հաւաքական գործով զերկ մըն էր. անոր կարօտին մէջ Կոմիտաս Վարդապետ կը զգար հայրենի տան մէջ թողուած ծեր մօր, դեռատի կնոջ, պանդուխտ մարդու մխիթարանքը:

Մնաս բարովով բաժնուեցաւ. Փարիզէն, Վիեննայի մէջ կուէ ընելու եռք մը շուռ կու գար. Զիլիպպէի մէջ անծանօթ մարդոց շատ երեսներ տեսաւ: Ու մէկէն գտաւ ինքզինք Պոլսոյ մէջ, իր ծանօթ-բարեկամ մարդոց զիրկին մէջ:

— Օ՛, բարով-բարով, մեր մեծ Կոմիտաս:

— Կարօտեր էի, ելայ շուռ եկայ: Ի՞նչ կայ ու չկայ...

Ինչ կա՞ր ու չկար...

— Պոլիսը պատերազմի դուռ կ'անցընէ. կ'ըսեն, կը պնդեն, որ պատերազմի պիտի մտնէ... կու գան օտարներ կը դարպասեն զինք, ոսկեշուղ շրջափաներ կը ճօճին աշտերուն տնջել: Պոլիսը պոռնիկ է, խորամանկ պերճադիճ, սիրոյ անտեղեակ, բայց կիրքով խելառ. կրնայ պատահիլ, հաւանական է, որ մեր ցեղային հաշուոյն բնաւ չաւ չգայ...

Ըսին. կ'ըսէին. իրարու աչքին մէջ կը նայէին: Ոչինչ կար որոշ, յըստակ, հասկնալի: Ամէն ինչ կը թուէր ենթադրութիւն: Ուրեմն Պոլսոյ մէջ կը տիրէր անստուգութիւնը եւ մէկ մըն ալ պատերազմին վախը:


Այնուհետեւ Կոմիտաս զգաց ծաւ-ծաւ, մութ շերտերով պատուած սիրտ մը: Պոլիսը նախկին հոմանուհիի սէր չէր ցոյց տար: Մինչ իր սիրտը, կոմիտասան շինուկով կ'ապրէր, կը տրոփէր: Ձէր զգար կասկածելի բիծեր: Իրեն համար լոյս-խաւար ժամանակ մըն էր:

— Պատերազմի ամպրոպը մէկէն պայթեցաւ Պոլսոյ գլխավերեւը: Դուռ ու պատուհան գոցուեցան: Հաւա՛ր...

Պոռացին սրտեր. անոնց մէջ էր Կոմիտասի մեծ սիրտը:

ՍՄՐԱՏ ՓԱՆՈՍԵԱՆ

(Շար. 6 եւ վերջը յաջորդով)





Առաջներում մերպետներին
Այրում էին խարոյկի վրայ...

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

ԴԱՏԱԿԷՍԻ ՀԻՄՆԸ

•

- 1.- Առաջներում մերպետներին
Այրում էին խարոյկի վրայ...
Հիմա պիտի խարոյկ վառենք մենք ինքներս,
խարոյկ մեզանով:
Աղը կրակ է հանգեցնում:
Բայց մենք պիտի մեր կրակով աղն էլ վառենք,
Որ աւելի բոցավառենք,
Այնպէս բոցավառենք,
Որ չմնայ նոյնիսկ մախիբ ու մնացորդ...
- 2.- Առաջներում մերպետներին
Կա՛մ քարոտում, կա՛մ սպանում էին դանդաղ
Մեր մարմնի մէջ ցից խրելով,
Ինչպէս քորոցն են մխրճում
Թիթեռնիկի եղած-չեղած մէկ օրուայ մէջ...
Հիմա պիտի մենք ինքներս հանգիստ նստենք
Հեռուստացոյց-աշտարակի բարձր ցցին,

Որպէսզի մեր առաւ դէմքերով ու խօսքերով
Մենք ինքներս ցցուենք—մնանք
Ողջ մարդկութեան ականջներում ու աչքերում
Իբրեւ նշխար ապագինման,
Իբրեւ առեջ պատկումի։։

Ասում եմ քեզ, երկրորդելով, երրորդելով
Որ երկնքում իրօք չկան ալ Աստուածներ։
Նրանք վաղուց երկրի վրայ են բազմած
Բայց ո՛չ ուղտի սապատի պէս, այլ ուխտի
Անտանելի բռնի նման, որ մի օր
Ցած կը նետէ համբարատար ուխտն անգամ։
Խոռվութեան սերմը, իբրեւ մանանիս,
Տարածում է երկրից երկիր, վարակում
Մինչեւ անգամ աստուածներին հողեղէն.
Որ մեր հոգում ոտնազնդակ են խաղում,
Որ խրուել են մեր կոկորդում՝ իբրեւ խաբիսի
Եւ մեր լեզուից կախ են տուել կեռերով
Անվերջ նեխո՛ւ, բայց չփտող մի դիակ...
Խոռվութեան սերմը, իբրեւ մանանիս,
Իբրեւ որում մի փրկարար, իբրեւ ախտ,
Ահաւասիկ եւ նրանց է վարակում։
Եւ ահա ե՛ս մանանիսի մի պտղունց,
Մի բուռ որում, ախտի մանրէ մի սրուակ.
Ուզում եմ քեզ ուրախացնել՝ ասելով.
— Երբ աստուածներն են խոռվում իրարից.
Մարդիկ իրար հասկանալ են սկսում։
Ուղեղից... Հասկի համեղ կուտ սարքի
Կուտից՝ կերակուր Հասարակական...
Ասկայն ես այսօր

Ձեմ գրադուելու նման բաներով։
Ես այսօր քեզ պիտի հասկացնեմ,
Քե՛զ, հաւատացնեմ — ինձ վստահեցնեմ,
Որ հենց վաղուանից
Պատուով ու հարցով,
• Բանտարկեալները գազանանոցի
(Փիղից սկսած ու հասած օձին)
Առանց խտրութեան ու տարբերութեան,
Բոլորը պիտի ստանան կարգով
Համապատասխան շփանշաններ,
Եւ... Ինչի՞ համար,
Լուկ համբերութեան...
Շփանշաններ կը ստանան, այսպէս,
Բոլորը,
Գուցէ գերբերից բացի՝

Այն հին էշերից, որ մինչ այսօր
Ձեռն դարձել կարգին լաւ ֆաղափացի.
Երբեմն, դարձեալ, տալիս են ֆացի՝
Իրենց վանդակի մաղերին թէպէտ,
Բայց մէկ չէ՞ միթէ. ֆացի է ֆացին...

Յոյս ունենմ, որ դուք
Ինձ հաւատացիք:

Ուստի թոյլ տուէ՛ք՝ շարունակելով
Ձեզ հաւատացնել — ինձ վստահեցնել,
Որ մշմարտութիւնն իսկոյն ասելով
Դարձել է մի քան՝ այնքան հասարակ
Որքան... ներեցէ՛ք... որքան... միզելը: —
Ուստի ասեմ ձեզ, բարեկամներիս,
Որ այսուհետեւ բացառուած հաշուէ՛ք
Հիւանդութիւնները երկամների՝
Կա՞յ կոչուի, թէ մտայ,
Քա՞ր կոչուի, թէ մատ, —
Մէկ չէ՞ ձեզ համար...
Ուստի ո՞նց չասեմ բարեկամներիս,
Որ այսուհետեւ պէտք չէ սուտ ծախել,
Այլ, ինչպէս ինքս, մէջքիս պոչ կայտել
Ու... քշել կծոյց ճանճերին բոլոր
Դրանք կոչուեն մի՞տք, մտատանջութի՞ւն,
Թէ՞ հոգետագնապ. —
Միթէ նոյնը չէ՞...

Եւ ես.

Վերջապէս.
Էլ ինչպէ՞ս, ինչպէ՞ս,
Ձեզ վհատեցնեմ — ինձ հաւատացնեմ,
Որ տես այսպէս,
Այն դեղին ցուլը,
Որ ուզում էի աշնանը գնել,
Կերաւ այն կանաչ բանջարեղէնը
Որ ուզում էի գարնանը ցանել,
Ի՛նչ չտեսութիւն...

Ուրիշ ի՞նչ:

Ոչինչ:

Ոչինչ էլ քն պիմչ,

Քո պիմչ էլ՝ իմ պոչ

Եւ... ցտեսութիւն...

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ.

ՍՈՒՐԷՆ ՍԱՆԻՆԵԱՆ

Ս Ե Ր Ը

ՅԱՆԿԱՊԱՏԵՐԻ ՏԱԿ

Գ.

Ելիզաւետա Մարկովնայի եւ Արամի միջեւ սկսուեց մի խաղ, որից
անփութները փախչում են, իսկ հասկացողները սիրում:

— Արամ, ինչո՞ւ էք ձեր տնային աշխատանքը լատինական տառերով
գրել եւ ոչ գործական:

— Այդ նախորդութեան խնդիր է, ուսուցչուհի:

— Ոչ թէ ուսուցչուհի, այլ Ելիզաւետա Մարկովնա:

— Ռուսական այդ ձեւով, ձեր անունը գերմաներէն չի հնչում, — դի-
տել տուեց Արամը:

— Պէտք չէ, որ այդ մասին գուք մտահոգուէք, — ցոյց տուեց, թէ
բարկացաւ կինը:

— Այդպէս է, Ելիզաւետա Մարկովնա, — ծիծաղեց Արամը:

— Դուք ինձ ասացէք, թէ ինչո՞ւ էք յամառօրէն լատինական տառեր
գործածում:

— Լատինական տառեր:

— Այո:

— Լատինական տառերն աւելի պարզ են, Ելիզաւետա Մարկովնա:

— Լատինական տառերն աւելի պարզ են, քան հայկական տառերը:
Ինչո՞ւ այն ժամանակ չէք առաջարկում, որ ձեր աղջային տառերը փոխա-
րինուեն լատինական տառերով:

— Լատինական տառերը հայերէնից աւելի պարզ չեն, Ելիզաւետա
Մարկովնա:

— Աւելի պարզ են, Արամ:

— Լատինական տառերը մեր տառերից ո՛չ գեղեցիկ են եւ ոչ էլ պարզ, Ելիզաւետա Մարկովնա, բայց եթէ նոյնիսկ ձեր տեսակէտն ընդունենք, փոփոխութիւններ արապիղծութիւն կը լինի:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ մեր տառերն ստեղծուել են գերազոյն մի ուժի օգնութեամբ:

— Եւ դուք հաւատում էք դրան:

— Մեր ժողովուրդն իր անցեալին կապուած է իր աւանդութիւններով, որովհետեւ մեր անցեալը հերոսական է եւ անդուական: Ժիշդ է, մենք պարզամիտ ժողովուրդ ենք, բայց մենք մաքրամաքուր ժողովուրդ ենք: Մենք երբեք ուրիշին չենք սպանել զբաւելու համար նրա ինչքը եւ հողը: Եւ որովհետեւ անբիծ է մեր պատմութիւնը, ապա եւ անբիծ են նաեւ մեր աւանդութիւնները: Մի ժողովուրդ, որ մօտ երկու հազար տարի արիւն է տուել յանուն իր հաւատքին, ապա եւ այդ ժողովուրդն իրաւունք ունի հաւատալու, որ այդ հաւատքը նրան օգնել է գոնէ տառերի գիւտի նման մի անմեղ ու լուսաւոր գործում, Ելիզաւետա Մարկովնա:

— Դուք աղգային մի քարոզիչի պէս էք խօսում, — ծիծաղեց ուսուցչուհին:

— Թերեւս: Ես սիրում եմ այն բոլորն, ինչ հայկական է, — ասաց նա շատ լուրջ:

— Իսկ հայկականից դու՛րս... — կարմրեց գեղեցիկ օտարուհին:

— Անշուշտ, Ելիզաւետա Մարկովնա: Օրինակ, գերմանական կարգապահութիւնը:

— Որին չես ուզում ենթարկուել, — ասաց գեղեցիկուհին եւ հեռացաւ նրանից:

Նման վէճերը շարունակուում էին, որոնցից Արամը խուսափում էր, վախենալով, որ իր արտայայտութիւնները մէջ սահմանն անցնի:

Մի օր, մի վէճից յետոյ, երբ Արամը նստեց, իր նստարանակցին ասաց կամացուկ.

— Ի՞նչ է ուզում ինձից այդ կինը:

Նրա ընկերը ժպտաց, ուղեց մի բան ասել, բայց ասաց, որ այդ մասին դասամիջոցին կը խօսեն:

Դասամիջոցին, երբ դասարանը զատարկուեց աշակերտներից, եւ երբ Արամն նոյնպէս ուզում էր դուրս գնալ, նրա նստարանակիցը բռնեց նրա թւիկը.

— Նստի՛ր, ես քեզ հետ առանձին խօսելիք ունեմ:

Արամը կարծեց, թէ նա իրենից պարտք դրամ է ուզում, երբ ինքն չուներ, սրտնեղեց.

— Ի՞նչ է:

— Դու ինձ հարցրի՛ր, թէ այդ կինն ինչ է ուզում քեզից, երբ ամբողջ դասարանը հաւատացած է, թէ դու պառկում ես նրա հետ: Հը՞, ինչպէ՞ս է...:

Սկզբում, Արամը չհասկացաւ եւ յետոյ մատով դիպաւ կրծքին.

— Որ ես պառկում եմ նրա հետ, Գերաշնոյ:

Նրա ընկերն ուղղակի հասկացաւ նրան, հատաչեց ծանրօրէն եւ խփեց նրա ուսին.

— Բախտաւոր տղա՛յ...

— Սպասիր, Դու ինձ սխալ հասկացար։ Յետոյ էլ ինչո՞ւ եմ ես բախտաւոր։

— Որովհետեւ նա համալխարհային դեղեցկուհի է... — նորից հառաչեց նրա դասընկերը։

— Ա՛հ, — վրդովեց Արամը, — նա ձեր բոլորի աչքին ալուպէս է երեւում, որովհետեւ մեր կանանց նման չէ։ Օտար է։ Հարեւանի հարսը տան հարսից միշտ էլ շատ աւելի դեղեցիկ է երեւում։

— Ալուպէս չէ, — գլուխն օրորեց նրա դասընկերը, — եթէ հարեւանի հարսն իրապէս դեղեցիկ է, ապա դեղեցիկ է։ Դու նայիր Ելիզաւետա Մարկոֆնայի սրունքներին, գիտե՞րին, կոնքին, թարակ մէջքին, փարթամ կրծքին, դէմքին... Ա՛հ... Հարէր հազար կանանց մէջ, դու հազիւ գտնես նրան կատարեալ մէկը։

Արամը միշտ էլ զարմանում էր, որ իր դասընկերները, որոնք ամէնքն էլ իրեն հոսակահիւցներ էին, աւելի շատ կանանց արտաքին բարեմասնութիւնների վրայ էին ուշադրութիւն դարձնում, քան, ինչպէս ինքը, նրանց հոգիների։ Եւ երբ խօսում էր այդ մասին, նրա վրայ ծիծաղում էին։

— Ասենք նա կատարեալ դեղեցկուհի է։ Բայց ինչո՞ւ ես պիտի համաձայնի ինձ հետ սիրային կապի մէջ մտնել... — փոխանակ նորից հոգու մասին խօսելու, ընկերոջն անկեղծօրէն հարցրեց Արամը։

— Ձդիտե՞ս։

— Ո՛ւ։

— Դու մի ուրիշ կաւից ես պատրաստում։

— Ի՞նչ է այդ։

— Դու գրաւիչ ես եւ աղջիկները քեզ սիրում են։

— Ձեմ կարծում։ Բայց այդ նորից պայման չէ, որ Ելիզաւետա Մարկոֆնան համաձայնի իմ սիրուհին դառնալու։

— Ես եմ տեսել, թէ ինչպէս է նա սիրային աչքերով քեզ լսիւմ դադարեցնում։

— Մենակ քո տեսնելը բաւական չէ նման եղրակացութեան յանգելու համար, — ասաց Արամը։

— Ուրիշներն էլ են տեսել։ Մի՞թէ չեն տեսել քեզ։

— Ասել են։ Բայց ես ծիծաղել եմ միայն։

— Եթէ իրապէս, գեռ կապի մէջ չես նրա հետ, մի ծիծաղիր, այլ փորձիր։ Պիտի յաջողես։

— Գրաւական չկայ։

— Ասացի, գրաւականը քո դէմքն է եւ նրա սէրը քո նկատմամբ, — ասաց ընկերը։

Արամը չէր կարծում, որ իր դէմքը մի առանձին բան էր, եւ յետոյ էլ նրա արուական ինքնասիրութիւնը վիրաւորւում էր, երբ կանայք հետամուտ էին լինում իրեն։ Նա ուզում էր, որ ինքն ընտրէր մէկին։ Նա կարծում էր, որ մի կնոջ կարելի է սիրել ամբողջովին, եւ ոչ թէ միայն այն բանի համար, որ կարելի է հետը պահել։ Այդ վերջինը նա չնացում էր համարում։ Գերմաներէնի իր ուսուցչուհուն նա հաւանում էր եւ շնայած նրանց տարիք-ների տարբերութեանը, պատրաստ էր հետամուտ լինելու նրան, բայց նա հայ չէր, իսկ նա կարծում էր, որ միայն հայ կիներն է, որ կատարեալ կին է։

Այդ մտայնութիւնը դալիս էր նաեւ նրա հօրեղբորից, որը մի քանի տարի առաջապէս էր եղել Գերմանիայում, այնտեղից փախել էր Դանիա։

Թափառել էր Արեւմտեան Եւրոպայի մի շարք երկրներում, եւ յետոյ տուն վերադարձել:

— Միակ կատարեալ կիներ, հայ կիներ է, մնացածները օրատշներ են, — ասում էր փորձուած ժարդու հաստատակամութեամբ հօրեղբայրը:

Մի օր էլ նա իր զարմիկին զգուշացրեց Ելիզաւետա Մարկովնայի նըկատմամբ, երբ այդ վերջինը նրանց այցելութիւն տուեց եւ ինչպէս ինքն ասաց, շատ էր ուզում տեսնել իր մի ուսանողի հօրեղբորը, որը գերմաներէն գիտէ: Նրան լաւ հիւրասիրեցին եւ երկար խօսեցին: Եւ, երբ նրան ճանապարհ դրին, հօրեղբայրը հարցրեց Արամին.

— Ամուսնացած է այդ կիներ...:

— Ասում են, որ ոչ: Բայց ինչո՞ւ ես հարցնում:

Արամի եւ հօրեղբոր փոխյարարերութիւնները պարզ ընկերական էին:

— Արամ, նա շատ գեղեցիկ է, որ լաւ է: Բայց նա «գալլուհի» է եւ աչք ունի քո վրայ: Զգո՞յժ մնայ...:

— Որ է՞նչ:

— Որ չլափի քեզ: Դու գրաւիչ աղայ ես:

— Ուրիշները կարծում են, որ նա արդէն լափում է ինձ... Բայց, ես ինձ լաւ եմ ճանաչում, հօրեղբայր:

Հօրեղբայրը հառաչեց.

— Ոչ ոք չի կարող վստահ լինել, Արամ: Մենք մարդ ենք, ուրեմն եւ փոփոխուող հոգիներ... Նա շատ գեղեցիկ է, քեզ իր հմայքի ցանցում սղահելու համար...:

Դ.

Նա յաճախ էր գլխացու ունենում եւ ունենում էր շատ խիստ տեսակը: Յաւել դալիս էր յանկարծակի: Յանկարծակի նրան թւում էր, թէ մի տներինոյթ ու շար ուժ նրա քունքերն առնում էր հսկայ մի աքցանի մէջ ու ուղղում, սեղմում ցաւից աղաղակելու չափ:

Մի անգամ էլ, գերմաներէնի դասին, նրա հետ պատահեց նոյնը: Նա արորեց քունքերը, արորեց եւ ասլա գէմքը կպցրեց իր սեղանին եւ մնաց այդպէս:

— Was ist los, Aram?, — յանկարծ իր կողքին նա լսեց Ելիզաւետա Մարկովնայի ձայնը:

— Ich habe Kopfschmerzen, — պատասխանեց նա հաղիւ աչքերն ուսուցչուհու վրայ բարձրացնելով:

— Ist das stark ?:

— Schrecklich !:

— Wie shade !:

— Macht nichts !:

Սակայն, Ելիզաւետա Մարկովնան չէր հեռանում նրա մօտից:

— Was sollte ich tun ?, — հարցրեց նա:

Նա չէր սիրում ուշադրութեան կենտրոնում գտնուել: Նա չէր սիրում, երբ խղճում էին իրեն: Երբ իր անելիքների մասին իրենց խորհուրդ էին տալիս:

— Sagen Sie nicht, — ասաց նա, այս անգամ գեղեցկուհուն նայելով լեշտակի:

Երիտասարդ կինը նոր միայն տեսաւ իր ուսանողի միշտ զուգարտ եւ այժմ ցաւից է՛լ աւելի դուռնատուած ու ձգուած դէմքը եւ լուռ բողոքն աչքերում, որն ունենում են հիւանդներն անմիտ տառապանքի դէմ։

— Ach, mein lieber Gott !, — բացազօնէց նա իր կրծքային տաք ձայնով եւ ասիւրի իրար խփեց։

Արամը չէր ակնկալում այդ։ Գեղեցկուհու ձայնում տոնային գորով կար, այնքան ցաւակցութիւն ու ջերմ համակրանք, որ նրա մարմնով տարսուտ անցաւ եւ մի րան փլեց իր մէջ։ Եւ, երբ նա փորձեց իրեն վերադառնել, տեսաւ, որ ինքն ինքը չէ այլեւս եւ ոչ էլ իր զլխի տէրը։ Որ նա այնքան համակուած է այդ օտար կնոջով, որ նրան իր հետ նոյնացած է զգում։ Մոռանալով իր ահռելի զլխացաւը, յանկարծ կեանքն անսահմանօրէն հաճելի թուաց նրան եւ նա գեղեցկուհուն ժպտաց երջանիկ։

Երիտասարդ կինը, որ կնոջական նրբազգացութեամբ, ինչպէս զբոքում, կարգաց նրա հոգեփոխութիւնը, ժպտաց յաղթական, բայց եւ այնպէս հաբցրեց.

— Wollen Sie nach Haus gehen... ? .

— Nein !, — գլուխն օրօրեց Արամը։

— Warum nicht ? Sie sind krank. Nicht wahr ?

Առանց Արամի գիտակցութեան, նրա աչքերը խորհրդաւոր փայլ ստացան։

— Ich möchte nicht den Deutschunterricht verlassen..., — ձայնի այնպիսի երանգով ասաց նա, որ ուսուցչուհին լսեց, թէ նա ասաց՝ «ես չեմ ուղում ձեզնից բաժանուել...»։

Երիտասարդ կինը կարմրեց եւ նոյն խորհրդաւոր երանգով հարցրեց.

— Wirklich... ? :

— Wirklich !, — տաքութեամբ եւ հաստատակամութեամբ պատասխանեց նորաբոյս սիրահարը։

Դասարանը, որ մանրակրկիտ ուշադրութեամբ նրանց էր դիտում ու լսում, հասկացաւ միայն, որ շնաբան իր իրիտ գլխացաւին, Արամը չուզեց տուն դնալ։

— Gut !, — համաձայնեց գեղեցկուհին եւ շրջուելով դասարանին հարցրեց, թէ ինչ է նշանակում «Traumerei» :

Դասարանը լուռ մնաց։

— Արամ, բացատրիր այդ բառը, — շրջուեց եւ ծաղրանքով հարցրեց Ելիզաւետա Մարկովնան։

Նա շատ լաւ գիտէր այդ բառը, բայց հասկանալով Ելիզաւետա Մարկովնայի միտքը, լուռ մնաց։

— Արամ, բացատրի՛ր այդ բառը, — իր պահանջը կրկնեց երիտասարդ կինը։

— Տնորք... , — հայերէն ու բարկացած ասաց նա։

— Բացատրի՛ր դերմաներէնով, — պատասխանեց Ելիզաւետա Մարկովնան։

Նա նստած տեղից սկսեց բացատրել գերմաներէնով։

— Դասարանում խօսելու ժամանակ ոտքի են կանգնում, — դիտողութիւն արեց Ելիզաւետա Մարկովնան։

Մինչեւ ոտքի կանգնելը, նա դիտեց գեղեցկուհուն եւ նրան թուաց, որ նա այլեւս այն չէր, ինչ որ էր մինչեւ քիչ առաջ, մինչեւ այն վայրկեանը, երբ նա այնպէս արցասուցութիւն յայտնեց իր զլխացաւի առթիւ։

— Մի՞թէ ես սխալուել եմ, — մտածեց նա, — եթէ այո՛, ապա ինձ
Համար սկսուելու է տառապանքի մի շրջան:

Ելիզաւետա Մարկովնան, որ նրան էր դիտում լուրջ ու ուշադիր, յան-
կարծ առանց պատճառի ծիծաղեց ծաղրական:

Արամը Հասկացաւ, որ ծաղրուողն ինքն էր:

Ե.

Գերմաներէնի յաջորդ դասից սկսած, Արամի եւ Ելիզաւետա Մարկով-
նայի միջեւ սկսուեց ձգտումի եւ անտեսումի մի շրջան:

Արամը ձգտում էր, խնդրում, ողորմածութիւն Հայցում, իսկ ուսուց-
չուհին խուսափում էր նրանից, մերժում եւ անխղճօրէն ծաղրում նրա ցու-
ցաբերած սէրը:

Գեռ աւելին: Ելիզաւետա Մարկովնան սկսեց անտեսել նրա ներկայու-
թիւնը դասարանում: Առաջներում Արամը դասարանի կենտրոնական դէմքն
էր, իսկ այժմ թւում էր, թէ նա այլեւս դասարանում չէր գտնուում: Նա նրա-
նից, նայնիսկ, դառ չէր հարցնում:

Մի օր Արամը միջանցքում կանգնեցրեց գեղեցկուհուն եւ շուրջը նա-
յելով, կամացուկ ասաց.

— Մի՞թէ չգիտէք, որ ձեզ սիրում եմ...

— Օ՛... — իր նուրբ յօնքերը վեր հանեց երիտասարդ կինը:

— Այո՛... — իր Հոգու ամբողջ անկեղծութեամբ ու ջերմութեամբ,
Համարեա՛ բացառանշէց նա:

— Թե՛ղճ տղայ, — կարեկցութիւն ցուցաբերեց գեղեցկուհին եւ ա-
պա հարցրեց այնպէս, որ կարծես պատանին նրա Հետ իր սիրոյ մասին չէր
որ խօսում էր, այլ իր սերիչ զժողովութիւնների, — այդ գէպքում ի՞նչ կա-
րող եմ անել ձեզ Համար...:

Արամը նրան նայեց զարմացած.

— Այդ ի՞նչ Հարցում է, չէ՞ որ դուք էլ ինձ էք սիրում... — ա-
սաց նա:

Երիտասարդ կինը ծիծաղեց.

— Ես նման բան չեմ ասել, Արամ:

— Իայց ես ասում եմ, որ սիրում եմ ձեզ, — նորից անկեղծութեամբ
խոստովանեց սիրահարը, — ի՞նչ էք ասում այդ մասին:

— Ոչի՛նչ: Շարունակեցէք սիրել, եթէ այդ ձեզ Հաճելի է: Ամէն մի
կնոջ ցանկութիւնն է սիրուել, մանաւանդ ձեզ նման մի Համակրելի երիտա-
սարդի կողմից... Ես դէմ չեմ... Ես ոչինչ չունեմ ասելու... Այդ ձեր իրա-
ւունքն է... — թէեւ ժպտով, բայց անտարբեր ասաց գեղեցկուհին:

— Ելիզաւետա Մարկովնա... — ուզեց խօսակցութիւնը շարունակել
սիրահարը:

Սակայն, Ելիզաւետա Մարկովնան ընդհատեց նրան:

— Այլեւս պէտք չէ խօսել: Մեզ դիտում են եւ կարող են մեզ լսել:
Ուսուցչուհու եւ իր ստանդի միջեւ արդելուած է նման խօսակցութիւն, —
ասաց երիտասարդ կինը եւ զլալով, որ Արամը դիտում է իրեն, աւելի քան,
իր արձանային դիտերն օրօրելով Հեռացաւ նրանից:

Նա վազեց նրա յետեւից եւ Հարցրեց.

— Wirklich es ist traumerei ?:

— Da ! Es ist wirklich... — պատասխանեց զեղեցկուհին եւ մտաւ ուսուցչանոց :

Յաջորդ գերմաներէն դասը դեռ չսկսած, Արամը թողեց եւ հեռացաւ դասարանից : Նոյնն արեց նաեւ միւս յաջորդական դասերին :

Նա ակնկալում էր, որ Ելիզաւետա Մարկովնան իր քաղաքայութիւններէ համար կը պանդատուէր տնօրէնին եւ նրան ուսուցչանոց կը կանչէին : Բայց նման բան տեղի չունեցաւ :

Ջ.

Փետրուարեան վերջերի մի ամպամած ու դորշ երեկոյ, երբ Արամը տնից դուրս էր եկել իր մի ընկերով մօտ գնալու համար, տան առտիճաններէ մօտ տեսաւ Ելիզաւետա Մարկովնային :

Մթութեան մէջ, նրանք հազիւ ճանաչեցին միմեանց :

— Մեզ մօտ է՞ք գալիս, — հարցրեց Արամը :

— Այո՛, Արամ :

— Եթէ եկել էք իմ քաղաքայութիւններէ մօտին դանդաղուելու հօրեղորոս, չպիտի օղնի : Նա չի խառնուում իմ անձնական գործերին, — ասաց նա :

— Ո՛չ, Արամ : Ես եկել էի քեզ տեսնելու : Ո՛րք ես գնում հիմա, — գուցէ փոխարէն զոռոգով խօսեց երիտասարդ կինը :

Սակայն, Արամն այնքան էլ չաղդուեց խօսակցական այդ մտերմիկ ձեւից : Նա աշխատում էր անտարբեր գտնուել այդ զեղեցկուհու նկատմամբ, որի պատճառով նա այնքան տառապել էր հոգեպէս :

— Գնում եմ քաղաք, — ասաց նա :

— Գնանք միասին : Խնդրում եմ ինձ ուղեկցես, — առաջարկեց Ելիզաւետա Մարկովնան :

Արտաքին պատեց նրան : Քայլիւ այդ կնոջ հետ կամ նրա հետ առանձին լինել, նրա երազն էր : Նա կարծում էր, չատ, անշափ չատ բան ունէր նրան ասելու, բացատրելու, լայնօրէն բացելու իր սիրտը : Պատմելու իր սիրոյ մասին : Բայց այժմ, երբ նրանք այլեւս մենակ էին, երբ քայլում էին քաղաքի կիսամութ փողոցներով եւ նրանց վրայ համարեալ ուշադրութիւն դարձնող չկար, եւ նրանց խօսակցութիւնը հասկացող չկար, նա բառ չէր պանդում խօսելու համար :

Ճնշել լռութիւն էր տիրում նրանց միջեւ, մինչեւ որ նա հարցրեց.

— Ո՛րք էք ապրում, Ելիզաւետա Մարկովնա :

— Ձգիտե՞ս :

— Ոչ :

— Եւ դու ինձ հանդիստ չես տալիս, որ ինձ սիրում ես, — ծիծաղեց կինը :

Արամին թուաց, թէ նա սիրել բառը ծաղրանքով ասաց եւ նա վերաւորուեց :

— Ինչո՞ւ էք ինձ ծաղրում, Ելիզաւետա Մարկովնա, — պանդաւտեց նա :

— Ծաղրե՞լ : Ո՛չ, Բայց դու նկատում ես, որ անձրեւ է գալիս եւ մենք թրջւում ենք :

Արամը չէր նկատում, եւ նրա հոգը չէր :

Նրանք մտան մի լայն բակ, ուր ծառեր կային, իսկ ծառերից այն կողմը երկյալականի մի տուն։

— Այստեղ էք ապրո՞ւմ։

Ելիզաւետա Մարկովնան մատը տարաւ շրթունքներին եւ շնչացւեց։

— Պէտք չէ, որ հարեւանները մեր ձայնը լսեն...։

— Այն ժամանակ ես յետ գնամ, — նոյնպէս շնչացաւ Արամը։

— Ոչ։ Արի՛։ Դու թըղուել ես։ Ես ուզում եմ քեզ թէյով հիւրասիրել։ Արամը նորից սարսափեց։ Մենակ մնալ այդ կնոջ հետ, որին սիրում էր, դժուար կը լինէր։

Ելիզաւետա Մարկովնան կանգնեց երկարաւուն տան վարի յարկի վերջին բնակարանի դրան տոջեւ եւ ձեռքի բանալիով բացեց այն։

Ներսում մուկ էր։ Արամը շղթայէր ինչ անէր, երբ զեղեցկուհին նրա թեւնոցից բռնած տարաւ իր յետեւից։ Երկու քայլ շարած՝ նրանք անցան մէկ դռնով եւս։

— Կանգնիր այստեղ մինչեւ լոյսը վառեմ, — նրա թեւը թողեց Ելիզաւետա Մարկովնան։

Յանկարծ լոյս եղաւ եւ Ելիզաւետա Մարկովնան շտապեց իրար վրայ քաշել սենեակի դէմ դիմաց գանուող երկու լուսամուտների վարպետները։

— Հիմա արի եւ նստիր, մինչեւ որ ես թէյ պատրաստեմ, — ժրպտաց նա։

Արամը նստեց եւ նոր տեսաւ, առաջին դրան դիմաց գանուող մի այլ կիսաբաց դուռ։

— Այդ երեւի ննջարան է, — մտածեց նա եւ խորհրդաւոր ու ցանկալի տարում ունեցաւ, երբ յիշեց, թէ ինչպէս իր դասարանակից ընկերներն հնթադրում են, որ հենց այդ սենեակում է, որ նա պառկում է Ելիզաւետա Մարկովնայի հետ։

— Արամ, արի տես մի բան կարող ես տեսնել։ Այս քարեղջափառը չի ուզում գործել, — նրա օգնութեանը դիմեց Ելիզաւետա Մարկովնան։

Նա արթնացաւ իր անուրջներից եւ շրջուեց։ Երիտասարդ կինը կանգնել էր սենեակի առաջին դրան եւ ճակատի լուսամուտի միջեւ ընկած անկիւնում դրուած խոհանոցային սեղանի կողքին եւ նրան էր նայում յուսահատութեամբ կանացի արտայայտութիւնը դէմքին։

Նա ելաւ դնաց եւ մէկ րոպէ շանցած՝ մեքենայական ակութեան սկսեց այրուել, կապոյտ-կապոյտ բոց արձակելով։

Նրանք, երկուսը, թեքուած ակութի վրայ, նրա ժրպտան այրուելն էին դիտում, երբ Ելիզաւետա Մարկովնան ասաց, հասկանալի։

— Քարեղջափառներն ինձ միշտ էլ կանանց են յիշեցնում։ Յամառ են եւ քմայգիւտ։ Բայց, երբ սկսում են այրուել, էլ տյրւում են...։

Արամը ծիծաղեց եւ նրա ծիծաղի շարժումից նրա մաղերը դիպչելով երիտասարդ կնոջ մաղերին, փշաքաղուեցին։

Գեղեցկուհին զգաց այդ։ Ծիծաղեց եւ ուղղուեց տեղում։

Նա նոյնպէս ուղղուեց եւ շփոթումից շիմացաւ իրեն ինչպէս պահել։ Գեղեցկուհին նորից ծիծաղեց եւ խառնեց նրա մաղերը։

— Ոսկի տղա՛յ...։

— Ոսկի՛։ Ի՞նչ է այդ, — հաղիւ իրեն պտնելով հարցրեց նա։

— Բնութիւնը քեզ կատարեալ է ծնել։

— Ձեմ կարծում։

— Հենց այդ քո «չկարծելը» քո կատարելութեան ասպարոյցն է։

Թէ՛յի ջուրն սկսեց հոսել :

Թէ՛յ խմելը երկար տեւեց : Նրանք աւելի շատ խօսում էին, քան ընթրում :

Վերջապէս նա ելաւ տեղից :

— Ծնորհակալութիւն ձեր հիւրասիրութեան համար, Ելիզաւետա Մարկովնա :

Գեղեցկուհին մնաց նստած, եւ սեղանին նայելով հարցրեց :

— Ուզո՞ւմ ես դնալ...

— Այո՛ :

— Դեռ շատ շուտ է... դեռ կարող ես նստել...

Նրա համար ծանր էր, շատ ծանր, նրա հետ լինել, շէնք-դէնքից խօսել, հրք օրում էր նրան եւ մերժուած էր նրանից : Նրա գլխից գուրա չէր դալիս այն միտքը, որ այդ գեղեցկուհին ծաղրում է իրեն եւ հիմա իր բնակարանն է բերել, է՛լ աւելի ծաղրելու համար :

— Բայց եւ այնպէս պէտք է դնալ, — ասաց նա բարկացած :

— Գնանք միասին : Ինձ պէտք է միջանցքի դուռը փակել, — ասաց երիտասարդ կինը, ելաւ եւ քայլեց նրա հետ :

Դրսում ծանր մտք էր : Միապաղաղ խշշոց էր լսում, բայց ոչինչ չէր երեւում :

Նրանք կանգնեցին զետեւյարկ պատշգամբի եզրին : Նա պատրաստում էր հրաժեշտ տալ, երբ գեղեցկուհին ավել երկարեց մի քան րոպէ, պատշգամբից դուրս, եւ ապա յետ քաշելով, ասաց կամացուկ :

— Անձրեւը սաստկացել է...

— Մի՞թէ, — նոյնքան կամաց, բայց մի երեխայի անբիծ անմեղութեամբ հարցրեց նա :

Ելիզաւետա Մարկովնան ծիծաղեց զորովանքով : Իր ձեռք բերած զարդացումի եւ իմացականութեան հետ, նա ի ընդ օժտուած էր կանացի այն մաքրամաքուր հոգեզուգողութեամբ, որը նրան հնարաւորութիւն էր ապրիս ճանաչելու մի տղամարդու այնքան անխալ, ինչպէս որ մի մասնագէտ բուսաբան ճանաչում է անծանօթ ու յանդուրժող տեսակի մի ծառ : Արամին նա հանաչել էր իրենց հանդիպման հենց առաջին ընդունելի : Բայց յետոյ էլ, ամէն մի պատեհ առիթով, երբ նա նրա հոգեկան աշխարհի ու բնաւորութեան նորանոր մանրամասնութիւններ էր յայտնաբերում, սրտանց ուրախանում էր, որ նա այդքան անարատ է, այդքան անկեղծ ու ազնիւ :

— Ինչո՞ւ ծիծաղեցիք, — հարցրեց նա :

— Արամ, դու հենց հիմա մի մանուկի պէս խօսեցիր :

— Լա՞ւ է այդ, թէ՛ վատ :

— Լաւ է, Արամ : Միշտ էլ սքանչելի եմ այն տղամարդիկ, որոնք ե՛ւ խելացի են եւ մանուկի պէս պարզամիտ :

— Ծնորհակալութիւն, Ելիզաւետա Մարկովնա ե՛ւ ձեր հիւրասիրութեան համար ե՛ւ ձեր գովասանքի : Բարի գիշեր, — ասաց նա եւ պատրաստուելով հեռանալ, խօսարհուեց գեղեցկուհուն :

— Ո՛չ, Արամ : Հիմա դու չես կարող դնալ, կը թրջուես, կը հիւանդանաս, — հարապատի հոգացողութեամբ ասաց երիտասարդ կինը եւ բռնելով նրա թեւոցից՝ պահեց նրան :

— Անձրեւն այնքան էլ մեծ չի երեւում, — ասաց նա :

— Մեծ է, Լսո՞ւմ ես, թէ՛ ինչպէս է խշշում :

— Ես սիրում եմ անձրեւի տակ քայլել, — ասաց նա :
 — Բանաստեղծ լինել, չի նշանակում տարուայ այս հղանակին մինչեւ ոսկորները թրջուել, Արամ, — ծիծաղեց կինը :
 — Ա՛հ, ոչ : Այդ բանը, նայնիսկ, իմ մտքովը չի անցել, — պաշտպանուեց նա :
 Գեղեցկուհին նորից ծիծաղեց .
 — Տեսնո՞ւմ ես, թէ դու ինչքան պարզամիտ ես, Արամ : Ես միայն կատակեցի, իսկ դու արդէն փորձում ես արդարանալ : Բայց, զնանք :
 — Ո՞ւր, — հարցրեց նա :
 — Ինձ մօտ, էլ ո՞ւր, Dumkoph :
 Նա սարսուաց : Գերմանացիք այդ վերաւորական ածականով կոչում են նրան, որին շատ են սիրում եւ շատ մօտիկ դրում :
 — Մինչեւ ե՞րբ ձեզ մօտ, Ելիզաւետա Մարկովնա, — հարցրեց նա :
 — Մինչեւ անձրեւը դադարի :
 — Իսկ եթէ չդադարի :
 — Այն ժամանակ մի բան կը մտածենք : Ե՛կ :
 Հայկական գիշերուայ այդ մթնամթից, պարնանային անձրեւից, անձրեւի անուրջներ յարուցող խլչոցից, այդ օտար զեղեցկուհու տաք ու կրծքային չինջոցից նա այնքան էր ազդուել, որ իրեն երազում էր զգում, երբ հետեւելով հրիտասարդ կնոջը, նրանք նորից վերադարձան նրա բնակարանը :

Ս. ՍԱՆԻՆԵԱՆ

(Ծար. 2)



Ա Ն Շ Ր Զ Ա Ն Ա Կ

Կը բաւէ աչք մ'ունենալ,
 սեւ կամ կապույտ
 ջլապինդ-
 կրնաս մաշտ արեւներու միշտ ուռնացող հրայրբէն
 խանձուած աչք մը սրսալ
 եւ ըստ բախտի
 գոյն մը ըմտրել:
 Պահ մը մոռցիր անասական գոյները ցայտում
 որոնց համար
 օրերդ անծայր
 քրտինքներով շողեցիր դում,
 յետոյ, ընկե՛ր,
 առ մուրն եւ գամ
 եւ շատ կայտառ հարուածով
 Սպանացի *Կլեմէնտ*ի վիզէն կախէ
 մէկ հատիկ աչք
 հաստ պարանոթ,
 աչքն անարատ:
 Բայց դեռ յդի նոր տեղերով...



Մութնայութին
 երբ ճննդուկը կողակիցէն համբոյր կտցեց
 ամձայն իջաւ երեկուն,
 դում ալ իր հետ
 մայրին վրայ ծաւառած,
 կռշկռած ափդ բացած՝
 պնեղ մը յոյս մարացիր
 ծիածանին լոյս գոյներէն
 որ ժամ մ'առաջ աչքերուդ մէջ քուն մտաւ
 ու մութին հետ
 ուրուականներ ընդունեցիր
 եւ ցած ձայնով
 հեքիաթն իրենց հիւսցիր:

Աչք մ'ունենալ վերջապէս,
 Թէկուզ անգոյն,
 Բայց միշտ արթուն
 մէկ հատիկ աչք
 անշքանակ
 աշխարհներում
 մարդոց համար...

Անշքանակ աչքս մէկ հատ
 եւ պիտ' պարզեմ
 բոլոր-բոլոր
 ու կենացդ պարպելէ ետք
 աչքս բեկոր
 արիւնիս մէջ պիտի ցանեմ
 մարդոց անբան ուղեղներում մէջ ֆարաքած
 լոյս պիտ' ցայտեմ,
 ու փայփայտած
 բաժակն ամուշ
 արժանաբար դուրս պիտ' նետեմ
 եւ օրերս երբ փշրուին
 անպայման որ,
 մայրիմ վրայ
 բոլոր շունքն ինձ մեր քաղին
 երդիքիս տակ
 իմ օրերս պիտ' յօշոտեն
 պատու-պատու,
 եւ պատուհանս պիտի կղպեմ
 պիտ' ծիծաղին մարդիկ անմարդ,
 բայց հաւատա՛,

որ ճայներու քարձումին հետ
 կրկին, կրկին պիտ' արարեմ
 ես համեղուն
 շունչն այս թնձեռն

միշտ աչքիս պէս :
 Պիտի ըլլայ անշքանակ
 աշխարհ մը լոյս
 աշխարհ մը ռճ :
 Ռդեղներու քառակուսի աչքերուն մէջ՝
 անշքանակ շունչը արեւ
 ես պիտ' ըլլամ :
 Պիտի ըլլամ արեւէն վեր
 վե՛ր,

միշտ վեր
 անդունդներու մէջ տարաբեր -
 մարդոց համար
 աչք անհամար
 միշտ քարերէր,

նայն մարդերուն
 խօսքն առաջին
 քայց աչք վերջին
 պիտի ծնիմ միշտ աչքիս պէս
 արեւ, արեւ
 անշքանակ...

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ



Իմացական Հարժուժ

ՆԱԲԵԿԱՑԻՒ

ՎԵՐԱՃԱՆՈՒԿԱՅԹՈՒՄԸ

Նարեկացիին կատարած վազգէն Գէորգեանի թարգմանական նմոշներուն հոս աւ հոն հանգիւ-
պած բոլոր մարդոց պէս, մենք եւս անհամբի-
րութեամբ կը սպասէինք այդ աշխատանքը ամ-
փոփոջ հաստիւն, որ այս տարի լոյս ընծայուե-
ցաւ «Հայաստան» հրատարակչութեան կողմէ եւ
վերջերս հասաւ Պէյրութ:

Վազգէն Գէորգեանի թարգմանութիւնը Վաս-
նան օգրքերգութեան զործին ամբողջութիւնը չէ,
միջին ծաւալով հաստիւն մը հարիւր քսանհինգ
էջերուն վրայ փոռած հատընտիր փունջ մըն է,
Վասնանման շուրջ մէկ շորթորդը ներկայացնող
աշխատանք մը: Սակայն, հակառակ այս սակա-
ւութեան, Վազգէն Գէորգեանի վերածուծին մէջ
կը շողափայլի Նարեկացիին՝ իր հանճարին բո-
ղանդակ ցոլութիւնը:

Վասնան օգրքերգութեանը ասկէ առաջ աշ-
խարհաբարի վերածած են թուրքոմ եպո. Գուշագ-
եան (1926), Գարեգին եպո. Տրապիզոնի (1926) եւ
Մկրտիչ Խերանեան (1980): Վազգէն Գէորգեան
մեզի ծանօթ շորթորդ թարգմանիչն է, որ մեռ-
եալ է Նախորդներուն հետ անհամեմատելի ար-
դիւնք մը, հարեկեան փայլուն յաջութեան մը:

Յոյժ տալու համար Նարեկացիին աշխարհա-



բարի վերածող աշխատանքներուն աստիճանական
զարգացումը, հետագայ էջերուն մէջ կը ներկա-
յացենք շարք մը նմոշներու երեք տարբեր մը-
շակումները: Պարզապէս հիմնալի են դործին բո-
նագրային ուժը, թափը, ամբողջ փարթամութիւ-
նը, հոն սառապող հողին խունկն ու ճեններու-
մը յայտնակերպող Վազգէն Գէորգեանի թարգ-
մանական նմանները:

Թարգմանիչներուն տողերը կարգալէ առաջ,
ջերմապէս կը յանձնարարենք Վազգէն Գէորգեա-
նի աշխատանքը արժեւորող Ռաֆայէլ Իշխանեա-
նի գեղեցիկ էջը:

ՆԱՐԵԿԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ

Երբ մի քանի տարի անալ Վաղգէն Գէորգեանը սկսեց կարգով նարեկից իր կատարած փոքրիկ թարգմանութիւնները, շատերի համար պարզ եղաւ, որ միջնադարեան այդ անպակաս 'երկը' այսօրուայ հայ ընթերցողին մատուցելու Երաւալի եղանակ է գտնուած:

Վ. Գէորգեանի թարգմանութիւնների մի կարեւոր առանձնապատկերն այն է, որ նրան յաջւում է ոչ միայն աշխարհաբար ճիշդ վերարտադրել նարեկացու երկի խորքային քաղժառարտութեամբ ասողը եւ նրա արտայայտութեամբ ժողովրդը, այլեւ յաճախ թարգմանութեամբ խոսքի մէջ պահպանել նարեկացու այն զարմանալի շողարձակումը, շուէլը, որ այդ 'ստեղծագործութեան' էութիւնն է, նրա արժէքը: Մենք գործ ունենք աշխարհաբար Նաւեկի թուրքերին նոր սրահի հետ, որով ժամանակակից հայ ընթերցողը, իրօք, սկսում է ճանաչել իր գրական մեծագոյն հանճարին:

Այժմ արդէն նարեկի հատուածները կարդացւում են ոչ միայն զբոս հարկին կամ գծանթանալու համար, այլեւ մեծ սիրով, յաճախ ոգեւորութեամբ ու յափշտակութեամբ: Ետեւորը արդէն բերանացի գիտեն այդ հատուածները, որոնք աւելի եւ աւելի յաճախ են արտասանւում բնօրինակ, հետաւորապես թանկ, ռազիոյով, թափանցում են գլուխը: Նարեկացին հայ միջնադարում գտնուում է ճանաչուած, սիրուած քանստեղծ:

Երբ համեմատում ենք Վ. Գէորգեանի թարգմանութիւնները բնագրի հետ, նկատում ենք, որ բնագրից շեղումներ չեն կատարւում: Զգացւում է թարգմանիչի ձգտումը ամէն մի նախադասութեան ճշգրտորէն դարձնել աշխարհաբար: Օրինակ, հոմանիշ մակդերների շարքերը, որոնք նարեկի լեզուի կարեւոր յատկանիշն են, մեծ ժառամբ դժուար թարգմանելի, նախորդ թարգմանիչների կողմից սովորաբար լրիւ չէին թարգմանւում, մակդերների շարանում 'կրճատումներ' էին կատարւում: Գէորգեանը բնագրային մակդերները իր թարգմանութեան մէջ պահպանում է գրեթէ ամբողջութեամբ:

Ի հարկէ, Վ. Գէորգեանի յաջողութեան գագաթնօրէն նաեւ մեծ ու շափազանց կարեւոր աշխատանքն է, որ կատարել են նարեկի նախորդ թարգմանիչները: Գէորգեանը իր թարգմանութեան մակարդակին հասել է բարձրանալով նախորդների ստեղծած աստիճաններով:

Բայց պարզ է նաեւ, որ նոր թարգմանութեան գլխաւոր պատճառը թարգմանիչի մէջ է: Գէորգեանը լատի է սիրում նարեկացու զՄատնանքը եւ լատ լաւ գիտի քննադիրը, մտածել է նրա ամէն մի նախադասութեան, բառի վրայ, իր համար մեկնել դժուարեմբարունելի հատուածները, իսկ լատ ու լատ հատուածներ լաւ յիշում է անգիր: Թարգմանիչն օգնում է հայերէնի բառապաշարի եւ գրաբարի արտայայտչական առանձնապատկերներին խոր իմացութիւնը, նրաւոր է այն, որ Վ. Գէորգեանն ինքն ունի բանաստեղծական տարրեր (հանգչաւ է 'եկել' ինքնուրոյն գործերով):

Թարգմանութեան պատճառ է նաեւ երկխոսութիւնը գործի նկատմամբ, նարեկացու երկի ամէն մի տողի, բառի, երանգի նկատմամբ պատկառանքը, գրաբարեան միտքի գիծաց աշխարհաբարեան հետեւոր տարրերակներէց լատպոյնը գտնելու անխոնջ որոնումը, 'ստատպանքը', թարգմանածի անընդհատ քարեկանումը:

Վերջերս Վ. Գէորգեան փորձեց աշխարհաբարի վերանել նաեւ նարեկացու տաղերը: Այդ փորձն էլ լաւող էր, եւ ընթերցողը կարող է յոյս ունենալ, որ առաջիկայում կ'ունենայ նարեկացու ստեղծագործութիւնների մի հոյակապ փառն էր սեղանին:

ԳՆԱՆԱՅԻՆ ԻՇԽԱՐՀԱԲԱՐ

ԲԱՆ Գ.

Ա.

Ու տակաւին ուրիշ ի՛նչ տնուշ աղբերացումներ, որոնք Գենէ մե-
դի կու գտն, եւ զորս պիտի լուսաբանէ շարքը հետագայ ճառերուն, որոնց-
մէ, ո՛վ երանութիւն, զիտեմ, թէ Դուն հաճոյք կը զգաս իմ փրկութեան
համար, իբրեւ պարարտութենէ մը առթուած ախորժատենէ զգացումով. ո՛չ
թէ որովհետեւ իմ անտիպատուատ երգովս կը փռատորուիս Դուն, այլ
որպէսզի իմ այս փոքր աղերսը առիթ ընեն Գու մեծ փրկազօրծումիդ:

Թարգմ.

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ

.*

Եւ դեռ ինչ որ դու ներշնչում ես մեզ քաղցր թխումով,
Որոմք մեր յաջորդ առերում պէտք է որ լուսաբանուեն:
Որով եւ պիտի դու զուարթանաս իմ փրկութեամբ, ո՛վ երանութիւն,
Այսպիսի զգացմամբ լցուած լինելի:
Դատարկ բառերով հիւսուած երգով չէ, որ փառաւորում ես դու,
Այլ իմ այս փոքրիկ աղերսը քող որ դառնայ մի պատմառ քո մեծ փրկութեան:

Թարգմ.

ՄԿՐՏԻՉ ԽԵՐԱՆԵԱՆ

.*

Եւ դեռ ինչե՛ր կամ քո կողմից մեր մէջ
Կայլաւոր անլուռ՝ անուշ հոսանքով,
Որ պիտի ասուեն ու լուսաբանուեն յաջորդ մասերում:
Դրա շնորհիւ, ո՛վ երանութիւն
Ինձ փրկելով՝ դու կը զուարթանաս,
Հանց ախորժատենէ մի հաշակումից.
Ո՛չ, անշուշտ, շոյուած սնտիպատուատ
Երգերիս դատարկ փառաբանութեամբ,
Այլ իմ փրկութեամբ, որ պիտի գործես՝
Առիթ դարձնելով աղերսն այս փոքրիկ:

Թարգմ.

ՎԱԶԳԷՆ ԳԵՈՐԳԵԱՆ

ԲԱՆ Ի.

Բ.

Արդ, Դուն որ ընտիր բարութեանց անկշիռ շափն ու սահմանն ես,
Քու բարութիւններուդ փոխարէն՝ քուկիններէդ Քեդի ախորժելի գոգնատի
կնդրուկներ ընդունեցիր. իսկ ես նոյնքան յոգնակրկին բարդ ի բարդ պար-
տաներ՝ ինծի արժանի: Եթէ անմեղներն անգամ իրենց աղօթքներուն մէջ
այսպէս կ'արտայայտուէին, ուրեմն ինծի պէս ամենազոնեայ եւ յաւէտ վրի-
պական մեղաւորին համար գորովական խօսքերու թ'նչ շարք եւ տողեր պէտք
է հիւսիմ:

Թարգմ.

ԹՈՐԳՈՄ՝ ԵՊԻՍԿՈՊՈՍ

* *

Արդ, ընդունցիր դու, ո՛վ անկշիռ սահման ընտիր բարութեանց,
Դոյիններէդ վեր առար կնդրուկներ անորժանուշ՝ քեզ համապատասխան,
Իսկ ես ստացայ այստեղ բազում պարտաւանգներ սրանց դիմաց՝ կրկնակի
բարդութեամբ:

Եթէ անբիծներն յանձն էին առնում այսպէս աղօթել,
Իսկ եւ պարսաւի ի՞նչպիսի տողեր հիւսեմ ինձ համար,
Արբ քան բոլոր դժմաբարձներն առաւել վրիպեցի:

Թարգմ.

ՄԿՐՏԻՉ ԽԵՐԱՆԵԱՆ

* *

Ընտիր բարութեան ո՛վ անկշռելի անսահմանութիւն,
Արդ, ընդունցիր քո ընտրեալներից
Դու քեզ արժանի ու ախորժելի բոլոր կնդրուկի,
Լի՛նչդեռ ես այստեղ, ըստ արժանիքիս,
Ստացայ միայն դրա համեմատ
Բազմակրկնակի բարդուած պարսաւներ:
Բայց եթէ այսպէս անբիծներն էին մտնւ աղերսում,
Հապա ինձ համար որ դժմաբարձ
Բոլոր մարդկանցից խիստ վրիպեցի,
Նախատիւնների ի՞նչ տողեր հիւսեմ:

Թարգմ.

ՎԱԶԳԷՆ ԳԷՈՐԳԵԱՆ

ԲԱՆ ԻՆ.

Բ.

Բազմոցներուն նստարանները ինկան դնացիներ. վանդակապատին վա-
յելութիւնը քանդուեցաւ. գահաւորակ հանդստարանը տակնուվրայ եղաւ.
առխտակներուն շարուածքները իրենց կցորդութենէն անջատուեցան. պըն-
դող բեւեռները քաշուեցան. ու այս ամէնուն հետեւանքը՝ ողբերու այս յի-
շատակարանը եղաւ ինծի համար: Նաւուղիդը նաւուն դիմացը գեղերելով
կ'ողբայ. ձեռքը ծնօտին դրած՝ արցունքի գետեր կ'իջեցնէ: Մնացած սակա-
ւաթիւ բեկորները, փոթորկուած ծովուն ծփանքներուն ծայրերուն վրայ,
խողխողուած էակներու պէս, ողորմագին թախծանքով կը հեծեն:

Թարգմ.
ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ

✽

Վայելչագեղ վանդակապատն իջաւ յատակ.
Շուռ եկաւ գահաւորակն հանգստաւէտ.
Իրար կպած տախտակաշարքերն անջատուեցին իրարից,
եւ նրանց ամրապնդող բեւեռները ելան:
Ողբերի յիշատակարան դարձած արդիւնքն ինձ նմանուեց:
Նաւապետը դէմ-յանդիման նաւի՝ դեգերում է, ողբում,
Ձեռքը ծնօտին դրած՝ արցունքի գետ է հոսեցնում:
Նաւից մնացած սակաւաթիւ բեկորները ալեկոծ ծովի ծփանքի վրայ
Բանականների նման խողխողուած՝ հեծում են քախծուտ ու ողորմագին:

Թարգմ.
ՄԿՐՏԻՁ ԽԵՐԱՆԵԱՆ

✽

Վայելչակառոյց վանդակապատը հիմքից կործանուեց.
Հանգստարանի գահաւորակը քարուքանդ եղաւ.
Տախտակաւածը ի սպառ քայքայուեց.
Պնդիչ գամերը դուրս թռան տեղից:
Արդիւնքը դրա մնաց ինձ համար
Որպէս ողբերիս յիշատակարան:
Իսկ նաւավարը նաւի դէմ ու դէմ
Ձեռքը ծնօտին դեգերում է դառն
Արտասուքների գետեր թափելով
Եւ նշարելով խորտակուած նաւի խեղճ բեկորները,
Որոնք խողխողուած բանականի պէս
Տարուբերում են ալեկոծ ծովի ծփանքի վրայ,
Հեծում է անվերջ ցաւագին քախծով:

Թարգմ.
ՎԱԶԳԷՆ ԳԷՈՐԳԵԱՆ

ԲԱՆ ԻԹ.

Բ.

Տխուր դէմք, հուսալուծ հանգնիչ, ցամաքած խոնարհութիւն, երբեքացած շուրթ, անշնչացած տիպ, տրամադ չողի, այլայլուած ձայն, ծռած պարանոց: Առանց պլիւսայլի աւելի՛ ուղիղ պիտի բլտար ըսել՝ միտք մը՝ որ չի կրնար տնքարտաւանդիլ, սիրտ մը՝ որ չի կրնար հպարտանալ, թշուառ մը՝ որ չի կրնար պարգեւ խնդրել, ծարաւած մը՝ որ չի կրնար քղերսել, դեգերած մը՝ որ ինքզինքը կը կշտամբէ, սոված մը՝ որ իրաւամբ կը մերսել, ւաղցած մը՝ որ արդարօրէն կը լլկուի, հարուածուած մը՝ որ պապշտածօրէն դատաւարտուած է, արժանապէս արտաքսուած մը, եղիկի մը՝ որ իր անձը կ'անիծէ:

Թարգմ.

ԹՈՐԳՈՒ ԵՊԻՍԿՈՓՈՍ

*.

Տխուր դէմք, շիջած նառագայք, ցամաքած խոնարհութիւն, ճիւղարած
անշնչացած տիպ, տխրամած հագի, այլայլուած ձայն, ծռած պարանոց:
Եթէ մէկը իսկական ճշմարտութիւնը ցոյց տայ,
Ձի ստի, ասելով՝
Անբարտաւան միտք եւ անկարտ սիրտ,
Ու չիմի՛ պարգեւ խնդրելու անկարող քշուառ եւ աղերսելու ծարաւեայ:
Ինքնակշտամբ դեգերող, իրաւամբ չսովեալ,
Արդարաւրէն ւաղցած, պատշաճադատ հարուածեալ,
Ինքնակալ մահապարտ, արժանապէս արտաքսուած եւ անձնանկէ՛ծ եղկելի:

Թարգմ.

ՄԿՐՏԻՉ ԽԵՐԱՆԵԱՆ

*.

Տխուր կերպարանք, շիջած նառագայք, ցամաքած խոնարհութիւն,
հստակ ցամաքած հիւսիսիւն,
Չորացած շրթունք, անշնչացած տիպ, վշտագնած հագի,
Այլափոխուած ձայն, ծռուած պարանոց:
Բնաւ սխալուած չէր լինի, եթէ մէկն ասէր ճան,
Անբարձրախոս միտք ու անկարտ սիրտ,
Պարգեւ խնդրելուն անիրաւասու երկնոս տառապեալ,
Աղերսանքների իրաւունքից զուրկ ծարաւատողը,
Ինքնակալարակ քափառաշրջիկ, արդարաւրէն մարծուած
սովանար:
Ինքնանահատակ մահապարտ մի եէ՛ք,
Արժանապատիւ մի վտարանդի,
Անձնանկէ՛ծ քշուառ:

Թարգմ.

ՎԱՁԳԷՆ ԳԵՈՐԳԵԱՆ

ԲԱՆԼԻՐ.

Գ.

...Քու անձկալի անունդ խոստովանող ծառայիս նկատմամբ Քու սիրալիր զթուփեանդ շնորհիւ՝ ձմրան խիստ հովերը պիտի փոխուին հանդարտ օդի, սասակալունչ մրրիկները՝ քաղցրախորժ սիւքի, երկխախտան կասկածները՝ մեծայայտ վստահութեան, եւ պատիժներու պատուհասը՝ երանութեան վայելումի, թախանձի վտանգները՝ հողեւոր խրախճանութեան, ծփանքներու ալեկոծութիւնը՝ խորին խաղաղութեան, ու թեւաբկող զեկերը՝ պիտի առաջնորդեն անբոյժ նաւահանգիստը:

Թարգմ.

ԹՈՐԳՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

..

Գթառատ սիրով, ծառայիւ հանդէպ, որ դաւանում է անունդ անձկալի, Թող որ խտաշունչ հողմերը ամրանալ փոխարկուեն հանդարտ մեղմաշունչ օդի, Սաստիկ մրրիկը՝ ախորժ գեփիւտի, Կասկածներն երկշոտ՝ մեծ վստահութեան, Իւ պատիժների պատուհասները՝ երանութեան, Թախճաղին տագնապները՝ հոգեւոր խրախճանքի, Ալեկոծութիւնները ծփանալու՝ խորին խաղաղութեան, Իւ զեկի թիավարումները՝ ապահով նաւահանգիստի՝ հասնեն քող:

Թարգմ.

ՄԿՐՏԻՃ ԽԵՐԱՆԵԱՆ

..

...Թո՛ղ որ գորութեամբ գթառատ սիրով՝ ծառայիս հանդէպ, Որ դաւանում է անունդ անձկալի, Ձմրան քաշունչ հողմերը փոխուեն մեղմաշունչ հողմի, Խօլ մրրիկները՝ ախորժ գեփիւտի, Ահն ու տագնապներն այս չարակալած՝ մեծ վստահութեան, Աղէտը պատժի՝ անանց բերկրութեան, Վիշտն ու թախիժը՝ հոգեւոր անհատ խրախճանութեան, Ալեկոծութիւնն այս փոթորկայեղ՝ խոր խաղաղութեան, Ու թեւարկումներն հասցնեն անվրէպ, Ապահով, անդորր նաւահանգստի:

Թարգմ.

ՎԱՋԳԷՆ ԳԵՈՐԳԵԱՆ

ԲԱՆ ԿԳ.

Բ.

Դուք՝ որ գիտեմքին ամբողջ թանձրութիւնը կը դրդէս, ալիքներուն վրայ շարժող մակոյկի մը պէս, որով բոլոր արարածներուն կը հասկցնես, թէ աներկբայելի ես եւ քու զօրեղ խօսքովդ կ'ամբապնդես ամէն բան. դուք՝ որ մեռած մարմինները հողին մէջ կը թաղես եւ զանոնք անկորուստ պահելով՝ վերստին կը կենդանացնես. դուք՝ որ սպականացում կու տաս եւ անմահը կը ստանաս. դուք՝ որ մարմինին մահկանացու նիւթին հետ կեանքի նշխարը կը խառնես. դուք՝ որ միայն ակնարկելու հրամանովդ՝ խուն վայրկեանի մը մէջ կազմեցիր ու պնեցիր բոլոր եղանակներուն անզարդութիւնը:

Թարգմ.

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՍՍ

*:

Ալիքների վրայ տատանուող փափրկ մակոյկի նման,
Դրդյալս ես դու հաղագանցումս թանձրութիւնն անբաւ,
Որով բովանդակ արարածներին ծանուցում ես, թէ կաս աներկբայ,
Եւ ար քա զօրեղ խօսքով ես հիմնել տիեզերքն համայն:
Սերմանում ես դու մեր անշնչացած մարմիններն հաղում,
Եւ այնտեղ նրանց անկարուստ պահելով՝ կենդանացնում կրկին,
Ապականելին հաղին պահ տալով անեղծն ստանում,
Դու մակամացու նիւթի հետ կենաց նշխարդ ես խառնում:
Դու քա ակնարկեղ մի հրամանով ստեղծումս աներկբայարան
Փոփր-իմէ վայրկեանում ճեւակերպեցիր ամէն մէկին իր պէս:

Թարգմ.

ՄԿՐՏԻՉ ԽԵՐԱՆԵԱՆ

*:

Խօլ ալիքների վրայ տատանուող մակոյկի նման՝
Դրդյացնում ես հաղագանցումս թանձր ու անեղբեք,
Յայտնելով բոլոր արարածներին, թէ կաս աներկբայ
Եւ քա զօրաւոր խօսքով ես հաստել ամէն գոյութիւն:
Մարմիններն անշունչ հաղում ցանելով
Եւ պահպանելով այնտեղ անկորուստ՝
Վերածնում ես նորից կենդանի.
Հողին ես յանձնում եղծականը եւ անեղծն ստանում,
Մահացու նիւթին միաւորելով նշխարդ կեանքի:
Դու հրամանիդ ակնարկով միայն
Խառնում անորշ, զնջին վայրկեանում,
Վերափոխեցիր ամենատեսակ գոյածների:

Թարգմ.

ՎԱԶԳԷՆ ԳԷՈՐԳԵԱՆ

ԷՕԺԵՆ ԻՈՆԵՍԻԺՕ

Թ Ա Տ Ր Ո Ն

Ե Ի

ՀԱԿԱ - ԹԱՏՐՈՆ

ԳՐԵՑ

ՄԱՐԹԻՆ ԷՍԼԻ



Ժազ Լըմարշան շատ տրամաբանօրէն մատնանշած է, որ «ձաղատ երգչուհին» Թատերախաղը տեսողները, մեկնելով այն երեւոյթէն, որ բեմին վրայ ո՛չ երգչուհի երեւցած է եւ ոչ ալ ճաղատ անձ մը, կ'ակնկալէին, որ «Դաւր» Թատերախաղին մէջ նոյնպէս դասի մասին ոչ մէկ ակնարկութիւն ըլլայ: Ի դարձման անոց, «Դաւր» ամբողջութեամբ մէկ ժամանակ դասապահ մը կը պատկերացնէր, անկասկած սովորականէ դուրս զայս մը, այնուամենայնիւ զայս մը: Տարեց ուսուցիչ մը մասնաւոր դասեր կու տար Հետաքրքիր, բայց բթամիտ աշակերտուհիի մը, աշխարհագրութեան, գումարումի, բազմապատկութեան, լեզւաբանական եւ այլ առարկաներու վերաբերող դասեր: Կարճ, ինչպէս ժազ Լըմարշան սահմանած է՝ չորրորդ դասը գրեթէ Հաւատարիմ վերադարձութիւնն է այն ուսուցումին, որ մարաշախ Զոռ կ'ընէր պատերազմական դրացիմ մէջ:

«ձաղատ երգչուհին» նման «Դաւր» եւս քննադատական ակնարկութիւններ ունի նոր - սպանական (neo-spanish) լեզուախումբին մասին, որ կը պարունակէ մեծ թիւ մը իրական եւ երեւակայական լեզուներու, որոնք երեւութապէս նոյնն են, բայց ունին շատ նուրբ տարբերութիւններ, ակնհայտ կողմէ դժուար ըմբռնելի թէև, սակայն և այնպէս անժրտելիօրէն կան այդ նրբերանգները: Օրինակ, Ֆրանսերէն մեծ-մայր (grand-mère) բառը, սպաներէնի, սարաանափայլերէնի, ինչպէս եւ ուսմաներէնի մէջ կ'արտասանուի նոյն հնչումով, մինչ աշխարհ մը նրբին տարբերութիւններ կան այս լեզուներուն միջև: Այսպէս, եթէ մէկը ըսէ «Մեծ-մայր», եւ ուրիշ մը նոյնպէս ըսէ «Մեծ-մայր», լսողը կը կարծէ, թէ նոյն բանը ըսին, մինչդեռ, իրականութեան մէջ, անոնք բոլորովին տարբեր անձերու մասին խօսած կ'ըլլան: Այսինքն այնպէս, ինչպէս ուսուցիչը կը մասնաշնչէ, ըսելով, որ երբ խալաթի մը շնայ-



Տեսարան մը «Դասը» քառերայինով

մէ, բացայայտօրէն տոգրական էր:

Փիէր — իմէ թուշարի համաձայն, «Դասը» ծաղրանկարային արտայայտութիւնն է բռնատիրութեան ոգիին, որ միշտ գոյութիւն ունի ուսուցիչ-աշակերտ փոխյարաբերութեան մէջ եւ թէ փրոֆեսէօրը կը սպաննէ աղջիկը ա՛յն պատճառով, որ աղւալի ցաւը առիթ կուտայ անոր դասերէն փախուստ տալու: Ասիկա, ըստ թուշարի ոչ-խելացի մեկնարանութեան, իր կարգին, կը խորհրդանշէ բոլոր տեսակի բռնատիրութիւնները: Երբ բռնատէրեր կը զգան, որ ժողովուրդին վրայ ունեցած իրենց իշխանութիւնը անկման մէջ է, կ'ուզեն բնաջնջել ապստամբները, այդ ձեւով իրենց ուժի կործանման ալ պատճառ դառնալով: Այս մեկնարանութիւնը յարաբերական է, թէեւ սպասուէին ինքն ալ կը պաշտպանէ այդ տեսակէտը՝ թատերադէպի աւարտին՝ բազմակի զարդախաչ կապ մը յանձնելով փրոֆեսէօրին: Իշխելու քաղաքական առումը վստահարար

գոյութիւն ունի «Դասը» թատերադէպին մէջ, բայց ասիկա մէկն է եւ ամէնէն անհրաժեշտ բուն նպատակներուն, որոնք չեն տը կը դնեն ուժի սեռային բնոյթին, լեզուին եւ ուժին միջեւ: Հիմնաւորուող մարդկային կապերուն վրայ: Փրոֆեսէօրը կը ղեկավարէ աշակերտուհին, բայց, իր կարգին, կը կառավարուի սպասուհիին կողմէ, որ իրեն հետ կը մտրուի իրրեւ խանդակաթ մայր մը, նոյն ատեն խեղաթիւրելով իր շփացած զանկին ամէնէն մեծ հանոյքները: Խաղին նպատակակէտը վստահարար ա՛յն է, որ աշակերտները միշտ աղւալի ցաւ կ'ունենան եւ փրոֆեսէօրը միշտ կը բռնարարէ եւ կը սպաննէ զանոնք: Մեր գիտածը մէկ օրուան մէջ գործուած քառապոնկերոյք ոճերն է: Եւ խաղը կ'աւարտի քառասունմէկերոյք զոհին մուտքով:

Հետեւաբար, անիկա ամբողջութեամբ հեղինակութիւն մըն է, որ ցուցադրուած է իր սեռային ու սաստիճ ներկարաւորով: Իսկնեքոյին ըսածը ա՛յն է,

որ նորինիս արտաքինապէս անվնաս երեւցող հեղինակութեան փորձերու ետին, ինչպիսին է ուսուցիչ-աշակերտ յարաբերութիւնը, ուժ մը պարտադրելու ամբողջական վայրագութիւնը, բռնակալութիւնը, սեփական զգացումը, դաժանութիւնը եւ ցանկառիտութիւնը գոյութիւն ունին: Ոչ-դասական թատրոնի թեքները կարելիութիւններ կ'ընծայէ հեղինակին բուսական լայն սահմաններու մէջ մշակելու իր նիւթը, թեքներ մը, որ իոնեաքոյն ալ դիւրութիւն կու տայ ծածուկ բաներ յայտնակերպելու: Մինչ լեզուն կը մնայ հարց-պատասխանի եւ տեղեկութիւններ հաղորդելու ծիրին մէջ, ցործաղաթիւնը կրնայ դառնալ աւելի ու աւելի վայրագ, աւելի զգացական եւ բիրտ: Ինչ որ կը մնայ տրուած ճանաչումէն, տեղեկութենէն (իր խեղկատակ ձեւին մէջ), հիմնական ալ իր իրողութիւնն է, որ փրօֆեսօրը կ'ուզէ իշխել, տիրել իր աշակերտութիւնի վրայ եւ սեփականացնել զայն: Իոնեաքոն «Դասը» կոչած է «ալքիմիա-գաւեշտութիւն» (drame magique) մը: Վստահարար անիկա շատ զուարթ եւ հաճելի է, բայց եւ այնպէս ունի յոռետեսութեան առաջնորդող բընոյթ մը:

«Ժազ կամ Համակերպութիւնը» (Jacques, ou La Soumission), զոր Իոնեաքոն աւարտեց «Դասը» զործէն ետք, 1959-ի սմբան, նոյնանման թեմա մը կ'ընդգրկէ — ընկերութեան եւ ըմբռնումներու կողմէ անհատը ենթարկուած է պատշաճականութեան (conformisme), սեռային բնազդի գործողութեան մը միջոցաւ: Ժազ նախ կը մերժէ արտասանել բառեր, որոնք կը մատնեն իր համակերպութիւնը՝ ընտանիքին սկզբունքներուն: Տուեալ ընտանիքին բոլոր անդամները ժազ կը կոչուին, հանգամանք մը, որ կը խորհրդանշէ անոնց անհատականութեան մը գոյութեան մերժումը, ինչպէս «Ճաղատ երգչուհի»ին մէջ Պոպպի Ուսսթընզ ընտանիքը կը խորհրդանշէր մանր քաղքենիներու հանդէպ տիրող համակերպութիւնը: Ժազ առեն մը կ'ընդդիմանայ իր ընտանիքի ճնշումներուն, կը մերժէ ըն-

դունել ճակատագրական բառեր գործածելու անհրաժեշտութիւնը եւ նոյնիսկ կը պոռայ. «Ո՛վ քառեր, ի՛նչ ոգիներ կը գործուին ձեր ամուսնով», բայց երբ իր քոյրը՝ Ժազլին կը յիշեցնէ իրեն, որ հաւանաբար ինք ենթակայ է «ժամանակի աշխատանքին» եւ ժամացոյցի օրէնքներուն — ան կը տկարանայ եւ ի վերջոյ կ'արտասանէ ընտանիքին հաւատոյ հանդանակը. «Ես կը պաշտեմ խոզի իւղով տապակած գետնախնձորը»:

Ըմբոստ տղուն քաղքենիութիւնը ընդունելու իրողութիւնը, ըստ Ֆրանսական աւանդութեան, նախանշանն է կայունանալու եւ ամուսնանալու փափաքի մը: Այս տեսութեան ծառայող կազմակերպւած հանդիպում մըն է Ժազի եւ Բոպպի թայի՝ Էրկու քիթով աղջկան հանդիպումը: Անգամի մը համար ալ, Ժազ ըմբոստ է — երկու քիթերը չեն բաւարարեր զինք, իր տապալայ կրնը պէտք է ունենայ երեք քիթ, հակառակ անոր, որ թաշկինակի ծախսը պիտի աւելնայ: Թէեւ երկու քիթով Բոպպիթան ընտանիքին մէկ հատիկ աղջիկն է, բայց անոր ընտանիքը միջոց մը կը դնէ ծնունդ տալու համար երկրորդ աղջկան մը՝ Բոպպիթա երկրորդին, որ ունի երեք քիթ: Բայց Բոպպիթա երկրորդն ալ չի կրնար դժհացնել Ժազի անհատականութեան ոգին. ան բաւականաչափ ազեղ չէ: Ժազ չի կրնար սիրել զինք. «Կարելիս ըրած եմ. ես այն եմ, ինչ որ եմ...»: Եւ սակայն, երբ առանձին կը ձգուի Բոպպիթային հետ, վերջնապէս տեղի կու տայ անոր սուղէ: Բոպպիթա կը սիրաչափ զինք, պատմելով երազ մը վայրի խողիւրու մասին, որոնք կը մեծնան իրենց մօրմէն հետո՝ ճահճի մը մէջ. յանկարծ ան կու տայ աղջկան տարբեր երեւնալու իր թաքուն փափաքը: Խօսակցութիւնը կը շեղի դէպի կրակի տեսարաններու ցուցադրութիւնը («Ճաղատ երգչուհի»ին մէջ սպասուէին կողմէ արտասանուած հրեղէն բանաստեղծութեան նման) եւ կը վերադառնան Բոպպիթայի լալկան ինքնակառարարման: Ժազ կը բացազանչէ «Charmant !» եւ ասիկա կ'առաջնորդէ դէպի

նշանաւոր էջեր, ուր երկու սիրահարներ երկարօրէն կը խօսակցին, միշտ զործածելով «Chat» վանկը, իր ամէնէն էքսպրիմատումներով, զորս ունի ֆրանսերէն լեզւին մէջ — cha-peauէն մինչեւ chatouille, եւ մինչեւ cha-pitre, հասնելով կէտի մը, ուր Բոպերթան կ'աւազարկէ, որ այնուհետեւ բոլոր մտապատկերները, առանց բացառութեան, Chat պէտք է կոչուին: Ժապ եւ Բոպերթան կը համբուրուին, ընտանիքը բեմ կը մտնէ եւ կը սկսի լկտի պար մը դառնալ անոնց շուրջ: Ժապ եւ Բոպերթան կը փոփոխուին, լոյսերը կը մարին եւ բեմը կը լեցուի կենդանիներու ազդուկով: Այդ միջոցին բեմի տնօրէնը կը յամարի տակաւին ըսել «այս բոլորը պէտք է հանդիսատեսին մէջ առաջացնեն համբուրուելու զգացում մը, ապիկարութիւն եւ ամօթանք»:


Իրականութեան մէջ, ուրեմն, Ժապ կը համակերպի երկու անդամ: Առաջին՝ ան կ'ենթարկուի իր ընտանիքի քաղցեանկան հակումին եւ երկրորդ եւ վերջնականապէս՝ կ'ենթարկուի անգլիմադրելի, կենդանական եւ հրապուրիչ սեռային իր բնազդին: Եւ վճռականը երկրորդ համակերպութիւնն է: Անիկա ցոյց կու տայ մարդուն ստրկացումը սեռային բռնազդին առջեւ, որ կը մղէ զինք ենթարկուելու քաղցեանկութեան երկաթէ կաղապարին:

Այս կէտը դարձեալ ուժեղութեամբ կ'արծարծուի 1951ին գրուած Իոնեսքոյի յաջորդ թատերախաղին մէջ՝ «Ապագան հաւկիթնիքով մէջ է, կամ պէտք է բոլոր ձեւերով կառուցել աշխարհ մը» (l'Avenir est dans Les Oeufs, ou Il faut de tout pour faire un monde), որ կը սկսի «Chat»երու բազմապիսեան հանդէսով մը եւ կը վերջանայ տեսարանով մը, ուր Բոպերթան կը փոխադրէ հակիթի կողովներու անվերջանալի շարք մը, որոնք սահմանուած են ըլլալու կայսրեր, ոստիկաններ, մարքսիստներ, արեւելահայեր, եւայլն, ապագային վերածուելու համար միտի, սնունդի եւ օմլէթի պահածոններու: «Երկա՛ր ապրի անտառներով» երկա՛ր ապրի անտառներով ցեղը» յուսահա-

տական այս ճիշդութիւն է, որ Թատերախաղը կ'աւարտի:

Մենդական սարսափը (բեմին բռնազրուածը մարդոց եւ աւարկաներու խրճողումով), որ կը յայտնուի «Ապագան հաւկիթնիքով մէջ է» թատերախաղին մէջ, մէկն է ա՛յն յաւկանչական պատկերներէն, զորս կը գտնենք Իոնեսքոյի մօտ: Անիկա կ'արտայայտէ անհատին սարսափը աշխարհի խճողումին համակերպելու ստիպումին: Անհատին առանձնութիւնը պատկերացումն է հոն զազանային եւ տեսական զիմազնով մը: Այս հարցը կը կազմէ նաեւ «Աթոնները» Les chaises) անուն թատերգութեան թեման, որ զբըւում է մօտաւորապէս այն շրջանին, երբ Իոնեսքո կ'աշխատէր «Ժապ»-ի երկրորդ մասին վրայ, ուստի՛նք՝ 1951 Ապրիլ-Յուլիս եւ յաճախ նկատուած է հեղինակին դուրս-գործոցներէն մին:

Գլխի մը (որ շատ նման է Պէլէթի «Աւարտախաղին» — Endgame —) կլոր ուշտարակին մէջ կ'ապրի ամուսնացած ծեր զոյգ մը, մարդը 95 տարեկան, կիւնը՝ 94: Մարդը զոնապահութեամբ կը զբաղի, թէեւ քիչ մը դժուար է երեւակայել զինք նման պաշտօնով մը՝ ամառի կղզիի մը վրայ: Այր եւ կին կը սպասեն տարբեր-տարբեր անձերէ բաղկացած ամբօթի մը այցելութեան, որոնք պիտի գան ունկնդրելու ա՛յն պատգամը, զոր իր երկար կենսաքի փորձառութիւններէն քաղած՝ ծերուկը կ'ուզէ փոխանցել սերունդներուն: Ան չունի ճարտասանական շնորհ եւ այդ պատճառով վարձած է ճարտասան մը, կարգալ տուլու համար անոր իր պատգամը: Հիւրերը կը հասնին: Ո՛ր կ'երեւին եւ ոչ ալ ծայն կը հանեն, բայց երկու ծերերը բեմը կը լեցունեն աւելի եւ աւելի աթոռներով եւ ա՛յնպէս մը կը ձեւացնեն, որ իբր թէ կը հիւրասիրեն զանոնք, արտասանելով քաղաքավարական խօսքերու տարափ մը: Ամբողջ ա՛յն աւելի կը խտանայ եւ երկու ծերերը կը սկսին դժուարութեամբ շարժուիլ անոնց մէջ: Ի վերջոյ կը հասնի նաեւ կայսրը, տեսարանը յարգարուած է ճառախօսին համար, որ կը տեսնուի,



«Աթոռները» քառերախաղէն տեսարան մը

Իբրեւ իրական տիպար Ռոն, որ իր պատգամը պիտի հաղորդուի, ծերունին ծով կը նետուի, օրինակ հանգիստնալով նաեւ իր կնոջ: Ճառասոսը կը դառնայ բազմութեան եւ կը փորձէ խօսիլ, բայց կը պարզուի, որ ան խօսի եւ համբէ եւ կրնայ միայն անիմանալի եւ անախորժ: Ճայնքեր հանել: Ան դրատաստակին վրայ կը գրէ քանիք մը, որոնք կը ձեւացնեն գիրքերու անիմատ կոյտ մը:

Այս դրութեան ուժն ու սրութիւնը անխառն մեծ է, որքան անոր թատերական աղօթքութիւնը: Իբրեւ թէ մեծ ամբողջի մը դէմ յանդիման դալու ձեւացումը զորութիւն մը կ'ենթադրէ գերասաններուն համար, որոնք կը յաջողին իրենց այդ կեղծիքին մէջ: Այդ տեսարանը սահմանուած է ըլլալու թատերգութեան ամէնէն ազդու տեսիլը: «Աթոռները» անուն թատերգութիւնը բանաստեղծական պատկեր մըն է, որ օժտուած է շունչով եւ կենդանութեամբ: Անիկա

բարձ է, երկդիմի եւ ունի բաղձախառն տարածք մը: Պատկերին պեղեցկութիւնը եւ խորութիւնը, իբրեւ խորհրդանիշ եւ առասպել, կը գերազանցէ մեկնաբանութեան ի խնդիր եղած որեւէ փնտառութիւն: Ի հարկէ, անիկա կը բովանդակէ փորձառութեան հաղորդականութիւնը, ի հարկէ, անիկա կ'ողբայ մարդկային գոյութեան փուճ իրականութիւնը եւ ծախողութիւնը, որ տանելի կը դառնայ միայն ինքնախաբէութեամբ եւ փախուկ ու համբարալի կնոջ մը հմայքով: Անշուշտ, թատերախաղը կը հեղնէ քաղաքախառն խօսակցութիւններու դատարկութիւնը, մեթենական փոխանցումը տախկութեան, որ կրնայ խօսիլ նաեւ հոգուն: Թատերգութեան մէջ զօրաւոր նիւթ մըն ալ կայ հեղինակին անձնական ողորդութեան մէջբերումը — պթոռներու շարքերը նմանցուած են թատերոյի մը, մասնագէտ ճառագոսը, որ պատգամը պիտի հաղորդէ, հաղուած

19րդ դարու ողմանթիկ զգեստ մը — ինքը դերասանն է:

Այս բոլոր թեմաները միաձուլուած են «Աքռոները» թատերախաղին մէջ: Բայց Իոննիստո ինքը սահմանած է անոր հիմնական նախադրեալները. «Թատերախաղին միւսը, — գրեց ան իր տառջին բեմադրիչին, Սիւլվիէ Տհոմին,

պատգամ մը չէ, ոչ ալ կեանքի ծախալարի մը, ոչ ալ երկու ծերերու բարոյական խաչալուծման, այլ արտոնքը իրենց եմ. այսինքն՝ մարդոց բացակայութիւնը, կայսրին բացակայութիւնը, Աստուծոյ բացակայութիւնը, միւսին բացակայութիւնը, աշխարհի անիրականութիւնը, քաղաքական դատարկութիւնը: Թատերախաղին թեման ոչնչականութիւնն (nothingness) է... անստանալի տարրերը պէտք է աւելի՛ ու աւելի՛ յստակօրէն ներկայ ըլլան, աւելի՛ ու աւելի՛ իրական (անիրականութիւն ստալու իմաստը իրականութեան, մարդ պէտք է իրականութիւն տալ անիրականին), մինչեւ որ նպատակը յաղթանքի (անշոշափելիին եւ անքննադատելիին տրամաբանօք մտին իմաստը), երբ անիրական տարրերը կը խօսին ու կը շարժին... եւ այնպիսիութիւնը կը լսուի, կ'ըլլայ թանձրացեալ...»:

«Աքռոները» Իոննիստոյ երբորդ թատերախաղն էր, որ բեմադրուեցաւ, բայց բեմադրուեցաւ մեծ դժուարութիւններով: Սիւլվիէ Տհոմին եւ հին խումբի երկու գերասաններ՝ Յիլլա Շելթոնիէն եւ Փալ Շվալիէէն անհիկա իւնց երեք ամիսներ, դանելու համար խաղարկութեան յարմարագոյն ոճը — մանրամասնութիւններու ծայրագոյն քննադատութեան եւ ընդհանուր մտադրացման չփոթ անքնականութեան խառնուրդ մը: Թատերախաղեր բեմադրելու առաջադրանքով կազմուած ո՛չ մէկ հաստատութիւն ուղեց «Աքռոները» բեմադրելու վտանգին յանձնառու ըլլալ ուրեմն: Ի վերջոյ, գերասանները իրենց վարձեցին չգործածուած հին սրահ մը՝ Լանքի թատրոնը, ուր սկսան ներկայացնել «Աքռոները», 22 Ապրիլ 1952ին: Նիւթապէս ձեռնարկը



ՕՏԻՊԵՐԹԻ

յանգեցաւ ազգային մը: Յաճախ քեմին վերայ պարագ աթոռները կը ներդաշնակէին սրահի պարագ աթոռներուն հետ, եւ եղան երկկոյթներ, երբ միայն հինգ կամ վեց տոմսեր ծախուեցան: Մեծ թիւով ջենադատներ արհամարհեցին «Աքռոները», բայց միւս կողմէ՝ անհիկա ունեցաւ զինք պաշտպանողներու ընտրեալ խումբ մը: «Աք» հանգէտին մէջ «Աքռոները»ուն մասին պաշտպանողական մը անտրամադրուած էր ժիւլ Սիւփըրվիէլի, Արթուր Ազամովի, Սամուէլ Պէքէթի, Լիւք Էսթանկի, Գլաւա Մալլոյի, Բէրմոն Գրոնոյի եւ ուրիշներու կողմէ: Ներկայացման վերջին օրուան վերջին վարագոյրին, բանաստեղծ եւ թատերագիր Օտիպերթի ձայնը լսուեցաւ գրեթէ պարագ հանդիսատրահին մէջ, որ բարձրագոյն թոնով կը պոռար՝ «պրավօ»:

Չորս տարի ետք, երբ ժառ Մոքլէր վերահիւնդանացուց «Աքռոները», պտուաւ կնոջ դերը անձնաւորող նոյն գերասանուհիին՝ Յիլլա Շելթոնի մասնակցութեամբ, կարծիքներու մթնոլորտը արդէն փոխուած էր: Սթիւտիո Նան Գիլի-Գէի մէջ այդ ներկայացումը դտաւ մեծ

յաջողութիւն մը: Պահպանողական թեւի առաջնակարգ քննադատները, ինչպէս «Ֆիկար» օրաթերթին ժան-ժազ Կոթիէն, տակաւին կը յամառէին հակաճառել Իոնեսքոյին, բայց ժան Անույ անձնապէս ներկայացուց իր պաշտպանողականը, «Աքռոնները» համարելով պրոլետարիատի մը, աւելցնելով՝ «Կը հաւատամ, որ ասիկա աւելի լաւ է, քան Սթրինպերկը, որովհետեւ «Աքռոնները» ունի մոլորեցողական ոճով գրուած «սէն» երգիծանք մը, այնպիսի՝ չեղտ մը, որ երբեմն առեւտրային զուարճալի է, որովհետեւ միաժամանակ սարսափազդու է, ծիծաղաշարժ, խայթող եւ միշտ իրաւ, եւ որովհետեւ բացի վերջաւորութեան մէջ գոյութիւն ունեցող քիչ մը հինցած յառա-

ջապահութենէն, զոր չեմ սիրեր, անիկա դասական գործ մըն է»:

Իոնեսքո տուաւ «Աքռոնները» թատերախաղը իրրեւ «ողբերգա-դաւաճ» մը (tragic farce), իսկ «ժազ Կամ Խամակերպութիւնը» իրրեւ «բնականական կատակերգութիւն մը» (naturalistic comedy): Ան իր յաջորդ թատերախաղը՝ «Պարտականութեան զոհերը» (Victimes du devoir) կոչեց «կեղծ-տրամա» (pseudo-drama) մը: Այս վերջին թատերախաղը կրնայ աւելի նուազ յաջող ըլլալ, քան աւելի կանուխ գրած իր կարգ մը գործերը, բայց վստահաբար «Պարտականութեան զոհերը» կը դասուի Իոնեսքոյի ամէնէն նշանաւոր յայտնութիւններուն կարգին:

(Շար. 2)





«ԹԱՏԵՐԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ»

Հետագայ էջերուն մեկտեղում զբաղվենք նպատակ ունին ո՛չ միայն վերստին յիշեցնել Նշան Պէշիկթաշլեանի թատերական դէմքերը, այլ՝ կը մղտին մանաւանդ նոյն այդ կոթողական մատանը ողջունող միահամուռ ողեւորութեան մանակից դարձեալ ընթերցողը:

«Գեորգ Միլիտիմեցի գրական մրցանակ»ին կողմէ պատկուած Վատերական գէմէքը Մփիւռքի մատուրական մեր ճիղին պատկերէն մէկն է նոյն տանն եւ հայ մարդուն միտքն ու հոգին լեղնող անսպառ հանք մը:

Ընթերցողին ուշադրութեան կը յանձնենք մեր մտնուին մէջ երևցած գնահատանքներուն համահունկը:

ՎԵՐԻՑՍ ՕՐՀՆԵԱԼ...

Իր կոթողական աշխատասիրութեան՝ «Թատերական Դէմքեր» խորագրուած պատմաշուքէ գործին մէջ, Նշան Պէշիկթաշլեան՝ Վաստէքի դարպասին առջեւ հետեւեալ հաստատումը կ'ըրնէ, Հայ Յեմէի մեծ ու փոքր մշակներու ողնկոշուածին տոբթով:

— «Երբեքս օրնմնալ ըլլամ մեր բնմի բարբ փառաւոր ու փոքր մշակները, քրոնք իրենց հիւրասի հոգիին մէջ ու մարտիրոսի մարմնոյն վրայ կրեցին հայ քաղաքները, հրաշագործ խաչի մը պէս զայն քարծրացնելով այնքան վեր՝ քրոնք երբեք չհասան մեզի ետեւում քաղաքի ժողովուրդները, հակառակ անոր որ անոնցմէ քանի մը պետական ազգ էին» (էջ 15):

— Նոյն քան որեւէ անդրադարձում տալանդաւոր եւ վաստակաշուտ գրագէտին այս վկայութեան, ինչպէս առհասարակ Արեւմտահայ Թաւրոնի պատմութիւնը ընդգրկող իր պատկանելի հատորին, պիտի ուզէինք հարաւորն ուշադրութեանը կենդանացած տեսնել երեսնամեկ մը վրայ՝ որ, հրանանցիլ է իբրեւ նախընթաց, — փոյթ չէ՛

թէ վառ յոյսեր լուսնեանք ուրիշներու մօտ եւս տեսնելու այն նոյն ապրումն ու կրակը՝ որոնցմով կը յասկանային եւ «Գեորգ Միլիտիմեցի» գրական մրցանակի մեկնեալը, ընկ. Գէորգ Թուփուկան (Քլիմէնտ, Յիւսէօ), եւ «Թատերական Դէմքեր» 1140 էջեայ պատմագրէի պատկաւորը՝ Նշան Պէշիկթաշլեան:

Մամուլն եւ հրապարակադրային մեր բարբերուն հետ հաշտ չէ թե՛ բարձրացնել մեր ընկերները ու ծափահարել՝ երբ նոյնիսկ ախտահարող նուիրումի եւ գոհարարութեան քայլեր կ'առնեն անոնք:

— Իրենց պարտականութիւնն է որ կը հատարեն՝ կը խորհի կաղճակեցութիւնը:

Այս պարագային, ասկայն, արարէին համբային եւ մշակութային տարողութիւնն է խեղճ տարակայ՝ եւ կը կարծենք չեղում մը ըրած չըլլալ մեր տառագրութեան՝ լեւաւում փրկարար ընթերցողի գուրգուրանքին եւ հետադարձութեան, որով առաջնորդուեցաւ մեր ընկերը՝ քանի մը տարի առաջ 50-600 տուրքի հիմնադրամով մը

Բ Ա Ց Ա Ռ Ի Կ Գ Ո Ր Ծ Ը

Քառերկուսական մարզի քաղաքի գործ մը պէտք է նկատել անպայման տնտեսի գրադէտ Նշան Պէշիկթաշեանի գլխավորած շէնքերը, որ արժանանալէ ետք Ե. Միլիտանցի Գրական Մրցանակէն, յայտատու վերջերս Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանի տպագրէն, Աթի-լիսա:

Բացառիկ, արդարեւ, իր բովանդակութեան խոր աստիճանով եւ ընդգրկուած նիւթին լայն տարածութեամբ: Այս գրքը հաստատուններն ինքնին կը խօսին կատարուած բնականորէն աշխատանքի քննադատութեան մասին:

Մակայի, հասանարար, աւելի նպասակալարժար նկատուի հասարակ ճանաչողութեամբ կատարել, խօսելով նաեւ ժողովրդական տնտեսական տարաբնույթի մասին, որոնք բարեփոխումներն կը կազմեն վերջինիս աշխատութեան:

Պատկանելի ծաւալով — 1140 ժամագիր է՝ — հասարակ մէջ է ներկայացուած ճշգիւ մտքորէ եւ ճշակաւոր իրերէ տպագրութիւն՝ անիկա ունի Հայկական Բնագիտական երկրագործական Քառերկուսական կենտրոնի ամէնէն հարուստ ժամանակաշրջանի համարատարութիւնը կատարած ըլլալու անվերջելի արժանիքը:

Քառերկուսական, բնագիտական, գիտական եւ բնականաբանութեան մասին լահական տեսութիւն մը, քաղաքական գաղափար մը ալ տպագրութիւնը կը թողու ընթերցողին վրայ, ուրիշ զանգաղ, այլ հաստատուած քաղաքական կարգի է Գեղարի Հայ Քառերկուսական բնագիտական մասին վերջինիս՝ անցնելով ներքինիներէն, ելլել-մտնելով օթակները, ակնարկել նայելով բնականաբանութեան լուսարձակներու շողողուն խաղի կամ մթադոյն տեսերիներու ընթերցելէ:

Սա այս քաղաքական հայ բնագիտական եւ կենդանութեան տեսանկյունի գիտական տպագրութեան նախնին:

Արդարեւ, քաղաքական կարգով մը, որ ներքին ազատական կապի եւ հոգեւորական գոյութեան

ալ կը հաստատուի անկասկած, հեղինակը ընթերցողին առջեւ տրուած կը տայ հայ բնագիտական հասարակութեան, եւ անոնց կողմէն նաեւ տրուող գործիչները՝ խմբավար, դերասան, լուսարար, եւ այլն:

Հեղինակը կենդանութեան է 28 դէպք, 142՝ կիւ, եւ թիւով կրկինը Քառերկուսական գործիչներ, որոնք իրենց Քառերկուսական գործունէութիւնը ընդհանուր առմամբ սկսած են 1904-էն ստանալ, որովհետեւ, ինչպէս դիտել կու տայ ան, իր նպատակն է հղած ներկայացնել ո՛չ թէ ժամանակագրութիւն մը, այլ՝ պատմութիւն:

Հասարակ տեսքով կազմող 38 վաստակաւորներու ներքին եւ արտաքին գիտական տպագրութեան է բնագիտական գրքով մը, որ միշտ ի մաս ունեցած է բնութագրել իւրաքանչիւր գիտական աշխատանքի կենտրոն, անմիջապէս պահել է մէջէն անոր արժանաւորութիւնը: Մեղմ, Մարգարիտ Կոթիկ թէ այլ — մեղմաբանութեան շրջանին մէջ, առանց մոռնալու հայ եւ օտար գիտականներու կարծիքներն ու հաստատումները:

Նը հետեւի, ուրեմն, թէ նա Պէշիկթաշեան անեցած է յատկապէս ժողովրդական գիտական ներկայացնել վաստակաւորութեան տեսքով կենտրոնական, մեղմաբանական խորքով, իսկ զայն տպագրել եւ պահել վերջական տպագրութեամբ:

Սակայն իմալ պիտի ըլլար ներքին, թէ հեղինակը յարկաւորներու ճամբով վերականգնողական մէջ է աշխատանք նկատողական էլիքուն: Ընդհանրապէս, քանակէրի ճանաչումը որ կը նշանակէ պարզապէս, հետադարձ, փնտիւ ևս:

Հասարակ հիմնական տրամադրութեամբ կը մնայ աւարտել ան, որ հեղինակը յաջողած է նկատողական վարկաւոր կատարել մը բնութագրել վաւերապահական կենտրոնը մեր բնագիտական վաւերապահութեան:

բուն և համեստ զործիչներուն, տալով ո՛ր միայն ճշգրիտ թիւեր և առեւտրի անոնց մասին, այլեւ մեզի հրաժեշտով ներքին ապրումներ, նկարագրի լաւ ու մերժելի դիմեր, ժպիտ և յուզում, որոնցմով գերասանը կը դառնայ մարդ և արուեստագէտ միաժամանակ:

Ոմանք այնքան տարածուն զիծերով և մանրամասն գոյներով ներկայացուած են այս հասարակ մէջ, որ կրնան առանձին մենագրական զիրքի մը բովանդակութիւնը կողմէյ: Այդպիսիներէն են Պ. Աղաճեան, Սիւրանյալ, Վ. Փափագեան, Մ. Մնակեան և զոռ ուրիշներ:

Հասարակ գիտութիւնը արժանիքներէն մէկն ալ գրագէտին գրելն է, որ պէրճ է իրեն լեզու և ոճ: Ն. Պէշկեթլեան զիտէ նկարագրել, պատմել, աւելին՝ վիպել:

Արդարեւ, հարուստ քառապատկեր ու լեզուական համալսարաններ, ինչպէս նաեւ անոր

զեղեցիկ շարահիւսութիւնը՝ ոճի բացառիկ կոտորջ մը կը ստեղծեն, որուն շնորհիւ լոր թիւերն ու թուականները, կենսագրական լսին տողերը, մասնագիտական տարազները կը դառնան հրապուրիչ, պոսնիչ և, հետեւաբար, մատչելի բոլորին:

Շահեկան են զիրքին վերջաւորութեան ներկայացուած արհամատահ բեմականներու կողմէ բեմագրուած թատերադերու անուանացանկը և օգտագործուած աղբւրներու լրիւ շարքը: Այս վերջինը հիմնական գաղափար մը կու տայ հեղինակին կատարած աշխատանքին մասին:

Ն. Պէշկեթլեանի «Թատերական դիմէք»-ը սահմանուած է միայն հասարակ մը ըլլալու հայ թատերագրութեան պատմութեան մէջ:

Հասարակ մը, որ շահեկան և օգտակար է միաժամանակ:

(«Յառաջ» օրաթերթ)

Ժ. ՄԻՐԻՃԵԱՆ

ՊԱՏԿԱՌԵԼԻ ՀԱՏՈՐ ՄԸ

«Վերջը Միլիտիանցի Գրական Մրցանակ»-ի թիւ 4 հրատարակութիւնն է Նշան Պէշկեթլեանի «Թատերական դիմէք»-ը, ուրուած Անթիլիոնի ուղարկելու 1140 էջոց պատկանելի հասարակ մը, արդիւնք՝ երկար հետազոտութեան ու պըրպըռութիւն:

Արհամատահ բեմական գործիչներու նուիրումն ստուար այս հասարակ առատ տեղեկութիւն կու տայ մեզի, մօտ 100 տարուան ժամանակաշրջանի մը մէջ նշան ու աշխատած թատերի գէմերուն մասին, սկսեալ 1820-ական թուականներէն մինչեւ Համալսարանային Ա. պատեմութիւնի սկիզբը (1915), երբ հասած է զեղարուեստական, թատերական կամ մշակութային գործունէութիւն:

Միլիտանցի ծանօթ երգիչագիր Նշան Պէշկեթլեանի տեղեկագրութիւնը եզոյ այս

հասարակ վաւերագրային ընդլն ունեցող երկաւրութիւն մըն է, որ ունի նաեւ պատմագրական արժէք, թատերական մեր կեանքի 100-ամայ պատկերը ներկայացնող:

Պաղոս Մնակեանի կողմէ խղճմտօրէն և ճաշակաւոր կերպով խմբագրուած այս գործին լոյս ընծայումով, մեծ պարտաւ մը գոցուեցաւ 19-րդ դարու մեր թատերական կեանքին համադաստուութիւնը կատարելու դիմով: Ո՞վ կ'կան է ու տնայած, ո՞վ հետք ձգած է իր ճանապարհին և ուրոնք կը պարտեք արհամատահ մեր թատերին զարգացումը: Ահա այս հարցերուն պատասխանն է, որ կը պահենք «Թատերական դիմէք»-ուն մէջ:

Իւրաքանչիւր դերասանի կամ դերասանուհիի կենսագրական գրքերը արուած են՝ յաճախ մանրամասն և երբեմն համառօտ մօտով, ըստ

զարմեալ կարելուր կարծիք մը առուղ բեմի մէր
երախտաւորաբնիկերուն ժառին: Շատերը մեղի ան-
ծանօթ անուններ, անկրկններու մէջ մնացած հա-
մեստ զերասաններ, որոնց մասին շատ քիչ բան
ըսուած է եւ մոռցուած՝ լուստ: Ահա այդպիսինե-
րը կը փառաւորութիւն հաստորին մէջ, հեղինակին
ուսումնասիրական եւ հմուտ գրչով: Իւրաքան-
չիւր զերասան կամ բեմի գործիչ — դերուստաց,
զերակատար, յուշարար, դիմախարար, տեղա-
դարձուր, տարազներու հնարիչ, թատերական
փնտաղաւ եւ ուրիշներ — մեծ նպաստ բերած են
մեր բեմական կեանքի վերելքին, պաշտական
պանծալի օրերուն: Գլխական թատերական շար-
ժամին մասին անդրադառնալով՝ հեղինակը կը
գրէ հաստորին ձեւով — իւրաքանչիւր մեր
ակամայ անասունիւն ի վեր, նրապացի բե-
մականները տեսնելէ ի վեր, մեր աչքին ու մտա-
քին տալիս լպակիցան մեր դերակատարները,
հաւատացէ՛ք, ընդհանրապէս:

Այս վկայութիւնն իսկ թաւ է, որ մեր թա-
րանին նորերանները մեղի թուն արժանաւոր ար-
ւեստագէտներ, ազանդաւորներ, որոնք հիացում
պատճառած են նոյնիսկ տարեներուն, իրենց հա-
րազատ խաղաբեմութիւններով, սօսուածի շնորհ-
ներով:

Իւրաքանչիւր զերասանի կենսագրական գի-
ծին միացած է լուսանկար մը: Դասուկան լու-
սանկարներ են ամանք, իսկ լաւերը՝ բեմի վը-
րայ, զանազան կերպարներու մէջ նկարուած, ու-
րոնք ցոյց կու տան ենթակային ճոխ բեմացան-
կը, եւ ի՞նչ կարելիութիւններ՝ զանազան զերեր
մեկնարանելու: Ունինք արամթիկ-աղբերակ-
ներ, կատակերգակներ, քնարերգակ-զերասան-
ներ: Նոր կարգանք կենսագրականները այս բե-
մի ծառաներուն, կը հանդիպինք յուշիչ պատ-
մութիւններու, կեանքի դաժան գէպերու, ճա-
կատագրի հարուածութեան, որոնք սակայն,
ի գին ամէն զոհողութեան, փորած են հայ բե-
մին, զայն աւելի բարձր հասցնելու տեսիլքով:

Անդուզական զերասան Պետրոս Աղամեանին՝
հեղինակը հուրած է աւելի քան 200 էջ (էջ 389-
606), ինչ որ ինքեին կը ներկայացնէ առանձին
հատոր մը: Այնքան ուսումնասիրուած է Պետ-
րոս Աղամեան, սպառիչ վերլուծումով մը, իւր-
րեւ բեմի մարդ, որ կարելի չէ չհիանալ ունոր
անձին ու վաստակին:

(«Այգ» օրաթերթ)

Կարելուր բաժին մըն ալ ունի վաճառք Փա-
փագեան, որ նոյնպէս եղած է արեւմտահայ մեր
ականաւոր զերասաններէն, որ հետազոյթին զար-
ձաւ արեւելահայ բեմին զարգը:

Երեւ զերասաններու բաժինն ալ հարուստ է
հաստորին մէջ: Հազիւ քանի մը անուններու ծա-
նօթ ընթերցողը հոս կը հանդիպի շնորհալի հո-
յուններու, որոնք հոգւով ու սրտով կապուած
են բեմին: Այս պարագան կը ցուցարարէ հայ ժո-
ղովուրդին յատկապէս վերակը, 19-րդ դարուն,
երբ կիները արջան ալ բախտաւոր չէին՝ ինչ-
գիտեինք արտայայտելու իրենց ուզած եղանա-
կով:

Հետաքրքրական է, որ այս զերասաններուն
(որոնց թիւը կը հասնի 30-ի, եւ որոնք 14-ը դե-
րասանուհիներ), գրեթէ բոլորն ալ մեծ են Պո-
լիս: Սա կը նշանակէ, թէ իրաւամբ Պոլիս եղած
է բոլոր արեւելահայերէններու, ուրիշ թեւաւոր-
ւած են տաղանդաւոր հայորդիներ, արուեստի
զանազան ճիւղերու մէջ: Այս պարագային, Պո-
լիս ստատորէն արտադրած է զերասաններ, իր
վրայ հրաւիրելով ուղղորդելու բարձր մշա-
կութիւնն ու ժողովուրդներու զանազանութիւն:

Ինչպէս ըսինք, ճոխ է նկարներու քանակը:
Ձանեք միջոցակցու համար՝ կատարուած է հե-
տեւողական լուրջ պրպտում, կորուստէ փրկելով
մեր արուեստագէտներուն նկարները, առիթ տա-
լով, որ զօնեմք ճանշանք հոսեւ ձեռքերէս:

Շահեկան է գիտենք վերջաւորութեան գըր-
ւած տախտակը ձեռնարկահայ բեմականներու
կողմէ բեմադրուած թատերախաղերու անուանա-
ցանկին: Սա կը նկատենք թատերական զմա-
տենագիտութիւն: Իսկ օգտագործուած աղբիւր-
ները, որոնք նոյնպէս նշուած են գիրքին վեր-
ջին էջերուն վրայ՝ կը վկայեն, թէ ուսումնա-
սիրուած են բազմաթիւ երկրաբնութիւններ,
յոզուածներ, թերթեր, պարբերականներ եւ աւ-
թատութիւններ, որոնց շնորհիւ կարելի դար-
ձած է այս լիակատար հատորը լայն ընծայել:
որով կ'ուսնենք 19-րդ դարու — եւ ամենակա-
րելուր մէջ չըլնինք — թատերական մեր կեան-
քին պատմութիւնը:

Այս գործը պէտք էր լայն անձնէր: Վերադ
Միլիտանի Գրական Մրցանակի Յանձնախում-
բը լաւ գործ մը կատարած է զայն հրատարա-
կելով:

ՅԱՀԱՆԴՈՒՆԵՏ

Փ Ա Ռ Ք Ի Տ Ա Ճ Ա Ր Ը

Երևանական թուականներուն, երբ Թրանսայի սփուռնայի խումբ մը մասնորակները գրական զարթումի փողը կը հնչեցնէին «Միմէ» պարբերականը իրենց առեւտանդէսին իբրեւ հաստատագր, ՆՇԱՆ ՊԵՏԻԿԹԱՆԵՆԱՆ մէկն կը առնանցէ, որուն նուագած մելուքն ամէնէն հարազատ ու ամէնէն խաղաղ ջաշգրտով մը կը սկսէր ու մշտանորոգ փայտութեամբ մը կը թաւալէր հայ կեանքի հարկողներուն վրայ:

Նշան Պէշիկթաշեան ժողովրդական դրող է: Իր գրքին բնագոյն ճանաչումը յիսուն տարիններէ ի վեր կը պնդէ տարբերութեամբ հայ կեանքին երեսփոխանը՝ մայրաքաղաքէն մէջ ածեցընելու համար նորարարող տունէն մը դուրս գիւղերը:

Քննարանի մը մեծութեան մէջ տոշորող միջոց մըն է իրը, որ կը բարախէ միայն Մեծքնական շուկայով:

Նշան Պէշիկթաշեանի գործերը ունին դրական զօրեղ կատարելութիւն: Հիմաութիւնն ու արեւտը անոնց հեթեմներ մաս կը կազմեն ու ունեւորող ժամանակին համընթաց կը պահեն իրենց շնորհաբան հաղորդականութիւնը:

Առաջին աշխարհամարտին յաջորդող գրական փոխանցումը կերտողներուն մէջ՝ Նշան Պէշիկթաշեանն եղաւ դրէի մրցանիշ կանթող մարդիկներէն մէկն, որուն խոյանքը մինչեւ աշխարհագրական կէտերէն կը պահէ իր երկրանայական ուժգնութիւնը: Փակառակ էր խաթուող ու տանապող մարմինին սուր կոկորդիլներուն:

Կ'ըզուենէք թաւեղակամ շէմքերու երեսունը, որուն շնորհիւ հայ թատրոնը փառքի տա-

նար մը ունեցաւ՝ այն բոլոր բեմի վաստակաւորներու յիշատակին, որոնք հայ մշակոյթը ծաղկեցուցին «Բանին Աստուծոյ» ու «Բանին Հայրենան»:

Նշան Պէշիկթաշեան իր տաղանդին զօրութեամբը փայլած է գրական բոլոր սեռերու մէջ: Բայց առանձնաբար իր ժողովրդականութեանը շահած է երգիծական գրականութեան նամակով: Արիւնքի հայ բազմաթիւ թերթերու մէջ իր դրական զգասկերանքները մեծագոյն դաստատած են հայ ընթերցողներու կողմէ: Այս մարդին մէջ իր մասնացած ծառայութեամբ համաժողովրդային ղեկը մը զարմած է: Իր գրքին պատկանող արտադրութիւնները հասարակական կեանքի մէջ կերպանց կը մնան մինչեւ այսօր: Իրեւն կեանքի բոլոր ու շունչի փողոցներուն:

Շատ փափագիւի պիտի ըլլար, եթէ զրատել հայ մը այդ հաղարանոր յօգուածաշարքերէն համալ-հոտով հասարակեւ կազմելով՝ զանոնք վերանայի մնալուն արժեքներուն:

Այս բոլորը Պէշիկթաշեանի անձինն ու գործին մասին, լուսանցքի միայն նախադրութեան ծածկութեամբ են, անոնց մը երանում, պատմական դաս մը դանկուի, ուրիշ պիտի հասարակեւ տանում մը թաւեղակամ շէմքերու ծառայուն հասարակեւ կ'ըզուենէք իր անձին հանդիպ մեր մանկան հիացումին ու յարգանքին բաժանողով տարողութեանը նորագոյնութիւնը:

Այս գրքին մէջ, որ արդիւնէն է տարիններու աշխատանքի մը, կը գտնենք Նշան Պէշիկթաշեանի գրքին ու խաղաղութեան այն ինք-

նախատուել չենք, որ մեկ սենյան հանդալի խաղերով կը կապէ իրեն ու իր միջոցաւ՝ Հայու-թեան Ողիկն: Այս բոլոր խայծերուն մէջ, որոնք մեզի կը ներկայանան ժպտազին կատակներով, իր հոգին սակայն կ'ապրի իւր յուշում մը, երէշ հայ ճակատագրին պէս:

Ահա՛ իր յառաջադրանքն քանի մը տողեր.

«Անդիգնի խանգալաւորութեամբ եւ տառապա-լից հանոյժով ճեղքարկեցինք բազմադարեան հայ քաղաքների պատմութեան ու մեր արեւմտահայ քա-լար բնակավայրերում կենդանութեանց ծաւալում երկասիրութեամբ, որ մենք յայնց տարիներ, գոր-կարելի էր յատկացնել ստեղծագործական աշխա-տանքի: Մենք, սակայն, մեր ժամանակին մեծ մասը (մտնումն վերջին հինգ-վեց տարիներ-ում, ամենանիւ կիսամիլիոն մը յամախաղէղ տագնապներում մէջ ունեւմ) յատկացուցինք այս երկարաշունչ երկասիրութեան, վտանգ ըլլալով, որ այս գործը արժանի էր խելաւ մեր ամբողջ կենաց ժամանակն իսկ»:

Կրթողական այս գործը միայն Նշան Պէշեկ-թաւրանի նման գրական արտաբեր մը վայել կըր-նար ըլլալ:

Մական մեկը, որ այդ գործը կ'ընդգրկէ միայն 19-րդ դարու զրեթէ վերջին յիշատակը միայն: Մաղթելի էր, որ յարգելի հեղինակին որդաւոր միտքն ու պնդող գրիչը աւելի լայն տա-րածքի մը վրայ գործէր եւ մեզի ներկայացնէր հայ թատրոնը իր նազան օրերէն մինչեւ ժամա-նակակից շրջանները, այսինքն՝ գոնէ՛ մինչեւ 20-րդ դարու առաջին յիշատակը: Այսպիսով, հեղինակաւոր իր գրիչէն մենք պիտի ունենայինք ոչ թէ վատարկութիւններու շրջան մը միայն, այլ ընդարձակ ու ամբողջական ճշայն թատրոնին պատմութիւնը»:

Այն՝ ինչ որ արուած է, հեղինակն ու մարմի-նիք տաղանդակներու ընդմէջէն, արդէն մեծարժէք գործ մըն է:

«Թատերական զէմէքը»-ով Նշան Պէշեկթաւ-րան հայ թատրոնը վերականգնողական է իր անցնակի փառքին մէջ:

19-րդ դարու վերջին յիշատակաւոր կրանք նկատել հայ բեմի արմէնէն կիսաօրտ շրջանը: Թատրոնը իրեն հարստական տրուեստի մէջ նո-րոյթը սկսած էր այդ օրերուն մեն ժողովրդա-կանութիւն գոնէն նաեւ հայ հասարակութեան մօտ: Թէկնումի քաղաքները կու տար կ. Պոլի-

սը, որուն անմիջապէս պիտի մայնակէր Թիֆ-լիս:

Մկրտիչ Պէշեկթաւրան հղաւ ոգին եւ անու-ցիւր հայ թատրոնին՝ զրեթով կամ թարգմանե-լով թատերականներ եւ անձամբ ղեկավարելով ներկայացումները:

Մկրտիչ Պէշեկթաւրան սկսած թատրոնը հե-ռա էր արդիական դիմապիմ մը ունենալէ, աւելի զբոյժ էր, քան թէ գործողութիւն, աւելի բեմ էր, քան բեմադրութիւն:

Ժամանակակից Նշանաւոր դէմքեր էին այդ շրջանի բեմականները: Անոնց մէջ կային համեստ-ներ, կային հպարտ դէմքեր, ինչպէս նաեւ մի-ջազգային փառքեր, որոնք յայտնապէս շէջքա-փրկեան շնորհով տոտանձ՝ ա՛յ միայն պատիւ կը բերէին հայ ժողովուրդին, այլեւ անվիճելի աս-ղանդներ էին միջազգային դիմաւորական արուես-տագործներուն անդամ:

Երկու մեծատաղանդներ վատարկութիւններու այս փառանդին կը զատուէին՝ զետեղուելու հա-մար արուեստի բարձրագոյն մակարդակի մը վը-րայ՝ իրեն պատիւ ու փառք հայ ժողովուրդին ու անոր ստեղծագործ հանճարին:

Այդ երկու անունները՝ Պետրոս Ազատեան ու Վահրամ Փափագեան, կը մնան անգիտողանքի՛ իրեն հայ բեմի Մասիսները, առանց որ կարելի ըլլար հշտեմաւ, թէ միայն է մենք կամ ո՛րե է փոքրը:

Հայ ժողովուրդը, բազմատես իր թիւին ու քաղաքական պայմաններուն, միջազգային թատ-րոնի պատուոյ տախտակին վրայ կը քանդակէր երկու անուններ, մինչ այլ ժողովուրդներ, բազ-մամիլիոն ու բռնակալ, կէս արուեստագէտ մը ինչ ինչ ունեցած՝ իրեն մշակութային ազդ յիշա-տակութեան արժանատիւը համար:

Բայց թէ ի՛նչպէս հայ ժողովուրդը դեռա-տած է իր այս տաղանդները, ահա թէ ինչ կը զրէ Սիրանոյշ այդ մասին.

«Ա՛յ, անգի՛մ օրեր... Ազամեան ցեղարմեա-տակամ մի մեծ հագի էր, մի եղակի երեսոյք՝ մեր քաղաքական պատմութեան մէջ... ինչպիսի չգնահատեցին եւ նա մեռաւ. ազդեցական համ-զամեմեմքի եւ յետին չբաւարարեան մէջ»:

Սիրանոյշ հղան է բեմի կուռք մը, բոլոր գերատանուհիներուն մէջ Սիրանոյշն է, որ խոր-հրդանշան մը հղաւ:

Այսպէս նաեւ ու անտեղծ անուններ, յիշ-ւած ու անտեղծ բեմի վատարկութիւններ, ու-

րունք իրենց ժամանակաշրջանին եղան բարակուն
սրահը, երբեմն նախատեսած, երբեմն Ժափահարու-
ած: Անոնք օր մը չմտածեցին լքել բնմը, շյու-
սահատեցան, բայց ինչպէս տեսանք, անոնց ա-
մէկէն առաջնորդութիւնը ամէկէն զժրտաւ ճա-
կատագիրը ունեցան:

Գիւրգին մէջ կան մտաւարակէս քառասուն
կարկառուն դէմքեր, նոյնքան մը եւս երկրորդա-
կան ա՛յլ վաստակաւորներ, որոնց մասին միայն
համարաւորելի նշմարներ կան:

Իւրաքանչիւր դերասանին կենեքը վէպ մըն է,
այնքան հեռաբերական զրուակներով համեմ-
ած ու այնքան հաճելի նկարագրութեամբ կեն-
դանագրուած:

Գիւրգին ներդրողական է մեր Թատրոնին ու
հայ Ժողովուրդի արուեստի հանգչւոյ ունեցած
պաշտամունքին: Հոն ներկայացուած վաստակա-
ւորներուն կենեքը նուիրարներում մը եղած է
աննիւթացած այն հաստեղին, զոր հայ ցեղը դա-
րերու ընթացքին պահեց իր արեւնին սրբութեա-
նը մէջ:

1140 էջերու մէջ պարզակցուած այս հատո-
րին համար, յարգելի հեղինակը ըրած է իր կա-
րելին, որպէսզի բնիկները հան դանկ իր դո-
յութան ու իր անմահութեան ոգեկան ամրող
տարիքը:

Այնքան յուզիչ դրուագներ կան հոն, որ
մարդ կ'ըմբոստանայ այսքան դանդաղ ոգեփ-
այաց նոյնը չէ՞ արդեօք հայ մշակին կամ

հայ բնմի վաստակաւորին ճակատագիրը այսօր
ալ:

Բազմաթիւ գիրքեր գործածուած են իրեն
աղբիւր: Ժամանակակից բոլոր Թերթերու մէջէն
հասկանաւ են վկայութիւններ ու Ժանթութիւն-
ներ, որպէսզի խղճաւորէն կատարուած այս աշ-
խատանքը փայլուն յաղթանակ մը ըլլայ ի շահ
բազմավաստակ հեղինակին եւ ի պանծացում հայ
Թատրոնին:

Գիւրգին արժանացած է Գէորգ Միլիտինցի
գրական մրցանակին: Հրատարակուած է Պօղոս
Սնակեանի խմբագրութեամբ, Անթիլիասի Կաթո-
ղիկոսարանին տպարանին, 1968-ին:

Նշան Պէշիկթաշեան զանազան տաղանդներէ
գերուած, լուս կը մեար երկար տարիներէ ի վեր՝
գրական մնայուն գործ մը արտագրելու համար:
Վերջին յոժար էր, բայց մարմինը տկար:

(ՎՓԻՒԷԶ Հարթթաթերթ)

Սիւնակագիր Նշան Պէշիկթաշեանը իր անու-
նին ու համբաւին արժանի գործ մը կու տայ,
որ ո'չ միայն հայ բնմի վաստակաւորներուն կեն-
սագրութիւնն է, այլեւ անոնց իւրաքանչիւրին
կենեքին վէպը:

Վթատիքակամ Ղեւնիքը կարելի է դասել
տարուան ամէկէն արժէքաւոր գիրքերու շարքին:
Նշան Պէշիկթաշեան կը շարունակէ իր գրա-
կան յառաջընթացը: Միշտ կայսաւ ստեղծ մը
ունի իր գրիւրը, որ ամէն քայլափոխին դաւարին
վրայ կը մղէ զոյն ու քոյր կազմող Ժողովեհուտ
մը, որուն Ժողովումը շրթունքներու կու տայ
քաղցրութիւն ու զգացումներու հարազատու-
թիւն:

Նշան Պէշիկթաշեան այս գիրքին մէջ առա-
ջին տաշէն միշտեւ վերջին էջը ներկայ է՝ իր սը-
րտմտութեամբն ու իր հոգեկան զաւարուածնե-
րովը:

Իր երգիծանքը զպանակուած է կարծես զի-
տակից ճնշումի մը ասիլ եւ չ'ուզէր երեսուն դա-
վաստակաւորներու անթաղած յիշատակին առ-
ջեւ:

Լսած կամ կարդացած էինք Աղամեանի, Սիւ-
րանյաշի, Զատուլեանեանի, Տիգրան Զուհանեանի
կամ վաւրած Փափագեանի մասին, բայց երբեք
զազափայտ չէինք ունեցած անոնց լրիւ արժէքին
ու արժանիքին մասին:

Ահա զործ մը, զոր ամբողջական պէտք է
նկատենք, նկատի առած անոր բովանդակութիւնն
ու զրական արժէքը, ինչպէս նաեւ բնմի վաստա-
կաւորներուն անոր կառուցած բարձր պատուան-
դանք:

Գրական ստեղծագործութիւններու շարքին
Վթատիքակամ Ղեւնիքը բացառիկ գործ մըն է,
ըլլալով եռյն տասն պատմական, բանաստեղծա-
կան, վիպային ու երգիծական արուեստի բազ-
մերանգ համագրում մը:

Շատ մը պատճառներով կ'արժէ շնորհաւորել
յարգելի հեղինակը, իր անթաղած եռանդին ու
մեղրահոտ ոգին համար, բայց այս անգամ կ'ու-
զենք զինք շնորհաւորել յաղթանակի մը առթիւ,
որուն պայքարը ֆետայական զոհարարութեամբ
մը մղեց, ճառագայլից իր ճղնարանին ու հայ
Թատրոնի ճակատին դրաւ անմահներու դափնե-
պսակը ի փառս հայ Ժողովուրդի ստեղծագործ
հանճարին:

ՆՇԱՆ ՊԵՇԻԿԵՍՅԱՆ

ԿԵՆԴԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Հեղինակներ կան, որոնց գործին անգրադատ-
նալ հաջեկան վայելչ մըն է, ինչպէս կան աւրիշ-
ներ, որոնց նոր մէկ հրատարակութեան վարան-
քով կը մօտենայ մարդ, նոր հիասթափումի մը
չենթարկուելու համար:

Պէշիկթաշլեան առաջիններէն է: Յիսնամեա-
կէ մը աւելի՛ գրական հրապարակի վրայ, գե-
րարապետութեան մէջ, կը շարունակէ միշտ լուր-
ւած պահել ձեզ ստեղծագործական իր վաստա-
կով: Կ'ընէ ատկէս, երբ դիտէ, որ ինչպէ՛ք ա-
ռօրեային իր տուրքը տալու հարկադրանքը կը
խլէ իրմէ յայն շունչով երկէր տալու իր ցտե-
կութիւնը: Ատկէս վնաս մըն է մեր գրականու-
թեան համար, երբ պիտէ, որ խաղաղութեան
մէջ ստեղծագործելիքը պիտի բլլար քանգորտուոր
ու միայուն գործ:

Շնորհիւ զԳ. Միլիտիենցիի գրական մրցա-
նակին, առ հնարաւորութիւն ունեցաւ տեսնելու
հրատարակութիւնը իր նոր գործին, որուն հա-
մար տարիներու ջրտինք է թափած: Առանց այդ
մրցանակին, հաւանորէն երկուք առեն փոշիներու
տակ մնար իր զթառերական Դեմքերը, որ նոր
լոյսի մը տակ կը պատկերէ իր դիմապիւնը:

Մաւաշուն այս երկին համար Պէշիկթաշլեան
ազդերու ունեցած է արդէն իսկ լոյս տեսած Շա-
րասանի, Արամ Երամեանի գիրքերն ու Սմբատ
Դաւիթեանի, Մ. Միսկեանի, Ե. Թոյայեանի,
Երուանդ Շահապէի, Արշակ Զօպանեանի, Շիր-
վանդազի, Սարգիս Միլիթեանի, Արմէն Աբ-
մէնեանի, Գարուդի, Ազնիւ Հրայիսյի եւ բազ-
մաթիւ հայ եւ օտար գէմքերու առանձին ներ-
կայացումներէն կրած ազդերութիւնները:

Եթէ մեռած չարք մը դերասաններու մասին
ան գտնացած է սարիչներու յայտնած կարծիքնե-
րը խոսացած կերպով ընթերցողին ներկայացնե-
լու փորձով, ուրիշներու մասին սակայն, որոնց

խաղարկութեան թեմամբ ներկայ գտնուած է՝
յայտնած է անվերապահ իր տեսակէտը:

Զմտեանը, որ Պէշիկթաշլեան, իր երիտա-
սարգութեան որերուն, ռեժիսոր կապուած է հայ
բեմին, բերելով իր մտանկցութիւնը Պոլսոյ մէջ
տեղի ունեցած կարգ մը ներկայացումներու:

Հայ բեմը խանդավառած է ղիշք. սիրած է
հայ թատրոնը: Վկայ՝ ո՛չ միայն իր մանակցու-
թիւնը խաղարկութեանց, այլեւ իր զննանդտեսք,
«Դրիզոր» նարեկացի եւ Սմբատ Ի. թատերախա-
ղերը:

Եթէ այնքան մեծ յափտակութեամբ է խո-
սած հայ բեմական ուժերու կարկառուն ներկա-
յացուցիչներուն մասին, ատկէս անոր համար,
որ տեսած է անոնց ճիշդին մէջ մեր մշակոյթը
վառ պահող աշխատանք մը. տակաւին, հայ բե-
մով ժողովուրդը կրթելու խօսուն նուիրում մը:

Հաստատելու համար այս պարագան, կ'արժէ
կարգալ իր զթառերական դեմքերուն ճշուն-
թիւնը խորագրով էջերը, ուր խանդով պանծացու-
ցած է թատրոնին դերը:

— զթառերը նմանագործութիւնն է արաբ-
յագործութեան: Աստուծոյ արաբագործութիւնը
ճշմարտութիւնն է: Սառքիւնն է մարդուն նմա-
նագործութիւնը: Սակայն, ուսուցիւմ մը, որուն
մէջ կը ցոյց տեսնուածային ճշմարտութեան
երփննքանց զանգեքն ու գոհարմըրը:

Մարդուն յափտեմական ձգտումն է՝ մերձե-
նալ Աստուծութեան:

Թաւրոնը տաճար մըն է, որուն խորանն կը
բարձրանայ անտեսանելի սահման մը: Այդ սահ-
մանին վրէ մտնող աստուծանքում ձեռքն է, ու
վերի մասը՝ հրեշտակներում: Անա թէ ի՞նչու շա-
տերը չեմիմ վրայ կարծես թէ կը խաղան, կը խո-
սին, միմիկն կը խաղաթիւրեն ու կը խայտա-
նակուին:

Տակաւիք:

Եթաւորմը զտարիւն արտաւստ մըն է: Ունի փառաւոր անցեալ ու իր Վոէի ձայնարարութիւնը յաւիտեանական է: Ան ինչ մնայ մտային մեծ անուամբը, լեզուին լսարանը, տեսողութեամ տեսականութեամբ, ուր յարստութեամբ պիտի յաճախէ ընկերութիւնը՝ քննադատութեամբ՝ վայելելու քաղաքի ու զայնու գեղեցկութիւնները, մտքին միջոցները, մայրենի նսկելիքում եւ կեանքին տեսիլը: (Տճ'ս Եթաւորական Գեղեցկութեան, էջ 8-9):

Բանաստեղծական այս յափտականութեամբ, Պէշիկթաշեան շարունակած է իր գործին 1114 տառարածաւալ էջերուն մէջ վերջունել արժէքն ու կէտը հայ բեմին կազմուած 38 վաստակաւորներու եւ նորիցան երկրորդական ուրիշ դէմքերու՝ որոնք 1850էն մինչեւ 1915, աւելի քան կէս դար, եղան ռաւակները բեմական արուեստին, եւ Պոլսէն մինչեւ Եգիպտոս ու Պոլկասէն մինչեւ Պրիմ, Մոսկուա եւ Ֆրանկըրտը՝ իրենց բացառիկ խաղարկութեամբ զարման հայ տեսչը պանծացնող լուսաւոր դէմքեր, ինչպէս Պետրոս Աղամեան, Սրտեանի Գարագաւան, Սիրանոյշ, Վահրամ Փապագեան եւ ուրիշներ:

Արողական խանդավառութեամբ Պէշիկթաշեան տուած է զիմադիրը իր քննարկած տիպարներուն:

Ան ո՛չ միայն հստակ մերուներին կը Ծանօթացնէ մեր բեմական մեծ տիպարները, այլեւ կը յատկ գեղարուեստական Նոք կաշուածի մը մէջ, որ առիթ կ'ընծայէ իրեն՝ անգրգոյսանալու իր հոգիին խոտող կարգ մը իրադարձութիւններու, որոնք խորապէս առնչուած են քննարկութեան ենթարկուած գէմքերու աղբրումներուն հետ:

Այս շարքէն, առաջին գիրք մըն է որ զայն Պետրոս Աղամեանը, որուն մասին գրած է իւրիշ պիտի մեան յատկանշականորէն գեղեցիկ:

Աղամեան, փառքի գաղաթեանի հասած անդուշական հայ դերասանը, եղած է խորհրդանշական դէմք մը՝ հեղինակին համար: Անոր ազդեցութեան զարմած են առանձին ուշադրութեան աւարտը:

Տառապած է անոր նահանջող գայթակմանով ու վերացած է անոր զաւարտական ու միտքի թեւածումներով:

Նման խառաղատ կեցուածքը ցոյց կու տայ

(ՀՀայրենիք օրաթերթ)

իր շատ սիրած Վահրամ Փապագեանի վերաբերմամբ, որուն տաղանդին աշխատն հիացող մըն է եղած, ինչ չէ վարանած զայն զԵկեղեցական յորջորջելու, երբ տեսած է անոր մէջ այս հիւսնադարձութիւնը:

Այս կեցողութեամբ՝ ունեցած է բոլորին հանդէպ, անխտիր: Եթէ լուս սիրած է կատակերգակ Գարեգին Ռշտունին, Վարդիթեր Ծէլէկեանը եւ ուրիշներ, որովհետեւ տեսած է անոնց մէջ առաջնութեան տիպարներ: Արուեստագէտին առաջնորդին համահասարակ տեսք կենցաղը հետաքրքրած է զինք:

Արողութեան մէջ՝ Եթաւորական Գեղեցկութեան կենդանի պատմութիւնն է դերասան-դերասանուհիներու այն հոյիւն, որոնք (մեծագոյն) ժամանակին Պոլս, ու իրարմէ շատ քիչ տարիներու տարբերութեամբ) լուսաւոր ազատ մը բացին տրեւտահայ բեմական ազգայնի մէջ:

Անոնց իրաւունքներին նուիրած իր էջերուն մէջ, Պէշիկթաշեան կը պարզէ իր ներաշխարհը խոշոր բազմաթիւ հարցեր:

Թատերական արուեստին նուիրուած իր խորհրդանշականութիւնները, համեմատած ստոր զէմքերու կարծիքով, զարմած են տեսնել մը ուղեցոյց բեմ մը սիրող ուրիշներու համար:

Պէշիկթաշեան իր խանդավառութեան կայունութեան մէջ է, երբ կը խօսի առանձնապէս իր տիպարական դերասաններուն մասին:

Իր մտածումն ու գեղամաները լայնորէն կը ճախրեն, ամէն անգամ որ պահանջը կ'աւելանայ անոնց տալու զիմադիրը համապատասխան բարեխղճութեան:

Եթաւորական Գեղեցկութեան գործ մըն է, որուն շնորհիւ ընթերցողներ պիտի հաղորդուին հայ բեմին նուիրուած տիպարներու կեանքին հետ:

Այդ կեանքը եղած է ընդհանրապէս տառապանքով ու զրկանքով լեցուն:

Մատի մըն կը հաշուուին անոնք, որ ապրած են առանց զրկանքի ու անհասկացանքի:

Հակառակ այդ թուումին, անոնք սիրած են Մեղիմիտին, ու արուեստի այդ կայունութեան մէջ ուղած են փակել իրենց աչքերը:

Պէշիկթաշեանի գործը խանդով գրի առնուած աշխատութիւն մըն է:

Բանաստեղծական խանդով գրուած գործ մըն է Պէշիկթաշեանի Եթաւորական Գեղեցկութեան:

ՎԱՐԴԱՆ ԳԵՂԵԿԵԱՆ

Վ Ի Թ Ի Ա Ր Ի Գ Ո Ր Ծ Ը

«Աստուած ըստաւ.—

— Եղիցի լոյս: (hough):

«Եւ եղեւ լոյս: (Գործք):

Թաղարանը խտրէ է ու զօրծ, ձայն է ու ձեւ, ու լեզու, ու լառախոս, եւ լոյս:»

Այսպէս կը տկոխ ձեռնուն զբաղէտնում Պէշիկիշաւիումնի վիթխարի գործը՝ թատրոնի, թատերագրի, թեմագրի, գերատանի ու բեմանկարչութեան մասին, որ կը կոչուի՝ «Թատերական դեմքեր», որուն 1140 էջերը կու գան ներկայացնելու պերճախոս յուշամատենն իւր՝ տրիստա-հայ քաղաքին:

Համեմատ դէմքերէն, գործիչներէն, ժաւանդէն սկսած մինչեւ հսկաները արեւմտահայ թատրոնի, առնալով բնութագրութեամբ ու յաջորդականութեամբ, կողմնակից, պատկերաւոր, խոսուած, Պէշիկիշաւիումնի պրպտող մտքն ու տաղանդի շարժիչն կու գան լիարժեք ընթերցողին ներշնչութեամբ անբացատրելի քննութեամբ ու հայու հպարտութեամբ:

Գիրքը իր անսղին իջն սկսած ունի պատմական, փաստացի աշխարհ շատ անհայտներ հայ թատրոնին վերաբերող, որ մասնիկ կու տայ պարզ մը, որ այս վիթխարի գործը ինչպէ՞ս կը գտնուի մէկ գրագէտ գլուխ նանի:

Սակայն, մեծատաղանդ ժաւ՝ Ն. Պէշիկիշաւիումնի գրաստանական դեմքեր գործը, անսովոր սիրական կամուրի մը արտադրութիւնը կրնայ սեղանի, ուր մի բանի պրպտող, անսովորութեամբ աշխատողներու կտրիւն կը զգացուի: Իսկ «Թատերական դեմքեր» գործը մէկ մարդու զործ է, տարիներու աշխատանքի շարժիչն եւ այն ուր աշխատեցան անհայտ ու դաժան պայմաններու մէջ կրտսեմ:

Նշան Պէշիկիշաւիումն իր այս գործով կու գայ

նոր հարստութիւն մը աւելցնելու հայոց գրական-նութեան անդամներին մէջ:

Միւս յատկանշական երեւոյթը այս գործին այն է, որ միայն յուշամատեն մը չէ, այլ զընթացում քննելով գրուած, նկարագրական հարուստ էջեր թովանդակող, մերթ յուրի, մերթ հպարտացող, ապա ընթերցողի հոգին ալիկոծող, համակող, ներշնչող եւ մասնիկ պարտադրող ունիւթաւորութիւն մըն է:

Թատերական դէմքերու երկար շարան մը կը տողանցէ ընթերցողին դիմաց, որ անզգալաբար, արդունցի եւ ժպիտի յորդացած ապրումներու ոգի-կեանքի մէջ տուգուած՝ կը հարցնէ.— Ուրկէ՞ ծնում այս դեմքերը, քրոնցմէ անուար քիւ մը անմաթը էին մեզի ցայժմ:

Դէմքեր, որոնք անգական անուններ չեն եղած, այլ անհայտաց ժաւները հայ թատրոնի, երկար է անոնց շարքը: Ինչեք Արուսեակը, Լեւ-Տիմանը, Պատկանանը, Սիրանոյշը, Ալաւ-Խանը, Թափազեանը, Գուրգենը: Անխառն յուս-զուսով ինչեք տակաւին Մարի Նուարդը, Ազնիւ-Հրայրանը, Վարդիքը Ֆելիքանը, Գէմքէր, որոնց դիմաց չի կրնար հայ անհայտ լիւրտար-հիւ, ի՞նչ կրնար պաշտամունքով չիլիւն անոնց նախնայ, գործը, մարտաւանդը: Ապերախտ ասպարէզի այս տխրանքները իրենց կեանքը ձու-նեցին հայ թատրոնին, հայ ժաւորի, եւ յատկապէս նաք սերունդն է, որ պէտք է հարգայ մե- յիւնէ բուրբ անխոր, թաց աշխարհ մը հպարտութեամբ: Անոնք, տաղանդաւոր դէմքեր, ու-նէին իրենց երկրպագուները, բայց երբ մահու- ցան, իրենց յոյնատանջ մարմինները հոգին յանձնուեցան անկաւթիւ յուշարկաւորներով, զենդով այգէն փառաւոր բայց դաժան իրենց կեանքին՝ անուան դաժան վերջովն մը:

ծն Պէշիկթաշլեանի խոսքերով:

Այժմ ամբ Եւս, մայնիսկ Երիցս, օրինելի ըլլան մեր բնմին բոլոր փառատըք աւ փոքր մը շակները, որոնք իրենց հերոսի հագին մէջ ու մարտերոսի մարմնոյն վրայ՝ կրեցին հայ թատրոնը, հրաշագործ յաշի մը պէս զայն բարձրացնելով այժմ վեր, որուն երբեք չհասան մեզի հարեւան բազմաթիւ ժողովուրդներ, հակառակ որ անոնցմէ մամմ պետական տգիշ էին:

Քթատերական դէմքեր զործը արժանացաւ Գորգ Մէլիտինեցի դրական ժրջանակին, եւ ներկայ Հրատարակութիւնը կարելի է սեպել մեր

(«Ալիք» օրաթերթ)

Ղ. ԺԻՐԱՅԻ

ՎԱՐՁՔԴ ԿԱՏԱՐ, ՎԱՐՊԵՏ

Գորգի մէկ ծառային դիմաց անճրկան, խոշոր հարցական մը որտիս մէջ՝ զարմուցի նշան Պէշիկթաշլեանի Քթատերական դէմքեր չառարին լաթակազմ կողքը: Տասներորդ էջին, հարցականը վերածուած էր հետաքրքրութեան: Ինչու թաւալումն հետ՝ զուարթ ու տիտը զէպքերու ընդմէջէն, օկտան տարածուել ժպիտն ու յուզումը: արեւմտեան թատրոնի յաղթական օրերու հպարտութեամբ վարակեցին սիրտը, ու էջերու աւարտին՝ բացառիկ զոհուածութեամբ, հրաշմանքով ու կարճ տեսող հանգի մը ծառայութիւն արտասանելով փակեցի գիրքը:

Գոցուած գիրքին ստիւն, չեմ գիտեր ինչու, Աւստրալիան մէջ յիշուած անուններու յաջորդականութեան ձեւով, մտքիս առջինէն սկսան տողանցել հոն քանդակուած հերոսները: Քէշիան ծնաւ Միսկիանը: Մաղաքեան ծնաւ Արտաշէսը: Ղէշիան ծնաւ Ֆասուլեանը: Ֆասուլեանը՝ Եւս ծնաւ Սիրանուշը: Թատերական խանդավառ մթնոլորտը ծնաւ Ազատեանը: Կապանը ծնաւ Փափազեանը, եւ, նշան Պէշիկթաշլեան՝ յետ

Հրատարակած վերջին տարիներու գործերուն զագաթը, գլուխգործոցը, որ մէկ պատիւ էր վերապահէ Գ. Միլիտինեցի դրական ֆոնտին:

Մեզի կը մնայ թիւագրել հայ ընթերցասէր անհատներուն, որ անպայմանօրէն տպահոգին օրինակ մը, եւ ի խորաց սրտի ազդանքի, շնորհաւարել, ուժ եւ կորով մաղթել այս վիթխարի գործին ծնունդը տուող, հայ ժողովուրդի ստեղծագործ աւարտականը զուակ՝ Նշան Պէշիկթաշլեանին, քանի լոյսը թող անմտը մնայ, ի փառս հայ ժողովուրդին եւ հայոց գրականութեան:

տարիներու երկարատեւ ճիգի, ծնաւ Յուշափառեանն Արեւմտահայ թատրոնին, որ կոչուեցաւ Քթատերական դէմքեր:

Գոյներու հարուստ ամբողջութիւն. բարձր ու լարի երանդներով պնդուած գէթեր ու հոգիներ, յուսահատութիւն, պայքար, յաղթանակ: Արեւմտահայ թատրոնի սեկեդարու պատմութիւնը աստիճանական ըլլալով ամբողջականօրէն ամփոփուած է յաւաքականութիւն մէջ: Հոն թագերական ճշմարտութիւնները զետեղուած են խնամքով՝ փրկուելով կորսուելու մտահոգի, հոն, նշան Պէշիկթաշլեանի զարմուտով ու գլուխով, գիրքի մարդոց կողմէ մոռցուած տուրքն է վերադարձ հայ բեմի մեծատաղանթ, շնորհալի կամ համեստ գործիչներուն: Հոն, թատերական պատմական ճշմարտութիւններու կողքին, իբրեւ հակայ կը կանգնի արձակագիր Պէշիկթաշլեանը՝ իր գէթերու նկարագրութիւններու վարպետ կամ ուղիղ, որ մերթ յուրումն է տիրականը, մերթ՝ ժպիտը, մերթ՝ կիրքը, ցանկութիւնն ու հասարակութիւնը մարդուն, ուր ասկայի, կ'ընդ

եռուզեռու, թատերական կենտրոնի բացառիկ շարժումը եւ յաղթանակը Հայ Մշակութիւն:

Արժան է շնորհու ընդերքէն, տղերու Պէշիկ-քաշիքաւան ճիւղաւորներն, զեղեցիկութենէն, ընթերցողին ականջին մօտ կը թրթուան նմանաձայն վանկերու հնչակնութեան ստեղծած երաժշտականութիւնը, որ զօղորդիկ համալսփութիւն մը կը ստեղծէ. այդ իսկ պատճառով, բազմաթիւ տեղեր, արժանի բանաստեղծութեան մը հանդէսը կը ներմուծուի մեր մէջ: Կ'եղբայրացը՝ Ննք, թէ Նշան Պէշիկթաշիկեանի գործը Թուրքական արուեստի ոսկեդարու մը նուիրուած յուշամատենն չէ միայն, այլ նաեւ զբաղան երկ' իր դէմքերու հարապատ ներկայացումով, ներաշխարհներ պնդելու փառսով եւ լեզուական ոճի բացառիկ կատարող:

Ու դասադիրք է Պէշիկթաշիկեանի գիրքը. դասադիրք՝ հայ մտաւորականին, թատերական թընձադատին, բեմադրիչին, դերասանին ու ճատարակութեան համար հաւասարակէս. ու տակաւին լուռ պատգամ է Պէշիկթաշիկեանի խօսքը, որուն դիմաց լրջորէն պէտք է մտածեն ազգային ու մշակութային գործիչները: Գիրքի աւարտին, հարցումներ արձագանդեցին մեր թատերական կենտրոնի պարագլուխներէ մէջ. «Ենչո՞ւ էր դու յոթնէն յիսուն տարի ետք. Հայ Պէշուքը չեղաւ Հայ Պոլիս մը», «Ենչո՞ւ գիրքին տողերէն մեզի համեղ խանդավառութիւնը կարճած երազի մը պէս ջցուի ներկայի իրականութեան դիմաց», «Ենչո՞ւ այն օրերու մտաւորականութիւնը կը գուրգուրար թատրոնին վրայ, իսկ այսօր...», «Ենչո՞ւ մեր հասարակութեան զաղջ վերաբերումը դէպի թատրոնը», «Ենչո՞ւ այս անտարբերութիւնը...»: Թող ոչ ոք մեզադէ մեզ, որ լեզուական նիւթէն: Զեղեցանք, որովհետեւ ըստ այդմէն ինչո՞ւնք չենք Նշան Պէշիկթաշիկեանի հայապաշտ գործին փոխանցած խանդավառութեան: Նշան Պէշիկթաշիկեան անցեալէն բերած իր ուրախ ճշմարտութիւններով ներկայի տխուր իրականութիւնը կը լեւտաւորէ, եւ բազմատաղանի մը տախտակութեան առջեւ կը դնէ ընթերցողը: Կը հասկնան, թէ թատրոնը մշակութային գործ չէ միայն, այլ նաեւ ազգապահպանման նպատակով բեմ: Լաւ է՝ ըլլայ, եթէ մեր զեկամար դէմքերը կարգան Նշան Պէշիկթաշիկեանի զինուորական ղեկավարը, համոզուին, խանդավառին, դիտակցին տնոր կենսականութեան, եւ ե-

կեղեցիկն ու Դպրոցին համահաւասար տրեք տան թատրոնին:

Կարելի չէ յաղուած լիարդաւ Արուսեանին նուիրուած էջերը, ուր տաղանգագոր դերասանուհին եւ ուրիշ ուժի մը՝ Երանուհի Գարազանի միջեւ տիրող լուռ պայքարը իր տառապանքն ու կիրքն էր տարածեր հողիներու մէջ: Սակայն, այդ պայքարին ընդմէջէն, Նշարելի է անոնց սերը դէպի թատրոնը, որ իրենց համար դուռնիքն է, հպարտութիւնն ու կենտրոնի մասն է:

Կարելի չէ հպարտանքով լիարդաւ Աղաժեմա՝ Նի, Փափագեանին եւ Զուհանեանի նուագութեանը, որոնք հայ թատրոնն ու թատերական երաժշտութիւնը հասցուցին միջազգային չափանիշներու, օտարներուն ստիպելով ընդունել, խօսիլ ու հիտնալ Հայ Մշակութիւն արժէքին վրայ: Կարելի չէ հիացմունքով լիարդաւ Մաղաբեանի, Մնակեանի եւ Ծառուխանեանի յամառ կամքին, հաւատքին ու նուիրումին մասին: Կարելի չէ լիանդամաւ իլ Սիրանայի, Մարի Նուարդի, Ազնիւ-Հրայրեանի, Վարդիթի Զէլէկեանի եւ Ժանթի ու անձանթի բեմի նուիրեալներու զոհողութիւններով: Կարելի չէ լընդդիլ անկեալ մեծութիւններու հանդէպ հայ մարդոց անտարբերութիւնը, կարգաւոր, ու անգամ մը եւս կարելի չէ լընդդիլ կարգաւոր, թէ լաւ եւ թաղան լքուած դերասան մը, կամ երեք հոգիով ու մէկ զգարիկ տէր-տէրով: Հողին յանձնած տաղանգագոր Արուսեանը:

Նշան Պէշիկթաշիկեանի ուրիշ մէկ տաղանութիւնն է ա՛յն, որ եղած է անյառ: Պեղած է իր դէմքերուն ներաշխարհը: Բեմական համեստ դերակատարներուն մօտ գտնելով հողեկան արժէքներ՝ յայտնաբերած է անոնց մարդկային մեծութիւնները. այդ իսկ պատճառով, բեմի 55 խոնարհ աշխատատեղեր իրենց արժանի տեղն են գտած գիրքին մէջ: Հեղինակին անաշուտութիւնը չէ խնայած նոյնիսկ Աղաժեմա, Փափագեանի եւ Երանուհի Գարազանեանի նման բեմի հեղանուրու. ներդրումով հանդերձ անոնց տաղանդին մեծութիւնը, ընկերային կենտրոնի մէջ անոնց անհնար թերութիւններուն ու սայթաքումներուն հանդէպ Պէշիկթաշիկեան եղած է առարկայական:

Կենտրոն ըստ գոյնի ներկայ եւ Պէշիկթաշիկեանի դրքին մէջ: Ձեռ գրեալ, թէ քանի՞ անգամ ծպտեցայ, քանի՞ անգամ յուզուեցայ, քանի՞ անգամ իրեւ հայ կամ իրեւ մարդ՝ հուպարացայ կամ ընդդէմաց կարգաւոր դէպքե-

ԲՐ. Բաղժաթին էին տնոնք: Յաճախ ընդժիշկացի
ընթերցանութիւնս, հոս գարձ ըրէ՝ առաւելա-
զոյն չափով ըմբռնեալու համար Պէշկէթաշիւե-
նի կուտակած դեղեցկութիւնը: Ընթերցանութեա-
նըս պահուել կամ տարածուելն հոգ, Բաղժաթին
տեղամեծեր հղրակացուցի, Թէ Բէշաք Մեղիտի-
նցի Գրական Արցանակք-ի նախակազմը չէր
կրնար ուրիշ որոշում տալ, եթէ ոչ մըցանակա-
կիր հաշակել նշան Պէշկէթաշիւեանը՝ իր մեծաբ-
այէք եւ մեծածառալ գործին համար:

Բնասիրական զէմէնք հատորով, նշան
Պէշկէթաշիւեան յաղթանակ մը տարաւ ԲԳ. Մե-

լիտինցի Գրական Արցանակք-ի ծիրէն ներս:
Գործը նաեւ յաղթանակն է աշխատանքի, յամա-
ռութեան, յարատեւութեան, կամքի, նուիրումի,
սիրտի...: Բւ. նաեւ պէն մեծ յաղթանակն է առ-
նիկա, զոր նշան Պէշկէթաշիւեան տարաւ իւր գլխ-
աւորին կեանքին վրայ:

Այս անգիւրը յաւակնութիւնը շուրի գրախո-
սելու նշան Պէշկէթաշիւեանի Բնասիրական զէմ-
էնք-ը: Կարգաւորվ իւր գիրքը, կրնանք միայն ու-
սանիք, գոհանալ, խանդավառուիլ. կրնանք միայն
հիացմունքով նայիլ վեր դւ բացառանելի:

— Վարժարէ կատար, վարպէ՛տ:

(«Ազգայն» օրաթերթ)

ԱՐԱ ԱՐԵՐՈՒՆԻ





«ԽԱՂԲԱԿԵԱՆՔ ԿԱՄ ՊՈՈՇԵԱՆՔ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ»

«Պէտք է խոստովանել, որ Սրբազանի (Գարեգին
Կթղ. Յովնէփեանի) գրքիւ բայժը բանասիրական և
պատմական վաստակները յարատեւ լինելու բացառիկ
բայտն ունենց։

Ն. ԱՊՈՆՑ

Երկու տարի առաջ, 1968-ին, Հայաստանի մէջ թէ Սփիւռքի, յատուկ
հանդիսութիւններով, գիտական-գեղարվեստական ելոյթներով եւ ժամուրթի մէջ
լոյս տեսած յօդուածներով արժանաւորուպէս նշուեցաւ ծննդեան հարիւրամ-
եակը Հայաստանից Եկեղեցւոյ եւ Հայ Դպրոցի բազմաթիւ սպա-
սաւորներէն Գարեգին Կթղ. Յովնէփեանի (ծն. 17 Դեկտեմբեր, 1867-ին)։

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը գիտական մնայուն ծառա-
յութեամբ մը պանծացնելու համար գիտական հոգեւորականին ծննդեան
հարիւրամեակը եւ միտնգամայն իր յիշատակը յաւերժացնելով՝ նպատակ
բերելու համար հայագիտական ուսմանց, մեծապէս գնահատելի զսղափարը
ունեցած է հրատարակելու Գարեգին Կթղ. Յովնէփեանի Ամբողջական Եր-
կերք, որոնք իրենց հայագիտական ընդարձակ եւ այլազան բովանդակու-
թեամբ տոկուն եւ հարուստ վտանգ մը կ'ապահովեն հայոց պատմութեան,
գրականութեան եւ արուեստներու ուսումնասիրութեան այնքա՞ն պեղուած
եւ գեւ տնքա՞ն պեղելի կայունածին համար։

Գիտական լուրջ հասկացողութեան եւ հայկական մշակութային ար-
ժեքներու հանդէպ սիրոյ եւ նախանձախնդրութեան ոգիի արտայայտութիւն
է այս որոշումը, որովհետեւ գրքայիններով եւ ամսագիրներու մէջ ջրիւ վի-
ճակով, հրատարակուած յօդուածներով կամ նշմարներով լոյս տեսած գի-
տական աշխատութիւնները բազմապատասխան գիտականին, երբ ի մի հա-
ւաքուին եւ ըստ նիւթերու հանդիսութեան կամ սերտ ու փոխադարձ առն-
չութեան զստաւորուած առանձին հատորներու մէջ համախմբուին, դարձ-
նապէս եւ արժանաւորապէս կը գտնեն իրենց յատուկ ծաւալը, տարողու-
թիւնն ու կարեւորութիւնը հայագիտական ուսմանց աշխարհին մէջ։

Արդարեւ, արագ ակնարկ մը Գարեգին Կաթողիկոսի կեանքին վրայ՝ անմիջապէս ցոյց կու տայ, որ իր գիտական սրբապատումները, հնագիտական հետազոտութիւնները, ձեռագրական ուսումնասիրութիւնները, մատենագրական բնագրային քննարկումները կամ ժողովրդական բանահիւսութեան հաստատումները ակադեմիական կեանքի մը յատուկ մնայուն եւ հետեւողական ուղեգիծը չեն ունեցած իրրեւ բնական ուղի եւ ընթացք։ Եկեղեցական-հոգեւորական ծառայութեան բերումով կատարուած յաճախակի տեղափոխութիւնները, իր կեանքի ամէնէն հասուն շրջանին զուգադիպող հայ ազգային կեանքի պայմաններէն ծագում առած տառնապներն ու դժուարութիւնները ջլատիչ ազդեցութիւն գործած են իր գիտական աշխատութիւն վրայ։

Հակառակ այդ իրողութեան, սակայն, ճոխ է իր գիտական վաստակը։ Մեծ է իր համբաւը, իրրեւ գիտնականի։ Բայց — պէտք է ընդունիլ — ազատ է իր յիմնը, առանձնապատուկ դիմագիծը, իրրեւ հայազէտի։ Պէտք էր շօշափելիօրէն պայծառացնել այդ յիմնը իր բանասիրական աշխատութիւններու մէկտեղումով, հատորներու շարքով մը։

Ահա այդ երախտարժան գործը ստանձնած է Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը, որ առաջադրած է ի լոյս ընծայել Գարեգին Կաթողիկոսի բոլոր կարեւոր հայագիտական երկասիրութիւնները, որոնց առաջին հատորն է ներկայիս հրատարակուածը, «Խաղրակնամք համ Պաշխանք հայոց պատմութեան մէջ» ընդհանուր խորագրին տակ։

Ծանօթ է հայ գիտական շրջանակներուն, որ «Խաղրակնամք համ Պաշխանք հայոց պատմութեան մէջ» մակագրութեան տակ Գարեգին Կաթողիկոսի պատմա-հնագիտական աշխատասիրութիւնը լոյս տեսած է երեք առանձին հատորներով, զմէկը միւսի հետ սեյտ կապուած եւ իրար յրացնող, ինչպէս կը ճշդէ հեղինակը՝ ինք։

Առաջին հատորը լոյս տեսած է 1928 թուին, Վաղարշապատի մէջ, «Խաղրակնամք համ Պաշխանք հայոց Պատմութեան մէջ — Պատմա-հնագիտական ուսումնասիրութիւն» խորագրով, այդ ժամանակին տիրող նորահայր ուղղագրութեամբ, որ այս նոր հրատարակութեան մէջ բնականաբար փոխուեցաւ՝ պահպանելու համար գործին ուղղագրական միութիւնը։ (Տե՛ս էջ 1-154)։ Տասներկու զլուխներով կու տայ ինքնակեան կամ Պաշխանք իշխանական մեծ գերդաստանի պատմութիւնը, ծանրանալով անոր ծագման, սոհմային յաջորդականութեան եւ քաղաքական ու շինարարական գործունէութեանց երեսներուն վրայ, ԺԿ. դարէն մինչեւ ԺԸ. դարու սկիզբը, Պաշխանք տունի վերջին աշխարհական ականաւոր շառուիղ՝ Իսրայէլ Օրիի վախճանը (1711)։

Երկրորդ հատորը հրատարակուած է առաջինէն տասնըւոր տարին ետք, 1942-ին, Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց տպարանէն, «Հագնաք կեդրաճեք եւ Գլաճարի քարճար զպրաքը Պաշխանք իշխանութեան մէջ» վերնագրով եւ պատկուած Երուսաղէմի Պատրիարքութեան «Սրբոց Թաքաճանչաց — Դաւրեան Գրական Մրցանակ»-ով, որուն ներկայացուած էին այս հատորն ու անոր յաջորդը (Գ. հատոր), 1936 թուին(1)։ Այս մասին մէջ (Տե՛ս էջ 155-296), որ ինքնին ամբողջական երկ մը կրնայ նկատուիլ, մանրամաս-

(1) Տես «Սթոն», 1936, Նոյեմբեր, էջ 387-345։

նորէն ներկայացուած են վանական-ուսումնական, իմացական կեանքի եւ մշակութային գործունէութեան ա՛յն կեդրոնները, որոնք ծաղկած էին Պոռ-հանց իշխանութեան շրջանին, եւ անոր ընդհանուր հովանին ներքեւ, աստ-ւածաբանական, իմաստասիրական եւ այլ յարակից բնագաւառներուն մէջ: Վեց գլուխներով, բանասիրական խորագններն քննութեան առարկայ են դար-ձած այսպեղ Կնչառայքը, Այրից կամ Գեղարդայ վանքը, Աղջոց Ս. Ստեփա-նոսի վանքը, Թաւնտի վանքը, Կուէի եւ Ոծնայի վանքերը եւ, մասնաւորա-բար, Գլաձորի դպրոցը կամ «Եսմայսարամ»ը, որ ամէնէն բեղուն կեդրոնն էր ԺԳ. դարու հայ գրչութեան, մատենագրութեան եւ իմաստասիրական ուսմանց:

Շլրադը հատորը տպուած է մօտաւորապէս նոյն շրջանին, 1942-43-ին, Նիւ Եորքի մէջ: Սկզբնաղբիւր-բնագիրներու հաւաքածոյ մըն է ա՛ն (Տէ՛ս էջ 297-402), որուն վրայ խորոխուած են քննական վերլուծումները, բանա-սիրական վերլուծումները, բանասիրական հետազօտութիւնները եւ հա-մադրական եզրակացութիւնները Գարեգին Կաթողիկոսի գիտական աշխա-տանքին՝ առաջին երկու հատորներուն մէջ լայնօրէն եւ մանրակրկիտ պար-զաբանութեամբ արուած: «Յաւելուածներու հատոր մըն է այս, երեք բա-ժիններով...»

ա. Արձանագրութիւններ. աւելի քան 183 մեծ ու փոքր բնագիրներ, քաղուած քարերէն, ոմանք առաջին անգամ ըլլալով բացուած հայագիտու-թեան եւ ոմանք վերստուգուած եւ սրբագրուած վիճակով վերաբաղուած: Ե. Յիշատակարաններ. մեծաւ մասամբ Ս. Էջմիածնի ձեռագիրներէն քաղուած 91 յիշատակարան-հատուածներ, ոմանք ամբողջական բնագրով տպուած եւ ոմանք քաղուածօրէն օգտագործուած:

գ. Մատենագրական հատուածներ. մասնաւորաբար ինչպատուր Կնչա-ռեցիի, Մխիթար Այբեղանեցիի եւ Ենայի Նչեցիի ձեռագիր գործերէն քաղ-ւած տասներեք կտորներ:

«Խաղաղկեամբ կամ Պոռշեմբ Հայոց Պատմութեան մէջ» եռամասնեայ այս աշխատասիրութեան միասնական, միահատոր ձեւի մէջ հրատարակու-թիւնը եղած էր սկզբնական ցանկութիւնը երանաշնորհ Հեղինակին՝ Գարե-գին Կաթողիկոսին: Արդարեւ, 1928-ին, երբ կը հրատարակէր առաջին մա-սը, Յաւաքարանին մէջ խօսելէ ետք նաեւ յաջորդելիք երկու մասերուն կամ հատորներուն մասին, կը գրէր—

«Մենք շատ կը ցանկանայինք, որ հնարաւորութիւն ունենայինք ամբողջ հատորը միանգամից դնել բռնասէր հաւաքակութեան տաւջ, որպէսզի տարզ գաղափար կազմուէր մեր քրդեգրած գիտական մե-թօսի եւ ընդհանրապէս այս շարքի նպատակի մասին, բայց կարծում ենք, ուշադիր ընթերցողը հենց այս տաւջին մասով էլ ինչպէս եւ մեր գրած «Աղբիւրէկներ եւ նրանց շինարարական գործը» կամ «Տարսայիճի եւ Մինա Խաթունի տերուհի» Օրբելեանց պատմութեան հատուածով, կարող է կազմել, քէ ԽՅԷ է մեր ձգտումն ու ցանկութիւնը այս շարքի նկատմամբ»(1):

Հայագէտ եւ հնագէտ հոգեւորականին այս ցանկութիւնն է ահա, որ քառասուն տարի ետք կ'իրականանայ, երբ այսպէս քով-քովի կը բերուին

(1) Յաւաքարան, էջ V - VI: Տես Յերկայ հատորը, էջ 456:

անջատարար հրատարակուած մատերը եւ աւելի ակնյայտ կը դառնայ կոթողական նկարագիրը այս բաղմարժէք ուսումնասիրութեան:

Հեղինակին ցանկութեան եւ մտածումին հաւատարիմ հետեւողութեամբ երեք հատորներու մէկտեղումէն ետք, իբրեւ «նոր յաւելում» այս հատորին մէջ հրատարակուած են իր երկու վերոյիշեալ ուսումնասիրութիւնները, որոնք թէ՛ նիւթի, բովանդակութեան եւ թէ՛ մշակման մեթոտի տեսակէտէն սերտ առնչութիւն ունին ճիշտագրական կամ Պոստմոֆէզմէն գործին հետ, իբրեւ նոյն ժամանակաշրջանի երկու այլ կարեւոր իշխանական տոհմերու նուիրուած ուսումնասիրութիւններ:

Առաջինը՝ «Ազիլիէնի» եւ Արամ շինարարական գործը» (Տե՛ս էջ 405-429) սկզբնապէս հրատարակուած էր իբրեւ առանձին ուսումնասիրութիւն Վերմիստի Գիտական Ինստիտուտի հրատարակած «Բանքեր»ին մէջ, 1921-1922 թուականներուն(1): Հրատարակութիւն, որ դարձած է հազուագիւտ, գրեթէ անգտնելի:

Երկրորդը՝ «Տարային Օրբէլեանի եւ Միմա Խաթունի սերունդը», ժամանակագրականօրէն, Գարեգին Կաթողիկոսին առաջին հրատարակուած ուսումնասիրութիւնն է հայ Իշխանական Տուներու պատմութեան բնագաւառէն ներս: Լոյս տեսած է 1913-ին, ռուսերէն լեզուով, «Խրիստիանայիշ Վատուկ» պարբերականին մէջ, Ն. Մանի խմբագրութեամբ(2): 1947-ին, ինք աւճամբ զայն թարգմանած է հայերէնի եւ հրատարակած «Հասկ Հայագիտական Տարեգիր»-ին մէջ(3), ուրիշ նաեւ հանուած են տառնմանաբար օրինակներ:

Այստեղ, հակիրճ սա ակնարկին մէջ, հարկ չենք տեսներ մանրամասնօրէն անդրադառնալու գործի բովանդակութեան, բնագոյնը նկարագրին եւ գիտական արժէքին: Այդ անդրադարձումը կատարած են արդէն, լայն շրջագծով եւ ճշգրիտ բնորոշումներով, նախ հեղինակը՝ ինք, Ա. Է. Գ. հատորներու յառաջաբաններուն մէջ, եւ այսպէս, աւելի հանգամանօրէն, Երուսաղէմի Պատրիարք՝ Ամեն. Տ. Թորգոմ Սրբազան եւ մեծանուն գիտնական Նիկողայոս Առնէջ իրենց Տեղեկագիրներուն մէջ, որոնք պատրաստուած էին ներկայ հատորի երկրորդ եւ երրորդ մասերուն «Արքոյ Թարգմանյաց — Դուրեան Դրական Մրցանակ»ին ներկայացման առթիւ, 1936 թուին(1): Իւրենց գիտական եւ պատմական արժէքին համար՝ անոնք եւս վերահրատարակուած են այս հատորին վերջաւորութեան (Տե՛ս էջ 455-466):

Պարզ է, որ Գարեգին Կաթողիկոսի այս ուսումնասիրութիւններու սկզբնական հրատարակութիւններէն ասդին, նորանոր պրպտումներ կատարուեցան իր ուսումնասիրած դաշտերէն ներս: Հայագիտական մարդին մէջ, կարեւոր նուաճում մը պէտք է նկատել հայկական արձանագրութիւններու աւելի ճոխ հաւաքումն ու գիտական թեքնիքի տեսակէտէն՝ կատարելագործուած հրատարակութիւնը: Դարձեալ, կ'արժէ այս առիթով յիշ-

(1) Տես «Բանքեր Հայաստանի Գիտական Ինստիտուտի», Գիրք Ա. եւ Բ., էջ 177-206: Վաղարշապատ, 1921-1922:

(2) Բ. Խատր, 1913, էջ 218-252:

(3) Ա. տարի, 1946, էջ 1-28, ԱՅԲԻԽԱՍ — Լիբանան:

(1) Տես «Սրեն», 1936, Նոյ., էջ 338-340 եւ Գնկտ., էջ 366-372:

Հէլ տյն խորունկ բազմանքը, զոր արտայայտած էր Գարեգին Կաթողիկոսի զործի Գ. հատորի յառաջաբանին մէջ։—

«Ըստ հնարաւորութեան աշխատել ենք մէջ բերուած արձանագրութիւնները, ձեռագրական յիշատակարաններն ու մատենագրական հատուածները տալ բնագիրներին հարազատ կերպով, բայց, տարախտարար, տեխնիկական պատճառներով, ամենաբին է եղել լիովին հասնել այդ ցանկութեան։ Մեր խօսքը վերաբերում է, յատկապէս, արձանագրութիւնների կցումներին (ligature), որ միայն մշակել ենք եւ մատնացոյց արել տպագրութեան մէջ շեղագրով, առանց կարգ լինելու նրանց նշանատիպ ձեւերը տալ։ Պէտք էր, գտնէ, միատեսակ կցումների համար կազապարներ պատրաստել, որ մեր կարգութիւնից վեր էր։ Յաւրդարման կարելի է մասամբ այն արձանագրութիւնների նկատմամբ, որոնց նշանատիպ պատկերն ունիմք, հետաքրքրուող բնութեանը թաղանթով այնուհետ տեսնել հնագրական առանձնայատկութիւնները։ Բայց մեզ հնարաւոր չէ եղել բոլոր արձանագրութիւնները լուսանկարել. անհատական, այն էլ սուղ միջոցների տէր վանականի կարգութիւնից վեր լինելով այդ։ Պետական կամ հարուստ մեկնասերի առատ օժանդակութեամբ միայն կարելի էր ըստ կարելւոյն ամբերի այդպիսի գործ կատարել իբրեւ մաս արձանագրութիւնների Corpus-ի։ Կը յուսանք, թէ այդ զործը պիտի կատարուի մի օր պետական յանձնարարութեամբ եւ արձանագրական զործին հմուտ մասնագէտների ձեռքով, որովհետեւ առանց արձանագրութիւնների ճիշդ վերարտադրութեան անկարելի է ճշգրիտ (exact) եւ իրական ուսումնասիրութիւն կատարել հայ ճարտարապետական շէնքերի, քանդակագործութեան, հնագործութեան եւ մշակութային այլ խնդիրների մասին։ (ընդգծումը մեզմէ՝ Գ. Ե.)։ Արձանագրութիւնները առանց նկարից աղբիւրներ են եւ գիտութեան մատչելի պիտի դառնան նշանատիպ ձեւերով»։ (Տե՛ս առտ, էջ, 457)։

Այժմ, այդ յոյսը սկսած է մարմին առնել եւ լրջօրէն պատրաստուած ծրագրի հիման վրայ իրականանալ։ Արդարեւ, Հայաստանի Ազգային ժողովում սկսաւ հրատարակուել շարքը «Ինչպէս Հայ վիմագրութեան» ընդհանուր խորուրդով բնորոշուած հայկական արձանագրութեանց հաւաքածոներուն(1), որոնց առաջին «Պրակ»ի ընդարձակ ներածութեան մէջ, «Հայկական վիմագրութիւն», հատորի խմբագիրը՝ Ս. Բարխուդարեան յատուկ յիշատակութեան տարակալ դարձուցած է Գարեգին Կաթողիկոսի գիտական աշխատանքը, յատկապէս «նազարակեանք կամ Պաշտանք Հայոց Պատմութեան մէջ» երկուսիրութիւնը։ Այսպէս, ուրուագծելէ հետք հայկական արձանագրութեանց հաւաքման աշխատանքի ընթացքը Մոսկւայի Սորենյանցիէն սկսեալ մինչեւ մեր օրերը, եւ նկարագրելէ հետք Խ. Կարուսկիդրին որդեգրուած հաւաքումի, ուսումնասիրութեան եւ հրատարակութեան գիտական նոր մեթոտը, կ'աւելցնէ։—

(1) Տե՛ս Պրակ 1: «Անի Քաղաք», կազմեց Յ. Ա. Օրբելի, Երեւան, 1908:

Պրակ 2: «Գործիքի, Միսիանի եւ Ղափանի լրջաններ», կազմեց Ս. Գ. Բարխուդարեան, Երեւան 1900:

Պրակ 3: «Վաղոյ Զօր, Եղեգեանքի եւ Աղեղեկովի լրջաններ», կազմեց Ս. Գ. Բարխուդարեան, Երեւան 1907:

«Հայաստանի գիտնականներից այդ մար ուղղությամբ յառկա-
պէս մեծ աշխատանքներ է կատարել Գարեգին Կթգ. Յովսէփեանը,
որը շրջագայել է Հայաստանի շատ վայրեր ու անձամբ վերծանել,
տեսել և յուսանկարել է արձանագրութիւնները: Մասնակի հրա-
տարակութիւններից բացի, յատկապէս նշելի են նրա երկու հիմնական
աշխատութիւնները՝ *Քարտեզ Հայ Հնագրութեան* եւ *Քաղաքական Կամ
Պոռնեանք Հայոց Պատմութեան մէջ* երանատար աշխատութիւնը:
Դրանց մէջ աւելիաւորած են հարիւրաւոր ներայայտ կամ ի ներայ
ստուգում, լուսանկարում եւ քանասիրական մանրակրկիտ քննա-
թեան ենթարկւած արձանագրութիւններ»(1):

Գիտական այս նոր նուաճումները, սակայն, ոչինչով կը նուազեցնեն
արժէքը մեծ հոյակապ տալիս երկասիրութեան, որուն մէջ հում-նիւթի օգ-
տաւործումը հայ քաղաքական եւ մշակութային պատմութեան լուսարանու-
թեան համար նոր գիտերով եւ մեկնաբանութիւններով՝ կը շարունակէ մնալ
նոր լոյսի աղբիւր հայ բանասիրութեան մէջ: Վստահ ենք, դեռ երկարօրէն
եւ լայնօրէն պիտի օգտաւորուի Գարեգին Կաթողիկոսի այս երկը հայ թէ
օտար գիտնականներու կողմէ, որոնք յարատեւ որոնումի մէջ են ի խնդիր
աւելի խոր ճշմարտութեանց հայ աշխարհի կեանքի վերաբերմամբ: Ինչպէս
Ն. Աղոնց գիտել կու տայ, «Գարեգին Սրբազանը չի սիրում շրջել կոթողաւոր
տափերի վրայ եւ ոչ եռանդ թափել անուծելի խնդիրների շուրջը, այլ հե-
տամուտ է եղել միշտ ներութիւններ քերել հայ բանասիրութեան» (1):

Երանի՜ «Հայ եկեղեցու եւ պատմութեան այս աշխարհի ուղղութեամբ
հնարաւորութիւն ունեցած բլլար շարունակելու եւ տարածելու գիտական
աշխատանքի իր այս գիծը: Առաջին հատորի յառաջաբանին մէջ, վստահ
բուերով կը գրէր, 1928 թուին. «Իրան (Քաղաքական Կամ Պոռնեանք Հա-
յոց Պատմութեան մէջ) գործին պիտի յաջորդեն Օրբէյեան, Վաչուտեան,
Խաչեմով, Դափեանց, Շահումեանց, Մաթիկեանց եւ Արծրունի (Մանկա-
նոց) տախտակի մտերմութեամբ մեծ ու փափաք աշխատութիւններ, իւրաքան-
չիւր մի ամբողջութիւն, թայց փոխադարձաբար իրար լրացնող եւ բոլորը
միասին մի նպատակով Արեւելեան բովանդակ Հայաստանի պատմութեան լու-
սաբանութեան...: Եթէ յաջողուի մեզ այս ծրագիրն իրագործել, որի մի
մասը պատրաստ է, միւսի միւթերը հաւաքուած, կարծում ենք, թ. Գ. եւ հե-
տագայ դարերի գիտական պատմութեան տաւած մեր լուսնայի հետ, նպաս-
տած կը լինենք եւ ուրիշներին նոր ուսումնասիրութիւններ կատարելու այն
միւթերի հիման վրայ»(2):

Դժբախտաբար, կեանքն աշխարհի բերաւ, որ իր այս ընդարձակ ծրա-
գիրը մնաց անկատար: Բայց, կը հաւատանք, այս հատորն իսկ բաւարար է,
մէկ կողմէ, վկայելու այդ ծրագրի արժէքին մասին, եւ, միւս կողմէ, մղելու
հայ գիտնականները, մասնաւորաբար Հայաստանի մէջ, շարունակելու ա-
նուարտ դործը Հայ Իշխանական Տուներու քաղաքական, շինարարական,
մշակութային, գիտարուեստական իրագործումներուն ամբողջական և ազա-
ւիչ ուսումնասիրութեան, որպէսզի աւելի առատ լոյս ծագի հայ ժողովուր-

(1) «Դրան Հայ Վիճակագրութեան», Պրակ 1, ներածութիւն, էջ XXIV, Երևան 1966:

(1) Տես Յովսէփեանի հատորը, էջ 466:

(2) ԱՅԳ, էջ 465:

դի դարաւոր անցեալին վրայ եւ առաւել եւս պայծառանայ այս ժողովուրդի պատմական դիմագծութիւնն ու դերը մարդկային ընդհանուր քաղաքակրթութեան մէջ:

«Խաղրակեանք կամ Պաշտօնական Հայոց Պատմութեան մէջ» հատորը հայ մշակոյթի պատմութեան կարեւոր մէկ շրջանին, մասնաւորապէս ԺԳ. եւ ԺԴ. դարերու հայ կեանքի շինարարական-ճարտարապետական, կրթական, վանական, զրչական, աստուածաբանական, իմաստասիրական արտայայտութիւններուն մասին առաջին կարգի տեղեկութիւններու շտեմարան մըն է: Աւերակուած ատաւաններու քարերուն վրայէն, ջարդուած եւ մամուտ խաչքարերէն, խունացած ձեռագիրներու մողաղաթեայ էջերէն, մատենագիրներու յաճախ մոռցուած անկիւններէն Գարեգին Կաթողիկոս նորութիւններու հսկայ դաշտ մը կը բանայ հայ մշակոյթով հետաքրքրուած անձներուն համար:

Մեր ընթերցող հասարակութիւնը առհասարակ կը զոհանայ այնպիսի ընթերցումներով, որոնց մէջ նիւթերը մշակուած են, յղկուած, մեկնարանւած, պարզարանուած եւ միջնորդական այս եղանակով իրեն մատուցուած: Ուղղակի ծանոթութիւն հոսմ նիւթին, բուն ատղձին հետ փոխանակման սկզբնականութիւնը կը դառնայ հայ ընթերցողին: Գարեգին Կաթողիկոսի այս գործը իւրաքանչեւ նշանակութիւն մը ունի այս տեսանկէտէն: Հայ պատմութեան անգիտութիւնը կը բանայ, ուրկէ ջուր կարելի է ըմպել, թարմ ու զով ջուր:

Դիւրին ընթերցումի յատուկ գիրք չէ այս հատորը: Հայկական արժէքներու հանդէպ սիրոյ զգացումին հետ հարկ է ունենալ ճշգրտ, զիտութեան ծարաւ եւ որոշ հմտութիւն այդ ընթերցումը վայելի վերածելու համար:

Ես կը հաւատամ, որ հետզհետէ, մանաւանդ մեր երիտասարդ մտաւորական սերունդին մէջ, պիտի անի թիւը ա՛յն անձներուն, որոնք պիտի ուզեն հայոց պատմութիւնն ու հայ մշակոյթը ճանշնալ պիտական առողջ հիմքերու վրայ:

Ահա՛ իրենց ընթերցման գեղեցիկ առիթ մը:

«Ճաշակեցէք եւ տեսէք զի քաղցր է...»:

ԳԱՐԵԳԻՆ ԵՊՍ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

«Ա Ն Ծ Ա Ն Օ Թ Հ Ո Պ Ի Ն Ե Ր»

ՀԵՂԻՆԱԿ՝

ՅԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՑ

«Անծամօք չնգնմիք» խորագրերը կը կրէ 880 էջոց չքեղ այս հատորը, որուն հեղինակը ստակայն անծանօթ մը չէ երբեք զրական շրջանակներուն թէ զրատէր հոսարակութեան(*) :

Պարզաստան ծնած եւ հիմա Ուաշինկթըն քնակող արգէն շափահաս այս զրադէտը հատընտիր այն զրադէտներէն է Սփիւռքի, որ առանց փողի ու թմրուկի, բայց հաւատքով փարած իր զրէին՝ կը սենւնէ թուղթին առօրեայի ընթացքին հանդիպած զանծանօթ հոգիներուն, պիտի ըսէինք՝ սովորական մարդոց երբեմն սովորական, երբեմն անսովոր ազրումները, հոգեկան տուարածները, կենցեղի զէմ մաքառումները փողոցին մէջ թէ ընտանեկան յարկէ մը առկա Սենեուսմաներ, որոնք վկայագրութեան մը նպաստը կ'ապահովեն, առանց լուսանկարչայինի մեղքէն տառապելու: Հարազատ, վաւերական կենցեղի առատացումներ՝ արուեստագէտին ալքի պրիմասկէն ցոլացած եւ անոր սրտին ու մտքին երանդաւորումները ընդունած:

«Փայտէ Թոյզը» հանդիպումն է Սան Թրան-

սիսկոյէն երիտասարդ Նկարիչի մը եւ Երեւանէն մանրէականաբան երիտասարդուհիի մը, երկուսն ալ հայ՝ Նիւ-Էնթըքի մէջ: Տարբեր աստղերու տակ ծնած երկու հայորդիներու հանդիպման հոգեւոր շարժումները երեւակային է ամէն հայու համար: Մէկը՝ հայրենիքի, միւսը՝ Սփիւռքի ներկայացուցիչ, ձեւով մը՝ ասարեւր մտայնութեան տէր, խորքով աւելայն իրարու կարօտ, զիրար ամբողջացնող: Նորավէպն ալ կ'աւարտի սրտազեղ գրկընդխառնութեամբ մը, որ կը պատնայ լսփազանց խորհրդանշական:

«Վերքերն Ը՞լ» զնացիլ Հալիֆաւօք կրկին հանդիպում մըն է հայ երկու երիտասարդներու, Աւստրալիանի ալեկոծ ջուրերը ճեղքող նաւու մը վրայ: Զուլթակաւոր է մէկը, Հալիֆաւօքն է կ'երազանայ, նուազելու կ'երթայ երկրէ-երկրի: Սիրած աղջիկը Հայաստան ներգաղթած է: Տաղ-նաղ մը կ'իւնայ հոգւոյն մէջ: Հայրենեկը, սիրած աղջիկը, բայց ինք օտար երկրի գտակ՝ կը կարծէ, թէ չի կրնար ապրիլ Հայրենիքի պայմաններուն մէջ: Բայց դուրսն ալ միակ կը զգայ ինքզինք, Խօսակցը կը պնդէ, թէ իր տեղը Հայրենիքն է, ուր ջուրակին լարերը աւելի քաղցրահունչ կրնան թրթուր: Հայրենիք երթալ-չերթալու վիճարանութիւն մը կը շարունակուի երկուսն ալ թշուառ, երբ օտարուհի մը կ'առաջարկէ նուազել Արմենիա: Այս վերջինը կը շնչոյնէ «Կուսենք, ապա շնա զիտեք ինչպէս»՝ կ'իջնայ հասարակ ջուրերու կտրին մէջ, կարեւոր խոր-

(*) Փսամամակէ մը ի վեր բաշխուող իր վաստակին տրոխտութեամբ ծանօթացած են մասնաւորապէս Վաշինգթոնի, «Հայրենիք»-ի եւ «Բազմիկ» ընթերցողները, իսկ Վաշինգթոնի, «Հայրենիք»-ի արտերթերուն մէջ ալ, ինչպէս այլուր՝ լոյս տեսած են ակնարկներ իր կեանքին ու գրական գործունէութեան մասին:

հերոսանքի ուղիով արտերկրի արուեստագետին տիրու վախճանը...

Վարդի քրդագնացումը կնքը պատմութիւնն է մարտիկ ամուսնութեան մը: Օրինապատ հաշ-ւապահ՝ Կիւրծի, հետզհետէ աւելի կ'արժանանայ իր կնոջ կշտամբանքին եւ որհարհարանքին՝ քիչ դրամ լսակցուն, եւ շրջապատի ծաղրանքին՝ ֆի-զիքական սղեղու թնամը համար: Գործին մէջ ի-րեն սղեղանէ Նշանակուող երկտասարդ մը, որ աւել բանաստեղծի հոգի՝ ազատութեան զեղեց-կութիւնները կը յիշենք իր հոգիին: Ժամբոր-զական ցուցափռչիկ մը մէջ Հաւայան կղզիներ հրաւիրող կարծիք յրժազգեստով կ'ենք՝ կը հրա-պարէ զինք, ու որ մը կը մանէ ներս անվերա-դարձ կերպով դարձաւային կղզիները երթալու տոմարի մը քննուէր...

«Ամենօր ինքնները» ողբերգութիւնն է տա-րադիր առաւ կնոջ մը, որ չկրնար վարժուիլ իր Նոր միջնակարգին՝ Ամերիկային, կ'ուզէ փեթեր-պուրի վերադառնալ: Հայրենի հող, անցեալի զէմբեր կը յաճախեն հոգին ու կը դժբախտացը-նեն իրեն, ու իր կողքին՝ իր ամուսինը, որ խը-ման մըն է: Հայրենադարձութեան ցաւն ի վեր-ջոյ կը մտնի կիներ, եւ ողբերգութեան վերջին արարին վկան ու հանդիսատեսը կ'ըլլայ նոյն-պէս հայրենի արտոսով ազդող հայ մը...

Վրիւտ անգլից միջին աստիճանի անհոգի հոգի, հայրենի հոգի՝ անհանգիստ ու ապերժանիկ հոգի մը, հայ հոգի մը, կը հակադրուի՝ օտար ափերու վրայ հոգեկան հայրենիք ստեղծած, օ-րերը զիմանալիս, պայքարելու վճռականութեամբ ստորադրուած ուրիշ հայ հոգի մը...

«Այստեղից միջին աստիճանի անհոգի» իր-Անհոգի մէջ պատյաի մը օրադրութիւնն է պրոպիէ արտաշարհի եւ ներաշարհի փոխա-զարձ անհոգիականութեամբ, շրջապատի նկարա-դրութեանց եւ մասնաւոր գեղարուեստով՝ կեանքի եւ մահուան զեղեցկութիւնները խորատուապէս ի-մաստատրական, բանաստեղծական, այլ նաեւ՝ տեղեկագրական իրադատակէ չէլ մը:

Վիլլա իգլապաւիճ՝ տունէն քաղաքին (Նիւ-Յորք) զիշերով մը հետադուր, այլ քաղաքի մը մէջ մեծութիւնը (հոգեկան) փարտաւել փորձող հայ երիտասարդի մը պատմութիւնն է, որ պանդոկի մը մէջ կը հանգիտի օտար, հանրամասնաց կնոջ մը (պատմութիւնի գերակ), բայց փոխադարձաբա-րեւիտները չեն յանդիմարում, երկուքն ալ ունե-

նարով թէ՛ սիրել-սիրուելու եւ թէ ստեղծատե-լու գիրար չէզոքացնող հակադրեցութիւնները: Եւ դարձեալ մեր երիտասարդը կը մնայ անմխի-թար...

Վերջին կայքաբանը Հայ տղնիկ մըն է, Նիւ-Յորք Ժնաւ, որ բոսն է Երեւանի, Հայաստանի, Մատիսի մտին: Իր տարեկից սեւամորթ աղուն հետ՝ կ'որոշեն, որ մը, շողեկապը առնել եւ եր-թալ Երեւան: Սեւամորթ տղնիկը, որուն հայրը շողեկապի կայարանի տոմարականն է՝ կը բե-րէ տոմարը: Կը քալէ լողեկապը: Երջանիկ են տղաքը: Կը հասնին վերջին կայանը, Ամէն մարդ կ'իջնէ, իրենք կը մնան: Ձեն հասած Երեւան... Քննիչը խորամանկութեամբ վար կ'իջնեն զի-րենք, կ'իմանայ հասցէները, կը հեռաձայնէ ա-նոց նոտղներուն, որոնք տակնուվրայ եղած են արդէն:

Ճերմկէն ծինք պապ ու թոռնիկի փոխադարձ սիրոյ վկայութիւնը, պապը կը խոստանայ հա-ղանդին հրեշտէ մի մը առաւ թոռնիկին, որ կ'ապ-րի այդ երազով: Կազանդին՝ պապը կը մնայ մեծուսնայն. ուրիշ բերէ հրեշտէ մին. ու կը շե-նէ հեթաթը, — պիտի դայ այդ մին օր մը եւ հայ մանուկները տանի Հայաստան: Թոռնիկին ե-րեւանայութեան առիթով կը բերէ այս հեթա-թը: Եւ անուղղակի պատճառ կ'ըլլայ հրեշտէ միին իր մէջ կուտակուած կորովը, որ զգեստէ իր խաղակիցներուն անոյեանը եւ աշուհեանի-նք կը դառնայ խուճրի զեկամարը:

Ենկճ՝ Իրաքում լեւ լաւին Գարեջրատուն, գիշեր, դաշնակի նուազ, պար, Երեւան: Տաճ մթնոլորտ: Այս շրջագիծն է՝ ինքնամփոփ, հանգարտ շարժումներով հայ երիտասարդ մը, որ կը համարի սպասարկող սիրուն աղջկան, որ բարեկամն է զարեւմտան տիրոջ: Բայց այդ ք-լորը չեն լինեն հոգւոյն պարսպը: Սիրտը իր հայրենի լեռները կը քննուէ, դանդաղ կ'երազէ՝ անհասկնալի մնալով իր լուրջիններուն:

Վերնադարձային քայլանքը կը պատմէ եր-կու աւանդներու մասին. հայը բռնկութիւն կ'ուսանի, ամերիկացին՝ նկարչութիւն: Միասին կ'ապրին նոյն անհանգիստ մէջ: Իսկապէս մըն է ամերիկացին՝ սիրոյ եւ արուեստի իր շարժումներն մէջ, կը ձգտի գեղեցկագոյն կնոջ, որ կը մնայ միշտ երազ եւ կատարեալ հկարին, որ կը մնայ միշտ անիրագոյնացելի: Կը պատմէ, կը զուգի իր նկարածները: Յետադարձ անանդութեան՝ հայ

բժիշկը օր մը կը հանդիպէ Նկարիչ իր բարեկամին, որ գտած ըլլալ կը թուի իր երջանկութեանը, իրադարձած՝ իր Վերեսադարձային թռչունն զլուր-գործոց Նկարը: Կարելի է երեսանայել բժիշկին յուսախաբութիւնը, երբ կը Ծածոթանայ Նկարիչին իսկալ կին զաւանած էակին, որ Զեր ու անհրապօր՝ Փիգիթական Ծաղրակալ մըն է միայն...

Վնցիլունն՝ զերեզմանի հոգ Ժախող ընկերութեան մը ցրտալուծել եւ սեւագգնատ մէկ անգամն է, որ կը ներկայանայ մինչ այդ երջանիկ ապրող ու ազագայի վարդապետն երազներ հիւսող հայ բնասնիքի մը: Իր հետ՝ մահուան լուծւել կը մտնէ այդ կենտրոնի յարկին տակ ու կը մղի մղվաւանի մը ապրիլ ընտանիքին հայրը՝ մահուան զաղափարէն: Հետզհետէ կը Ծուլանայ իր աշխատանքին մէջ, կը դառնայ լուսկիաց ու կախիբես, մինչեւ այն օրը, երբ արկածի մը զոհ է՝ Կիթայայ վնցիլուն, իրեն հետ ընդմիջում հետացընելով մահուան ներկայութիւնը երբեմնի երջանիկ հայ տունէն, որ կը վերադառնէ իր հին ու Կեդեմ ցիւղ օրերը:

ՎԻ Վարդ եւ երկու շիրիմն, հայ երիտասարդ մըն է զարմեան, որ իր սիրած օտար աղջկան հետ այցելութեան կ'երթայ Ծոն Ֆենետիկ շէրիմին: Բայց իր մէջ յանձնանք մըն է, երկրորդ բնութիւն մը՝ Ձարենցի քանաստեղծութիւնն ու անխտանալի մահը, եւ Ամերիկայի նախագահին շէրիմին վրայ հակած՝ կ'երեսակայէ ու կ'ապրի Ձարենցի մահուան օրերու հայաստանի վարչակարգային ողբերգութիւնները: Ձարենցը գերզգայուն զարմուցած է Վահէն՝ հայ երիտասարդը, որ իր հայութիւնը կ'ապրի Ձարենցի կեանքին ու գործին ընդմէջէն, ինչ որ կը վհասեցնէ ամբողջական սէր ակեկալող օտարունակին, որ անբուհիլի հոգեկան հիւանդ մը նկատելով հայ երիտասարդը՝ կը հետանայ անկէ:

Այսքանը՝ չոր ու ցամաք բովանդակութիւնն է զերեքին, կ'որիդը՝ իւրաքանչիւր նորալէզուի, Բայց ամէն մէկ պրուածք, հիմնական այս տիպարներուն շուրջ՝ որքան հարուստ է քաղմաթիւ այլ Կէմբերով, որոնց երկուրդի գեր մը չէ Վիքսապահուած միայն, այլ թաւալող կեանքը պատկերացնելու եւ հեղինակին զաղափարները, աշխարհի մարտնչութիւնը արտայայտելու արժանիք

մը: Թըփօրթաժային, շարժանկարային մասը զբուռնեցնելու ակնարկ բնութիւնը չի բերել, այլ կենդանի Հիւսկիներու վերածուելով՝ իւրաքանչիւր պրուածք կը դառնայ շերտ մը կեանքէն: Թ. Կարապետն չի սիրել անապարհը, բայց չի ծանրացներ երբեք: Ամերիկեան քաղաքներու վարպետ նկարագրութիւնները տարալիարհիկ հետաքրքրականութիւնն ու շուրջ կ'ապահովեն իր պրակտիկութեան: Երբեմն կառուցման հանգրայնեքու դիւրին լուծումը կամ չափազանցուած դիմելը եթէ զօրութիւն կը համոզեն ընթացողը՝ այսուհանդերձ, ընդհանուր առմամբ՝ մթնոլորտը կը մնայ բնական եւ պրոծող անմիջեւ՝ հորազատութիւն: Նուաւ, շուրջ 20 տարեան ժամանակամիջոցի մը վաստակէն ընտրուած այս նորալէզուները հասարակարգային յեն արժանազներ: Բայց կու տան մեզի մէկէ աւելի միայն արժեքով պրուածքներ: Վիքիմի կոյարմանը կամ Կարմիր շրջագրեւորով կիցնէ մաս կը կազմեն Միտիւքի մեր լուսագրին գրականութեան: Վնցիլունն տիպարը նորութիւնն է եւ չնեք կրնար մոռնալ դան: Իսկ Վերիդիմ Երեւանի մէջ արժանաբար Միտիւք-Հայրենիք մտայնութիւններու քախուժը, արտաերկրի կարող հայրենի եւ հոն շարեւորուն, չկարենալ ապրելուն տաղանգը, այլ հորալէզուութիւնը արժեքաւորող Նոյն թեմայի զարգացումով՝ կը վկայէ հոգեկանութիւնը, որ արտաերկրի երիտասարդ սերունդներուն մէկ խումբ անկէ է մինչեւ այսօր: Աղջային այս հոգեկանութեանն ալ կը Զիտ հաւանաբար համարուկալին այն հոգեմիջանկը, որ այս զբոյն երկրորդ տունցն է, — մարդիկ կ'ապրին քաղմութիւններով, բայց մինակ կը զգան իրենք զիրենք, զանձանթ հոգեկանն են իրարու, ու հակառակ իրենց զբաղումներուն, քաղաքէ քաղաք թափառումներուն՝ կ'ապրին անյայտ ու անհետանկար կեանք մը:

Իր խորքով թէ մեւով (պատմելու շնորհ, վարպետ վրձին, տիպարներ սեւեռելու որոշ թեքնիք, հաճելի ոճ ու լեզու) այս գիրքը արժանի է լայնածաւալ ընթերցանութեան եւ զբաղանքի համար: Իսկ հեղինակը, առաջին այս վաստակով իսկ, կը հանդիսանայ ամերիկահայ արժանի նոր դրօշակակիրներէն մէկը: Հուսալով կը սպասենք արդէն պատրաստ իր յաջորդ գործերու հրատարակութեան:

Յ. ԳԵՂԱՐՅԱՆ

«ԲԱԳԻՆ»Ի 1970-Ի ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Հեղինակ

Խմբագիր

Թիտ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Ժ. ՅԱԿՈԲԵԱՆ	Մեր մայրերը	1
Յ. ԳԵՂԱՐԻ	Ասորեսյէն անդին	1
» »	Օրումն երգը	4
» »	Կարօտ	4
» »	Սէրս ու հոգիս	4
» »	Որոնում	5
» »	Անմեղութիւն	5
» »	Մարդու սիրտը	9
» »	Հին օրերու կարօտ	9
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Գտնախառն	1
» »	Սոնետ	5
» »	Վեցիւսի հետ	7
» »	Սիրոյս պայծառ լուսնկան	10
» »	Տաղ առ երկիր	11
ԱՐՄԷՆ ՍԵՒԱՆ	Անկարելի	2
» »	Խորհուրդ խորին	2
Ի. ԳԱԹՕՆԷ	Իմաստութիւն	2
» »	Հիմա	2
» »	Հողմ իմ անիւնի	3
» »	Ազնուութիւն	4
» »	Սեմփոնիա	5
» »	Յանդուրիւնը աշխարհի	6
» »	Երէկ դեռ	8
» »	Հայոց գանձեր	9
» »	Աւերակներ	9
» »	Nat King Cole	11-12
Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ	Ամէնօրեայ պատմութիւն	2
» »	Ֆիլիստին-Մատանա	2
» »	Տառապանք	3
» »	Խաւար	8
» »	Մերկ ազօթ	8
» »	Խորոյնը	8
» »	Պարզ...	8
Մ. ԹԱԻՐԻՋԵԱՆ	Զարեհապատում	2
Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ	Քառնակներ	3

Հեղինակ	Խորագիր	Թիի
ՅՈՎՀ. ՇԻՐԱԶ	Համաշխարհային վիշտը	3
ԱՐՇԻ	Վերջիշնամի օր	4
Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Անցացած կիրք	5
» »	Ցուպը	6
ԱՐՄԱՆՏ	Անկողմում հետ	6
» »	Եկել եմ ես	8
» »	Նոր հասարակարգ	8
» »	Պահել է շունչը	8
» »	Խնկարիւնը քրեի	8
» »	Մովը քարճաքել է	8
Գ. ԳԵՂԱԿ	Քաղաքի փոխառած դարձն հետ	6
Գ. ԲՈՐԵԱՆ	Այս փառքը անխօս	9
» »	Բայց ոչ, կայ մեկը	9
Ա. ԳԱՌՕՆԷ	Օրերի փառք	7
» »	Փոքորկում ծովում	7
» »	Էլ ուշ է հիմա	7
» »	Այս գիշեր ճարից	7
» »	Ով իմ քարեկամ	7
ՇԱՀՊԱՆ	Մայքերը	7
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Նոր առաւում	9
» »	Անշրջանակ	11-12
ԱԼԷՆ ԿԻՆՁՊԵՐԿ	«Մեծ շուկայ մը Քաղաքումիս մէջ»	9
Գ. ՎԱՀԱՆ	Փոքորկում ու մեծը	10
» »	Ջահերը	10
Է. ՍԱՐԱՃԵԱՆ	Ջիսիս	10
» »	Ինչու	10
Պ. ՍԵՒԱԿ	Դատակէսի հիմնը	11-12

Ա Ր Զ Ա Կ

Ս. ՍԱՆԻՆԵԱՆ	Գեղեցիկը Զօրքը խմբադարձում	1
» »	» » »	2
» »	» » »	3
» »	» » »	4
» »	» » »	5
» »	Սէրը ցանկապատի տակ	10
» »	» » »	11-12
Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Ջրայցներ՝ հայրիկի մը ու մանչուկի մը	
» »	» » »	1
» »	Նրումնդ Օտեմանականներ	2
» »	Մայրեմի	5
» »	Արաւ Բազմատունի	11-12

Հեղինակ	Խմբագիր	Թիի
Ն. ԶԱՐԽԱՆԻՍԵԱՆ	Մանուկան կամուրջը	1
» »	» »	2
» »	» »	4
» »	» »	5
» »	» »	6
» »	» »	7
» »	» »	9
Ա. ԱՐԾՐՈՒՆԻ	Ցուլիկն ճիշդ	1
» »	Ազատը ճամբաս	3
» »	Երևան... Փրօպլետա	9
Յ. ԿԱՐԱՊԵՆՑ	Դպեակը	2
» »	Արգար Ամու օտար հարսը	6
» »	Անտառում	9
Ա. ՀԱՅԿԱԶ	Թրաշուշաններ	2
» »	Երբ ձմեռ գայ	4
» »	Մատամ փոփառուր	8
Ա. ԱՐՓԻՆԵ	Ուրուանկար	3
Ս. ՍԱՐԳՍԻՍԵԱՆ	Մտքի աղտաղբում	3
» »	Դամբանական «Փարոս» երգիծաբերքի	5
» »	Այն խելօք, պատիկ աղջիկը	8
Ն. ՎԻՐԱՊԵԱՆ	Շունն մեռաւ	3
» »	Կըրլ փրէնտ	7
ՇԱՀԱՆՈՒՆԻՍ	Նոր կօշիկներով	3
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	... Եւ շատ ընթացիկ, գրեթէ ամէնօրեայ պատմութիւն	3
Բ. ԿՈՒՆԵԱՆ	Դեռ դարեր, դարեր անսահման	4
» »	Կը վախճամ, որ օր մը	4
Յ. ՓԱՓԱԶԵԱՆ	Կարմիր լոյսը	5
» »	Երկրագունդը եւ պարապ նամակատուփը	7
Ս. ՓԱՆՈՍԵԱՆ	Վարժ Կամիտաս Կուտիեացիի	6
» »	» » »	7
» »	» » »	8
» »	» » »	9
» »	» » »	10
» »	» » »	11-12
Կ. ՄԵՀԵԱՆ	Լ'Ալմէնիէն	6
Ա. ՍԵՒԱՆ	Վերադար ազանին	7
Վ. ԶԱՆՈՅԵԱՆ	Տարագիրը	10
Ն. ՊԱՐԹԵՆԵԱՆ	Հոգեհանգիստ	11-12
ԺԱՊ ԲԵՐՈՒԱՔ	Համբուն վրայ	9

Հեղինակ

Խմբագիր

Թիի

ԻՄԱՑԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Մ. ԹԵՕԼԵՕԼԵԱՆ	Ամառ գրահ	1
» »	Երիցս օրհնեալ	11-12
ՀՐԱՆԴ ԿԱՐԳԱՐԵԱՆ	«Համագգային»ի բեմադրութեան առթիւ	1
Ա. ՔԵՇԻՇԵԱՆ	«Գասպար Իփէկեան» քատերախումբի ներկայացումները	1
Ն. ԹԻՐԵԱՔԵԱՆ	«Գասպար Իփէկեան» քատերախումբը	1
Վ. ՓԱՓԱՋԵԱՆ	Սամուէլ Պէճեքի ամբողջական քատրոնը	1
Ս. ԿԻՐԱՅԵԱՆ	«Սարերու Ասլանը»	1
Ա. ՏՕՆՈՅԵԱՆ	«Ռաֆֆի տարեգիրք»ը	1
» »	Պեռնար Շօ	2
» »	Նորարարութեան ալիքը	
» »	հայ քանադեղութեան մէջ	8
» »	Գուրգէն Բարեան	9
Յ. ԳԵՂԱՐԴ	Տաղանդի մասին	2
» »	«Անծանօթ» հագիներ»	11-12
Պ. Ս.	«Գիշերուամ ամբարդը»	1
Կ. ՍԱՍՈՒՆԻ	Ե. Զարեմցի «Երկիր Նայիրի»ն	2
Տ. ՈՍԿՈՒՆԻ	Հայաստանի արուեստը	2
» »	«Աստուած կը վերադառնայ»	4
Վ. ԳԱԻԹԵԱՆ	Բաց նամակ Շահան Շահնուրին	2
» »	«Նամակ խմբագրութեանը»	5
Փ. ՊՈՒՐԺՈՒԱՏ	Պաշտպանողական հառ՝ ամբողջական գրականութեան մը ի խնդիր	3
Բ. ԵՂԱՅԵԱՆ	Աշուղ-արքայ Սայաթ-Նովա	3
» »	» » » »	4
» »	» » » »	5
Լ. ՄԿՐՏՁԵԱՆ	Ընթացիկ քանակներ ազգային հարցերի շուրջ	3
» »	» » » »	4
» »	» » » »	5
» »	» » » »	6
» »	Հանրամասն մեղադրութեան առարկան հրատարակութիւնը	7
» »	» » » »	11-12
Ն. ՊԵՇԵՆԵԱՆ	Թատերական դէմքեր	4
Շ. ՇԱՀՆՈՒՐ	Ազատն Կոմիտաս	5
ՄԱՐԹԻՆ ԷՍԼԻ	Արթիւր Աղամով – Բուժելին և անբուժելին	6
» »	» » » »	7
» »	» » » »	8
» »	Էօթէն Իսմայիլ – Թատրոն և հակաթատրոն	10
» »	» » » »	11-12

Հեղինակ	Խորհուրդ	Թիի
Պ. Սեփակ	Սայաթ-Նովայի ատեղծագործությունը	6
Յ. ՕՇԱԿԱՆ	Երբ հիները կը կարդանք	6
ԵՒ. ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ	Սայաթ-Նովա	6
Մ. ՍԼԻՄ	Պաշտպանողական ճառ	7
Ա. ԳԱՌՕՆԷ	Արմանտի բանաստեղծությունը	8
Է. ԻՈՆԵՄԲՕ	Զեյնալովաֆիա՞ն, Երոսայի միակ երկի- րը, որ արժանի է իր անկախության	8
Փ. ՔԻՐԻԱՆ	Ժողովրդաբանական պարբեր	9
Մ. ԱԼԻՆ	Վե՛ս հրեշտակ եւ կէս-այլք	9
Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ	Տարածուած Մարիաֆ - հոգիներու վերաբայ	9
Ա. ԱՐԾՐՈՒՆԻ	Թատրոնը ինքնակերտումի նոր ճիգի մէջ	10
» »	Վարձա՞յ կատար, վարպետ	11-12
Ժ. ՆԻՎԱ	Ալեքսանդր Սոլժենիցին	10
Ժ. ՄԻՐՈՒՄԵԱՆ	Բացառիկ գործը	11-12
ՇԱՀԱՆԻՈՒԽՏ	Պատկանելի հատոր մը	11-12
Ն. ԽՈՇԱՅԵԱՆ	Փառքի տաճարը	11-12
Վ. ԳԵՈՐԳԵԱՆ	Կենդանի պատմությունը	11-12
Ղ. ԺԻՐԱՅԻ	Վերադարձ գործը	11-12
ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՄ. ՍԱՐԳԻՍԵԱՆ	«Խաղաղական կամ Պաշտպան հայոց պատմության մէջ»	11-12

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ

Գրքին, շնչառքին, եկան	1
«Ուսուցիչի դարձնելու համար»	2
Բաց մասնակի մը առիթով	2
Գրական վեճեր	3
«Աստուած կը վերադառնայ»	4
Ն. Պէշիկպաշլեանի մասին	4
Այս երկու բանաստեղծությունները	4
Շահնուր-Գաւառի վեճին վերջին փուլը	5
Գայլը գառան մորթով	5
Արթուր Աղամով	6
Պ. Սեփակի «Սայաթ-Նովան»	6
«Ազգակ»-ի եւ «Զարթոնք»-ի դատը	6
«Վեճիկ» մասին	7
Փրակայի գարնան երկրորդ տարեկիցը	8
Հիփփիներուն որոնումը	9
Խոսք՝ յարգանքի	9
Նոր գեղեցկություններու ծաղաղ	10

<u>ԽՈՐԱԳԻՐ</u>	<u>ԹԻԻ</u>
Սուլժենիցին՝ Նապեղիսմ մրցանակաւոր	10
Այժմեական հարցերէն մէկը	10
Գուրգէն հրանճեան	10
Նաբեկացիի վերանաւազայրումը	11-12

ՆՇՄԱՐՆԵՐ

«Մեծ», «մեծատաղանդ», հւայն	1
Գժրախտ սերունդ	1
Կը սպասենք	1
Սուլժենիցինի պարագան	2
«Զոսթաֆովիչի ամօքը»	2
Լոյս եւ ստուեր	7
Գեղեցիկ քիւրիմացութիւն մը	7

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՆԵՐ

<u>ՀԵՂԻՆԱԿ</u>	<u>ԽՈՐԱԳԻՐ</u>	<u>ԹԻԻ</u>
Բ. Փ.	Լ. Շանթի «Կայսր»ին բեմադրութիւնը	1
» »	«Ոսկի ափաղաք»ի ներկայացումները	3
» »	«Խաչակեան յարգէ գլխարկը»	3



ՆՈՐ ՏԱՐԻԷՆ ԱՌԱՋ ՀՐԱՊԱՐԱԿ ԿԵԼԼԷ

ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆ

ԿՈՐՍՏԱԿԱՆ ԹՈՅՆԵՐ

(Արձակ էջեր)

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

«ՖԱՈՒՍԹ», Բարգմ. Կարապետ Գ. Իսկուպէյեան, Պէյրութ, 1970

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՄՏՔԵՐ, Քր. Միքայէլեան, Էրատ. Հ. Յ. Դաշ-
նակցութեան Զատարեան Ուսումնոգական Միութեան, Պէյրութ,
1970

Դաշնակցութեան Տօմեակին առիթով, «ԲԱԳԻՆ»ի Ժ. տար-
ւան առաջին քիւլ (թումար) ամբողջութեամբ նուիրուած պիտի
ըլլայ Դաշնակցութեան մշակութային գործունէութեան:

Մեր ներկայ քիւլին մէջ անաւարտ մնացած գրութիւնները
պիտի շարունակուին յառաջիկայ Փետրուարի համարին մէջ:

ՏԳ. ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

ՏԱՐԵԿԱՆ ՔԱՐՏԵՐԵՐԻՆ

ԼԻՐԱՆԱՆ	22 Լ. ՈՍՅԻ
ԱՐՏԱՍՈՒՆԻՐԱՆ	8 ՏՈՒՍԻ
ՀԱՏԱՎԱՏԱՌ	2 Լ. ՈՍՅԻ



Վարչութեան հասցէն—

G. SASSOUNI

Rue Sélim Boustani,
Beyrouth - Liban